

18849

Ժողովրդի

գրքերի ցանկ

891.99

Կ-22

Կենտրոնի


1910



ԳՕԿՏՕՐ Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ-ԻԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

ԳՐԱՄԱ ՁՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ



214

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1910

891.99  
Ժ-22

891. 99

Վ - 22 4

Դ Օ Վ Տ Օ Ր Կ . Ց . Փ Ա Շ Ա Ց Ե Ա Ն - Ի Ա Ն

# ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

ԴՐԱՄԱ ՁՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ



2003



Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1910

7361

4357

**ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ**

**ԽԱԶՕ.** — 55 տարեկան, գիւղացի հողատէր, սպիտակախառն մազեր և կարճ կտր մօրուք, մեղմամախձոտ և ինքնահաւան:

**ՄԱՐՕ.** — Նրա աղջիկը, 16 տարեկան, գեղեցիկ, առողջակազմ և ճկուն:

**ՊԵՏՕ.** — 50 տարեկան, գիւղացի հողատէր, սև մազեր, աշխոյժ և զւարթ:

**ՆԱԶԼՈՒ.** — Նրա կինը, 40 տարեկան, վաղահաս ծերութեան նշաններ, տխրադէմ և սկեպտիկ:

**ԱՍԼԱՆ.** — Վերեկներէ որդին, 21 տարեկան, բարձրահասակ, առոյգ կազմ, ժիր, սև մազեր և դեռաբոյս պէխեր:

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՖԷՆԳԻ.** — Փաստաբան, 30 տարեկան, երկայնահասակ, սև մազեր, սրածայր մօրուք և նուրբ պէխեր, կամքի և կորովի տէր, յեղափոխական գործիչ:

**ԲԺ. ՎԱՆԵԱՆ.** — Բժիշկ, 35 տարեկան, անմօրուս, սև մազեր և պէխ, նիհարակազմ, լուրջ հասարակական գործիչ:

**ՆՇԱՆ ՊԱՏԻԵԼԻ.** — Գիւղական ուսուցիչ, 25 տարեկան, նիհարակազմ, նրբաթեւ պէխեր և նորաբոյս մօրուք:

**ԱՍՈՍ ԽԱԹՈՒՆ.** — 60 տարեկան, գիւղացի պառաւ կին, զւարթ և միամիտ, ժիր:

**ԳԱՍՊԱՐ ԱՄԻ.** — 70 տարեկան, կորաքամակ աւերոր մի ծերունի, դէմքին վրայ կնճիւններ, պարզամիտ, կորովի տէր:

**ԱԼԻ ԷՖԷՆԳԻ.** — 40 տարեկան, գաւառին հարցաքննիչ դատաւորը (միւսդանտը), սև մազ, պէխ և կտր մօրուք, լուրջ, խիստ և խրոխտ դէմք, գէր և ծանրաշարժ:

**ՕՍՄԱՆ ԷՖԷՆԳԻ.** — 25 տարեկան, վերոյիշեալի քարաւորը, անմօրուս, նրբաթեւ պէխ և սև մազեր:

**ՄԻԻԳԻՐ ԳԷՈՐԳ.** — 50 տարեկան, գիրուկ, սպիտակախառն մազեր և պէխ, անմօրուս, անհամակիր դէմք, քծնող բնաւորութիւն:

Մի հայ քահանայ, հայ գիւղացիներ, հայ դուկներ, ջաբթիւաներ...:

**ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐԻ ՀԱԳՈՒՍՏԸ**


**ԽԱԶՕ.** — Գլխին հին արախչին, նրա վրայից կազմա կապած, հազին կարճ արա, տակից սպիտակ շապիկ և միմեանց վրայ կոճկուղ բաճկոնակ, վերի մասը լայն և ներքեի մասը նեղ

**Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն**

Գործողութիւնը կատարուում է մեր օրերում, Տաճկահայաստանի Բարու գաւառի մի գիւղում:



6883



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՍԵՆՆԵՐԻ ՀԱԳՈՒՍՏԸ

1910

տարատ (փոթոր), մէջքին կարմիր դօտի, ստին զունաւոր դուրպայ և մուճակ (եւմէնի):

**ՄԱՐՕ.** — Մաղերը հիւսած երկար գիտակներով, որոնց ծայրերից կախուած են փոքր արծաթ գրամներ, երեսը բաց է, գլխին ունի միայն մետաքսէ արտաշին, որի շուրջը սակեշար է: Հազած է մինչև ոտքը երկարող բաց գոյնի էնթարի, որի կրծքի բաց մնացած մասից երևում է սպիտակ չապիկը, էնթարու վրայից կարծրը բաց կարմիր կարճ աքա, մինչև ոտքերը երկարող վարդագոյն զոզնոց, որի վրայից կապած է արծաթապատ կամար:

Երբորդ գործողութեան մէջ քրգուհու, իսկ վերջին գործողութեան 10րդ. տեսարանից սկսած ազամարզու շորերով:

**ՊԵՏՕ.** — Հազած է խաչօյի նման, վերջին գործողութեան մէջ հայդուկային հագուստով, ինչպէս լաղերինն է:

**ՆԱԶՂՈՒ.** — Հազած է Մարօյի նման, միայն էնթարին մթադոյն, չապիկը կապտագոյն, զոզնոցը կարմիր է, մէջքին կապած է շալ դօտի: Գլուխը կապած է մթագոյն եազմա, որը արտաշինի վրայից անցնելով ծածկուած է ծոծրակը, այնպէս, որ միայն ճակատի մի մասը, աչքերը, քիթնուրերանն են երևում, ստին ձեռագործ գալղայ և սև հողաթափ:

**ԱՍԼԱՆ.** — Հազած է խաչօյի նման, միայն տարբեր գոյներով, դօտին գոյնըդոյն մետաքսից է, արտաշինի վրայ կապած է ըաղղատի:

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՖԷՆԳԻ.** — Եւրոպական մարուր հագուստ, սունոնց ոտայն չապիկ, գլխին ֆէս: Վերջին գործողութեան մէջ հայդուկային հագուստով:

**ԲԺ. ՎԱՆԵԱՆ.** — Յով. Էֆէնտու նման հազած է, միայն մուլթ գոյնի, վերջին գործողութեան մէջ հայդուկային հագուստով:

**ՆՇԱՆ ՊԱՏԻԵԼԻ.** — Նոյնպէս Եւրոպական հագուստով և վերջին գործողութեան մէջ հայդուկային:

**ԱԱՌԱ ԽԱԹՈՒՆ.** — Հազած է Նազլուի նման, միայն աւելի հնամաշ և մուլթ գոյնի:

**ԳԱՍՊԱՐ ԱՄԻ.** — Հազած է խաչօյի նման, տարբեր գոյնով և հնամաշ, ձեռքին ունի ձեռնափայտ:

**ԱԼԻ ԷՖԷՆԳԻ.** — Եւրոպական հագուստ սև բէզէնկօտով, գլխին ֆէս, ստին փայլուն կօշիկներ և ձեռքին համրիչ:

**ՕՍՄԱՆ ԷՖԷՆԳԻ.** — Եւրոպական բաց գոյնի հագուստ, գլխին ֆէս:

**ՄԻՒԳԻՐ ԳԻՌԳ.** — Եւրոպական հագուստ երկայն վերարկուով, գլխին ֆէս:

**Մ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ն**

Տեղացիների հագուստը մշեցիների տարազին մօտ է, որի մէկ նմոյշը կարելի է տեսնել և գաղափար կազմել 1901 թիւ Գեղարևոշ մէջ (հարսանիք Տարօնի մէջ՝ պատկերը):

**ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ**

**ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ**

(Խաչօյի գիւղական տան հիւրասենեակը . ճակատից մուտքի դուռ, ձախ կողմից թոնրատուն տանող մի ուրիշ դուռ, աջ կողմի վրայ մի պատուհան: Գետնին փուած է հասարակ կապերտներ, կողքի դրան մօտ և պատուհանի տակ դէմ առ դէմ կապոյտ գոյնի եսև յաշակներ՝ երկայն բարձերով: Վարագոյրը բացելիս, Ալի Էֆէնդին պատուհանի մօտ գտնուած դոշակի վրայ ծալլապատիկ նստած է, առաջը դրած է պղնձէ կլոր մի սկաւառակ, մէջը հաց և մի պնակ կերակուրով: Ալի Էֆէնդի մի կողմից մատնէրով ուտում է, միւս կողմից խաչօյի հետ խօսակցում, որը մեղապարտի նման զլուխը խոնարհած և բարեւ բըռնած, Ալի Էֆէնդու դէմը՝ քիչ հեռու կանգնած է):

**ՏԵՍԱՐԱՆ Ա.**

**Ալի Էֆէնդի և Խաչօ**

ԱԼԻ ԷՖԷՆԳԻ. Համոզուում ես, որ եթէ իմ կամքը չը լինի, դատաւորը Պետոյին է տալու իրաւունքը (Պատառը բերան տանուլ և ծանուլ է):

ԽԱԶՕ. (Գրոշխ տարով) Այո՛ էֆէնդիս, շատ շնորհակալ եմ...:

ԱԼԻ ԷՖԷՆԳԻ. Դու շատ լաւ գիտես, որ իմ նախորդները քանի քանի անգամներ քեզ համար

աննպաստ տեղեկագիրներ են տւել (Պատարը թե-  
րան տակերով կոչ է տալիս, յետոյ յիգում է բը-  
րանատը և ցոցամատը):

ԽԱԶՕ. (Կողմից գրուի տարով) ձիշէ է էֆէնդիս...:

Ա.Լ. ԷՖէնդի. Դէ... քանի որ իմանում ես,  
որոշածս գումարը պատրաստի՛ր, տես, ի՛նչպէս  
այն շուն Պետոյին բանտ նստեցնել կտամ... (Կըշ-  
տակարով սեղանից քաշում է):

ԽԱԶՕ. (Խոնարհելով) Գլխիս վրայ էֆէնդիս  
(կողքի դռնով հեռանում է):

Ա.Լ. ԷՖէնդի. (Առանձին: Մի քանի սեզամներ  
զկտում է) Էօ... Էօ... Էօ... Խորսփոռոշրան...  
Էօ... իսղափորուլլահ...: Եթէ այս ապուշ հա-  
յերի միմեանց տուն քանդելը չը լինէր, մենք,  
պաշտօնեայներս անօթի պիտի սատկէինք... Էօ...  
(Չկտում է) իսղափորուլլահ...: Ութը ամիս է  
ռոճիկի երես չեմ տեսել... եթէ կաշառքը գո-  
յութիւն չունենար, ես ի՛նչով կարող էի ապրել...  
(Ճիծաղ) հը... օղով... (Չկտում է) իսղափորուլ-  
լահ...:

ԽԱԶՕ. (Կողքի դռնով ներս է մտնում, ձեռքին  
բռնած է լազան երբըրիս, ձախ թեշից կախ տաճ  
մի սրբիչ: Այի էֆեկերոս առաջ ծռնկ չոգերով, նրա  
ձեռքերին ջոշ է ածում):

Ա.Լ. ԷՖէնդի. (Մի կողմից ձեռքերն է բռնում,  
միւս կողմից խօսում) Ժամանակը ուշ է, երեկո-  
յեան հազիւ երկու ժամ է մնում, մինչեւ քաղաք  
գնալս արեւը մայր կը մտնի, շուտով ինձ ճանա-  
պարհ գցի՛ր...:

ԽԱԶՕ. Պատրաստ է էֆէնդիս:

Ա.Լ. ԷՖէնդի. (Չեռքերից յետոյ բռնում է թե-

1. Մեղայ Աստուած:

բանը, ցոցամատով ատամները շիտում ու մարրում,  
յետոյ պեխն ու մօրուսը բռնում: Մի քանի սեզամ  
սփով թերակը ջոշ տակում, որդրում և բքում է:  
Լապշիլը վերջանալով, ձեռքերը պարզում է Խաչոյին)  
Այս տարի ձեր գիւղի բերքը ի՛նչպէս է:

ԽԱԶՕ. (Սրբիչը մատուցանելով ոտի է կանգնում)  
Շատ լաւ է, էֆէնդիս:

Ա.Լ. ԷՖէնդի. (Չեռքերը, թերակը, պեխը և մօ-  
րուսը չորացնելով սրբիչը Խաչոյին է տալիս, նրա  
ձեռքերով տակով ու վրայով մօրուսն է շիտում և  
չտկում) Էլ համդիւլիլլահ...:

ԽԱԶՕ. (Սրբիչը ստնելով և յագան երբրիսը վեր-  
ցնելով կողքի դռնով գնում է):

Ա.Լ. ԷՖէնդի. (Առանձին: Խաչոյի յետեւից գրուի  
օրօրելով) Այս կեամբերների ամեն բանը մեզ հա-  
լալ է... Սրանց կթան կովի նման քամելու է...  
(Բարձի վրայ կողքի ընկնելով հանրիչն է քաշում):

ԽԱԶՕ. (Կողքի դռնով ներս մտնելով, մտնելում է  
Այի էֆեկերոս և գրուի տարով դրշակի վրայ դնում  
է ձեռքին բռնած բղբի փարսաքը, որի մեջ 10 ոսկի  
կայ): Իմ քիչը շատի տեղ դրէք, էֆէնդիս:

Ա.Լ. ԷՖէնդի. (Փարսաքը բաց է անում և ոսկի-  
ները հանրում) Մէկ, երկու... տասը... (Բարկու-  
թեանը ոսկիները դրշակի վրայ շարտելով) Շո՛ւն  
հայեր... ձեզ մարդկութիւն անել չարժէ... դուն  
ինձ հետ հանաք ես անում... հա՛... ես քեզ ցոյց  
կտամ թէ ո՞վ է Ա.Լ. Էֆէնդին: (Ոտի ելնելով բար-  
կացած՝ սենեակում ման է գալիս) Շո՛ւտ, գնա՛ ձայն  
տուր գարթիայիս, թող ձիս քաշէ: (Յանկարծ  
կանգնում և Խաչոյի վրայ մի խոժոռ սկեարկ օգում)  
Դո՛ւ էլ հետս քաղաք ես գալու, իմացար...:

1. Փանք քեզ Աստուած:

ԽԱԶՕ. (Ալի եֆեկորոս ոսիկն յխարսքալոյ) Աման էֆէնդիս, շնորհ արէք... ամբողջ գիւղը ման եկայ հազիւ տասը ոսկի ճարեցի: Այդ դատի համար ամեն բան ծախել եմ, ոչինչ ունիմ... գլուխս ո՞ր քարին տամ... գիտեմ, լայլը չէք այդ գումարին (Ալքերը լցում եմ):

Ա.Լ. Էֆէնդի. (Ոտովը խաչօյիկն հետացնելով) Այս պիտան, եզներդ ծախի՛ր...: (Մակ է գայիս):

ԽԱԶՕ. (Ոտի կակցելով, ցլիկոր) էֆէնդիս, արտերս ի՞նչով վարեմ: (Չեղքերով ալքերն է չոքացնում):

Ա.Լ. Էֆէնդի. (Բարկոռքեանք) Տղադ ու աղջիկդ լծի՛ր (Ոտը գետին զարնելով) Այս բոպէիս կամ հինգ ոսկին էլ կը բերես և կամ բանտ կը նըստիս... իմացա՞ր...:

ԽԱԶՕ. Էֆէնդիս մի՛ բարկանաք, մի քանի օրից յետոյ կը ճարեմ կը բերեմ...:

Ա.Լ. Էֆէնդի. (Բիւլ կակրելով) Չէ՛ կարելի... բոլոր գիւղացիներդ էլ խարբբաներ էք, գործերնիդ վերջանալուց յետոյ խոստումնիդ մոռանում էք...: (Մակ է գայիս):

ԽԱԶՕ. (Պարտադրիկ) Վկայ է Աստուած, սուտ չեմ խօսում, այդ տասը ոսկին էլ ճարելու համար տասը դուռ ման եմ եկել... գիւղ տեղ է, էֆէնդիս, չի ճարում...:

Ա.Լ. Էֆէնդի. (Բիւլ մտածելով) Լա՛ւ, քեզ երեք օր միջոց... եթէ հինգ ոսկին չը վճարես, ձեռիցս չես ազատելո՛ւ:

ԽԱԶՕ. (Դռնակի վրայ ցրիւ կկած ոսկիները հաշարելով Ալի եֆեկորոս ափիկն մէջն է դնում) հինգ ոսկու համար էֆէնդուս սիրտը չեմ կոտրիլ...:

Ա.Լ. Էֆէնդի. (Ափը խաչօյիկն պարզելով ոսկիները գրպանում է) Լա՛ւ... առայժմ մնաս բա-

րո՛վ... դու տե՛ս, Պետոյին ի՞նչպէս բանտում կը փթտեցնեմ, բայց մինչեւ հինգ ոսկիս չը բերես չեմ բանտարկելու նրան: (Հանրիչը ձեռքիկ կախ տռած մուտքի դռնով ծանրաբայր հետսնում է):

ԽԱԶՕ. (Տաճկական բարեւ՝ բեռնակնա՛ տարով Ալի եֆեկորոսն հետևում է) Շնորհակալ եմ, սուտը ձեռն է... նորից հրամեցէ՛ք... (Երկուսը միասին գնում եմ):

ՏԵՍՍՐԱՆ Բ.

Մարօ (Առանձին)

ՄԱՐՕ (Կողքի դռնով ներս մտնելով սկսում է դիտել ու դիտել ընկած փշրակները սխառառակի մէջ հաշարել: Յետոյ հանդիսականներիկն դառնալով) Այս խելք հայր... տասնեակ տարիներ առուի դատն է վարում և աշխատած փողը անկուշտ պաշտօնեայների զրպանն լցնում... նրանք էլ կթան կովի նման երկու կողմերին էլ քամում են...: Զորիները ծախեց, կարգը եզներին է գալու... եթէ այսպէս գնայ, արտերն էլ ձեռքից պիտի հանէ և մեզ մոխրի վրայ նստեցնէ... (հառաչում է) Ա՛խ... երկուսն էլ յամառ (Դրսում ոտնաձայն: Դեպի մուտքի դռն է դառնում, Նշան պատշէյիկ դրսն առաջ երևում է կոշիտում) Ո՛հ. — վարժապետն է գալի՛ս... (Սկսում է սեղանը հաշարել):

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

## Նոյն և Նշան Պատշէյի

ՆՇԱՆ. (Ներս մտնելով ժպտագին՝ գլխով բարև շուն է) Բարեւ օրիորդ, հայրդ ո՞րտեղ է :

ՄԱՐՕ. (Ուղղելով, անօրհաս) Ալի է՞Քէնդուն ճանապարհ գցելու գնաց...

ՆՇԱՆ. (Գրուխր օրօրելով) Գարձեալ այդ անիծւած պաշտօնեայնե՞րը... ի՞նչ յամառութիւն... միմեանց տուն քանդեցին և դեռ ձեռք չեն քաշում, հայրդ մի կողմից փճացաւ, Պետօն միւս կողմից. երկուսն էլ պարտքերի տակ հեծում են...

ՄԱՐՕ. (Քիչ հանարձակորչիւն առնելով) Խնդրում եմ, պատելի՛, հօրս համոզի՛ր, այդ դատից թող ձեռք քաշի, նոյնպէս Պետօյին, որովհետեւ երբ մին լոռում է, միւսն է սկսում, ամեն մէկը ուզում է վերջնական յաղթանակը ինքը տարած լինի՛...

ՆՇԱՆ. Ես էլ հենց դրա համար եմ եկել: Պոլսից մի հայ փաստաբան է եկել, ես նրան տեսայ, շատ ազնիւ և անշահախնդիր մարդ է, հօրդ և Պետօյին պիտի համոզեմ, որ առուի դատը նրան յանձնեն:

ՄԱՐՕ. (Աչքերը միշտ խոնարհած) Մեծ բարիք բարած կը լինիս, գիւղն էլ կը հանգստանայ և անհաւատները ոտները մեր տնից կը պակասեն... (Մեկուշի): Ո՛հ... Ասլանն էլ իմս կը լինի...

ՆՇԱՆ. Այդ իմ պարտքն է (Մեկուշի, յազում) Յարմար առիթն է, սիրտս նրան բաց անեմ (Մարօյին մօտենալով) Գիտե՛ս Մարօ, քեզ ասելիք ունիմ... քանի որ առանձին ենք ասեմ...

ՄԱՐՕ. (Միշտ անօրհաս, գրուխր խոնարհած շուն է մնում):

ՆՇԱՆ. Թէեւ ուսումս Պոլսում եմ առել և այնտեղ երկար տարիներ պարել, բայց ես աւելի ընտրել եմ գիւղում մնալ, այստեղ անելիք շատ գործ կայ, հօրդ նման անտաշ զուլխները պէտք է տաշել և միւս կողմից նոր սերունդ պատրաստել:

ՄԱՐՕ. (Աչքերը առանց բարձրացնելու) Աստուած վարձքդ կտայ:

ՆՇԱՆ. (Ուրախ) Աստուծոյ այդ պարգեւը դու պիտի լինիս, Մարօ... ես քեզ սիրում եմ...:

ՄԱՐՕ. (Շիկնում և աննուզօրէտ շարժումներ կատարում):

ՆՇԱՆ. Մարօ՛, մտիկ արա՛, ես այս գիւղից հեռանալու չեմ, մայրս էլ արդէն ծերացել է, ուզում եմ ամուսնանալ, այս գիւղում իմ սրտի մօտիկ քեզ եմ գտնում: Գիտեմ, դուն այնքան էլ ուսում չես առել, բայց ունիս լաւ ընդունակութիւն, կարճ միջոցում ես քեզ ամեն բան կը սովորեցնեմ և դուն այն ժամանակ կարող կը լինիս իմ ճշմարիտ ընկերը, օգնականը դառնալու, միասին կաշխատենք մեր այս խեղճ գիւղացիները վիճակը բարւոքելու, նրանց բարձրացնելու...

ՄԱՐՕ. (Չափազանց յազում է):

ՆՇԱՆ. (Շեշտակի Մարօյի երեսին կայելով) Մարօ՛, դու էլ ինձ նման համարձակ եղի՛ր, ասա՛ թէ ինձ սիրո՞ւմ ես, հաւան ե՞ս ինձ հետ ամուսնանալու:

ՄԱՐՕ. (Աչքերը արցունքոտում եւ, երկու ձեռքերով դեմքը ծածկելով ուզում է փախչել, դեպի կողքի դռն է առաջանում):

ՆՇԱՆ. (Քաղաքավարի երա առաջը փակելով) Մարօ՛... Ո՞ւր ես փախչում: Գիւղական ամօթխա-

ծուծիւնը յիմար բան է, մի՛ ամաչիր... , ցանկա-  
նում եմ քո կամքը իմանալ , տեսնում ես , որ  
գիւղի սովորութեան չեմ հետևում , առանց քո  
կամքը առնելու չեմ գնում հօրիցդ ձեռքդ ինդրե-  
լու , որը չի մերժելու . եթէ քո կամքը չը լինի ,  
ես այդ չեմ անելու... . ասա՛ , ցանկանում ես իմ  
ընկերը դառնալու... .

ՄԱՐՕ . (Նոյն դիրքում միշտ լռու է մնում) :

ՆՇԱՆ . (Առջի մտեկարով Մարոյիև , քերչուքեանը  
կրա՛ն անքերը դեմքից ցած է բերում և հետաքրքրու-  
թեանը աչքերը դիտում) ի՞նչ... . արտասու՞մ ես...  
... (անքերը բաց է բողբոջում և քիչ հեռանում) Ե-  
րբիսայ ե՞ս Մարո՛ : Քեզ նման հրեշտակներին չեմ  
ցանկանում վիշտ պատճառել (Կողքի դռնը ցոյց  
տալով) Ազատ ես , գնա՛ . . . բայց լաց մի՛ լինիր :

ՄԱՐՕ . (Այլևս չի վստիչում , միշտ շփեւած և ա-  
մօրիսած , անքերով արտասուքներն է սրբում) .

ՆՇԱՆ . (Յուզած) Հոգ չէ՛ , մի՛ պատասխանիր ,  
զուցէ յուզել ես , գնա՛ , սառն սրտով և լուրջ  
մտքով մտածիր , երբ մի օր միմեանց պատահե-  
լու լինենք , վերջնական պատասխանդ կտաս . . . :

ՄԱՐՕ . (Հացի սեղանը վերցնելով կողքի դռնով  
գնում է) :

## ՏԵՍԱՐԱՆ Դ .

Նշան Պատուկի (Առանձին)

ՆՇԱՆ . (Բեմի առաջ գալով հանդիսականներին)  
Ափսո՛ս չէ՞ այս հրեշտակներին... . այսպէս անխօս  
ու մո՛ենջ են կարողանում իրենց սիրտը բաց ա-  
նել և սիրածին գնալ . . . : Մտողները բռնում են

սրանց թեկը և տաւարի նման ծախում . . . . ո՛րպի-  
սի ստորացո՛ւմ (Քիչ լռու և մտախոն բեմի վրայ  
աչ ոչ ձախ մակ է գալիս , կանգնում է) Չէ՛ , պէտք  
է լեզու տալ սրանց , գիտութեան լուսով լուսաւո-  
րել սրանց խաւար զլուինները (Մտածում է) : Բայց  
այդ ապագայի գործ է , իսկ այժմ . . . , ո՛հ , ի՞նչ-  
պէս խօսեցնել նրան... . ի՞նչպէս իմանալ թէ հա-  
մակրում է՞ ինձ թէ ոչ... . Գիւղական այս նախա-  
պաշարեալ միջավայրում աղջկայ հետ խօսելն էլ  
մեղք է , ամօթ է... , ի՞նչ յիմարութիւն : Առիթից  
օգտուելով այսօր սիրտս իրեն բաց արեցի , թէև  
այստեղ գալուս նպատակը բոլորովին տարբեր էր :  
Բայց ի՞նչ արած... . դժւար էր ինձ , իմ ցանկա-  
ցած ժամանակ նրան տեսնել ու խօսել : Գիւղի ե-  
րիտասարդները իրենց համար միջոցներ են ըն-  
տրում , յարմարութիւններ են ստեղծում իրենց սրտի  
սիրածին սիրտ բաց անելու . այգիները , աղբիւր-  
ները , ուխտատեղիները նրանց ժամադրավայրերն  
են , բայց ես չեմ կարող նրանց նման վարել . . . :  
Չեմ էլ ուզում նրա կամքի վրայ բռնանալ . . . .  
զուցէ նա ինձ չէ համակրում , զուցէ մի ուրիշին  
է սիրո՞ւմ . . . , թէև գիւղում աղջկան սէրին ո՞վ է  
նշանակութիւն տալիս , ո՞վ է հարցնում թէ սի-  
րում է՞ կամ ոչ... . (Մտողի դրան առաջ ոտնա-  
ձայն , Նշան իր մեկնախօսարիւնով տարած , լի լուր)  
Սակայն ի՞նչ բանի վերագրել նրա արտասուքնե-  
րը... . անշուշտ նրանք անտեղի չէին... .

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Նոյն և խաչօ

ԽԱԶՕ. (Տխուր և մտազբաղ մուտքի դռնով ներս է մտնում և չէ նկատում Նշակին, չէ լսում նրան, ծակը ստաչսնում է) հինգ ոսկի . . . . . ո՞րտեղից ճարեմ . . . .

ՆՇԱՆ. (Առանց նկատելու և չտեսնելով խաչօյին, տաքացած շարունակում է) Մինչև որ նրա շրթունքներից այոն չը լսեմ, հորիցը չեմ խնդրելու . . . Այն այդ հայրը, երբ է խելքի գալու (Յանկարծ յանդի խաչօյի ոտսանայնը կտև է դառնում և նրան մտեկարով անարք սեղմում) Բարև խաչօ Ամի . . . :

ԽԱԶՕ. (Տխրադեմ) Աստուծոյ բարին Պատեւ լի, ի՞նչպէս ես, ի՞նչ կայ, խեղ է՞ այս ժամանակ գալդ . . .

ՆՇԱՆ. Խեղ է, եթէ դու ուզենաս . . . :

ԽԱԶՕ. (Քիչ ուրախ) Այ օրհնած լինիս, Պատեւ լի, նստի՛ր տեսնեմ, ի՞նչպէս ես, լաւ ե՞ս . . . (նստում է)

ՆՇԱՆ. (Խաչօյի դիմաց դռակի վրայ նստելով) Փառք Աստուծոյ, լաւ եմ . . . :

ԽԱԶՕ. Աստուած միշտ անխորժ պահէ . . . :

ՆՇԱՆ. Ո՞րտեղից ես գալիս խաչօ Ամի :

ԽԱԶՕ. Ալի է՞քէնդուն ճանապարհ դրի :

ՆՇԱՆ. Խաչօ Ամի՛, է՛լ ձեռք չես քաշելու այդ անիրաւներից, մինչև հիմայ ի՞նչ օգուտ տեսար . . . :

ԽԱԶՕ. (Գրգռած) Ես նրա հօրը գեռը պիտի ա՛նիծեմ, եթէ նրան մոխրի վրայ չի նստեցնեմ, բանտում չի փթտեցնեմ, ինձ էլ խաչօ չ՛ասեն . . . :

ՆՇԱՆ. Բայց միևնոյն ժամանակ դու էլ մոխրի վրայ ես նստում, ինչ որ դու նրան ես անում, նա էլ քեզ փոխարինում է, և այսպէս անվերջ :

ԽԱԶՕ. Թող այդպէս լինի, բայց ես նրան մի վերջին անգամ բանտ պիտի նստեցնեմ . . . (Թաշկակախով ձակտի քրտիկքն է սրբում) :

ՆՇԱՆ. Սակայն քո վիճակն էլ վիճակ չէ՛ . . .

ԽԱԶՕ. Ի՞նչ վիճակ է որ . . . (Մեկուսի) ճիշդ է ասում (գրոշխը շարժում) :

ՆՇԱՆ. Էլ սրանից վատ ի՞նչ վիճակ կը լինի . . . Ջորիներդ ծախել ես. ուզում ես կովերդ էլ ծախել . . . ահագին պարտքի տակ հեծում ես . . . է՛զոց էլ վաշխառուները արտերդ են գրաւելու . . . Դէ՛, ասա՞ տեսնեմ, ի՞նչ վիճակ է այս . . . (երկար յուռիւն) :

ԽԱԶՕ. (Հանդարտած, տխուր շէշտով) Իրաւունք ունիս . . . մոխս մարեցա՛ւ (աչքերը ցում են) :

ՆՇԱՆ. (Գո՞՞) Խելքդ զլիխդ հաւաքի՛ր, խա՛չօ Ամի, զաւակներդ հասնել են, դու նրանց մոտացել ես, նրանց ապագայի մասին բնա՛ւ չես մտածում . . . :

ԽԱԶՕ. Ի՞նչ անեմ որդիս . . . : (Աչքերն է սրբում) :

ՆՇԱՆ. Տէ՛ս, ի՞նչ եմ ասելու, լսե՛լ ես, որ քաղաք մի հայ փաստաբան է եկել . . . :

ԽԱԶՕ. Այո՛, լսել եմ :

ՆՇԱՆ. Լա՛ւ: Ես նրան պատմել եմ քո և Պետոյի մէջ եղած առուի դատը, նա ասաց, որ ի՞զո՞ւր տաճիկ պաշտօնեայնեքին կաշառքներ են տալիս, ես երկու կողմերին էլ զոհացնելով կը հաշտեցնեմ: Դէ՛, ի՞նչ ես ասում . . .

ԽԱԶՕ. (Քիչ մտածում է, մեկուսի) Չէ՛, թող մի քանի օր էլ բանտում մնայ . . . դրանից յետոյ եթէ ինքը ձեռք քաշի, ես էլ կը հաշտեմ . . . ի՞նչու ի

զուր կորչի իմ տւած կաշառքը (Նշակիկ) Մի քա-  
նի օրից յետոյ քեզ պատասխան կտամ...:

ՆՇԱՆ. Մտածելու ինչ բան կայ, որոշիր վեր-  
ջանայ:

ԽԱՉՈ. Լաւ, երկու օրից յետոյ փաստաբանին  
հրաւիրիր:

ՆՇԱՆ. (Ուրախ) Շատ ուրախ եմ, վերջապէս  
պրծէք այդ դարդ ու բալայից...:

ԽԱՉՈ. Սակայն պայմանաւ, որ է՛լ Պետօն դա-  
տարան չը պէտք է դիմէ...:

ՆՇԱՆ. Պարզ է, որ երբ փաստաբանը ձեր եր-  
կու կողմին էլ գոհացնէ, այլևս հարկ չը ֆար  
դատարան դիմելու, ձեզ հաշտեցնելու ենք, նրա-  
նից յետոյ եղբօր պէս ապրելու էք:

ԽԱՉՈ. (Մեկուսի) Ճիշդ է ասում, հաշտելուց  
յետոյ է՛լ դատս ո՞րն է, բայց տասը ոսկիս վրայ  
է գնալու... (Նշակիկ) շատ շնորհակալ եմ, ոտքդ  
խեր պիտի բերէ մեր տունը...:

ՆՇԱՆ. (Մեկուսի) Եթէ Մարօյի ձեռքը խնդրեմ  
չէ մերժելու, բայց ո՞չ, առանց նրա հաւանու-  
թեան այդ բանը չեմ անելու (Խաչօյիկ) Երկու օ-  
րից յետոյ փաստաբանին կը հաւիրեմ, ամեն բան  
կը վերջանայ:

ԽԱՉՈ. Գիւղում ինչ նորութիւններ կան:

ՆՇԱՆ. Դու խելքդ միտքդ այդ դատին տալով  
խկի ուշ չես դարձնում թէ ինչ է դառնում գիւ-  
ղում...: Երկու տարի է ամեն կիրակի օր լսա-  
բանում դասախօսում եմ, ես քեզ մի անգամ այն-  
տեղ չը տեսայ:

ԽԱՉՈ. Է՛հ, մենք ձերացել ենք, թող նորեկնե-  
րը բան սովորեն...:

ՆՇԱՆ. Ծերի ու երիտասարդի խնդիր չէ, բոլո-  
րի համար էլ հարկաւոր է, ես սովորեցնում եմ

այնպիսի բաներ, որ զիւղացուն անմիջական օգուտ  
տայ, օրինակ, նորագոյն մեքենաներով հերկել,  
հնձել, կամել, և այլն, տեսակ տեսակ պանիրներ  
պատրաստել, կենդանիներին լաւ խնամել և ազնւ-  
ւացնել, զինեգործութիւն, շերամապահութիւն, և  
այլն... Բժիշկն էլ զիւղացիների առողջապահու-  
թեան մասին է խօսում. բացի այդ, բոլոր աղ-  
քատներին ձրի է դարմանում:

ԽԱՉՈ. Ասուած ձեզ վարձահատոյց լինի...:

ՆՇԱՆ. Դեռ աւելին կայ, փաստաբանն էլ բո-  
լոր զիւղացիների դատերը ձրի է վերցնելու...:

ԽԱՉՈ. (Չարմացած) Բժշկի ձրի դարմանելուն մի  
քիչ խելքս հասնում է, ասենք հարուստներից փող  
վերցնում և աղքատների վրայ ծախում է, բայց  
փաստաբանը ինչպէս կարող է բոլոր զիւղացի-  
ների դատերը ձրի վերցնել...:

ՆՇԱՆ. Նա ուղարկւած է քնկերութեան կողմից,  
նրա պարտականութիւնն է ի միջի այլոց զիւղա-  
ցիներին պաշտպանել վաշխառուների, պաշտօ-  
նեաների և քրոյերի հարստահարութեանց դէմ...:

ԽԱՉՈ. (Գրոշխը շարժելով). Իսկապէս զարմա-  
նալի է, երևի ժամանակները փոխել են... բժիշ-  
կը հիւանդին չէ կողոպտում... փաստաբանը դա-  
տի տիրոջ չէ քամում... վարժապետը Պոլսի լաւ  
կեանքը և չաղ ոտճիկը թողած՝ զիւղում փոքր  
ոտճիկով գոհանում է... մարդի հաւատաւը չէ  
գալիս...:

ՆՇԱՆ. Այդ բոլոր փոփոխութիւնները դարոցի  
գործն է. եթէ մենք այդ կրթութիւնը չի ստա-  
նայինք, ի հարկէ միայն մեր եսի մասին կը մը-  
տածէինք: Լաւ դպրոցը՝ լաւ մարդիկ է պատրաս-  
տում...:

ԽԱՉՈ. Է՛հ... մեր ժամանակները  
նէինք:

109

1001  
1964



ՆՇԱՆ. (Ոտի կրկերով) Մնաս բարով, խաչօ  
Ամի:

ԽԱՉՕ. (Վեր կենարով Նշանի ձեռքն է ստրնում)  
Գնաս բարով Պատուելի, Աստուած կարողութիւն  
տայ:

ՆՇԱՆ. Ծնորհակալ եմ (Մուտքի դռնով հեռա-  
նում է):

ԽԱՉՕ. (Նշանի յետևից նայելով, ստանձիկ) Ի՞նչ  
բարի տղայ է...: Գնամ եկեղեցի մի մոմ վառեմ,  
Աստուած մեր գործին աջողութիւն տայ.. (Մուտքի  
դռնով հեռանում է):

ՏԵՍԱՐԱՆ Զ.

Մարօ (Առանձիկ)

ՄԱՐՕ. (Կողքի դռնով ներս է մտնում) Ախ...  
մինչև երբ պիտի շարունակւի մեր երկու տան  
մէջ եղած այս թշնամութիւնը...: Եթէ այդ անիծ-  
ւած դատը չը լինէր, Ասլան անշուշտ վաղուց հօ-  
րիցս իմ ձեռքը խնդրած կը լինէր... (հառաչում է)  
Ո՛հ... Աստուած իմ... բայց ինչպէս համարձակւի,  
քանի որ մեր երկուսի հայրերը միմեանց արիւն  
են խմում (յաց է յիշում ձեռքերը աչքերիկ տանե-  
լով): Ես կը մեռնիմ, ուրիշին չեմ գնալ...: Խեղճ  
Վարժապետ, իմ սրտի դարձը չէ իմանում... Իր  
սէրն է յայտնում...: Սիրուն տղայ, բարի տղայ,  
բայց ինչ արած, որ իմ սրտի սիրածը ուրիշն  
է... մերժել էլ չը կարողացայ... (Գիւպի երկիկը  
է նայում) Աստուած իմ, այս ի՞նչ անտանելի ցաւ  
է... (Իրտում ոտնաձայն շեղով իրեն է դառնում)  
մարդ է գալիս:

ՏԵՍԱՐԱՆ Է.

Նոյն և Սառա

ՍԱՌԱ. (Մուտքի դրան առաջ երևում է և ժպտա-  
ցիկ) Ի՞նչ էս ճոճում...

ՄԱՐՕ. (Ոչրախ վագրում է դիպի նրան) Ա՛յ, դու  
էս Սառա խաթուն, բարի եկար, հազար բարով,  
ի՞նչ նոր լուր...

ՍԱՌԱ. (Մարօյի ձեռքիցը բռնած դռակի մօտ է  
քաշ տալիս և յոգնած նստում է) Նստի՛ր... լաւ  
լուրեր եմ բերել:

ՄԱՐՕ. (Նստում է նրա կողքին և երկու ձեռքե-  
րով նրա երեսը շոյում) Ասլանիս տեսա՞ր...

ՍԱՌԱ. (Ժպտում և լուռ է մնում):

ՄԱՐՕ. (Անհամբեր) Դէ՛, շուտ ասա՛, դու էլ  
հոգիս հանում ես, արդէն վրաս հոգի չէ մնացել...

ՍԱՌԱ. (Ժպտարով Մարօյի երեսին մի սուտ ապ-  
տակ է խփում. յետոյ ծոցից՝ շորջը գունաւոր մե-  
տարսէ մի րաշկիկնակ հանելով նրան է տալիս) Նա՛  
... ա՛ռ տեսնեմ...

ՄԱՐՕ. (Թաշկիկնակը յափշտակելով աչքերիկ է  
քտում և համբոշտում) Ախ Ասլանս... դուրբանդ լի-  
նիմ...

ՍԱՌԱ. (Ծիծաղելով) Հա՛... հա՛... հա՛... յի-  
մար աղջիկ, քիչ է մնում խելքդ թոցնես...

ՄԱՐՕ. Խե՛ղք էս ասում... էս նրա հոգուն մա-  
տա՛ղ...

ՍԱՌԱ. (Լռորջ) Աղջի՛, ինձ մտիկ արա՛, վաղ ա-  
ռաւօտ մեր տունն է գալու, աշխատի՛ր մի քիչ  
շուտ գալ, քեզ ասելիք շատ բաներ ունի...

ՄԱՐՕ. (Ոչրախ՝ Սառայի վզին փարսրներով համ-  
րուրում է) Ծնորհակալ եմ, Սառա իսթոն. քեզ ի՞նչ  
անեմ՝ որ այս լաւութեանդ տակիցը դուրս գամ:

ՍԱՌԱ. (Ժպտաղիկ) Կարմրակ այտիցդ մի պաչ  
տո՛ւր. (վիզը փարսրներով համրուրում է):

ՄԱՐՕ. (Գրտում ոտնաձայներ շերտի՛ ոտի է կանգ-  
նում և մուտքի դրան նայում) Մարդ է գալիս...

ՍԱՌԱ. (Գեպի դռուր նայելով) Մարօ ջան, գնա՛  
տես ո՞վ է:

ՄԱՐՕ. (Մտաքս րաշիկնակը սձուպարանօք ծոցը  
դնելով՝ դեպ ի մուտքի դռան է գնում և բաց սևերով  
դռնու նայում) Հայրս է, հետն էլ մի ուրիշը կայ  
(Սառային մտնելարով) Էս գնամ, դու նստի՛ր, ա-  
ռաւօտ կը գամ: (Ետսպ և ոչրախ կողքի դնով դը-  
նում է):

ՏԵՍԱՐԱՆ Ը.

Սառա, Խաչօ և Յովհաննէս Էֆեկոյի

ԽԱՉՕ. (Գռուր բաց սևերով դրսից) Համեցէ՛ք  
համեցէ՛ք Էֆէնդի...

ՅՈՎ. ԷՖ. (Ներս մտնելով Սառային գրռի է տա-  
լիս) Բարե՛...

ՍԱՌԱ. (Ոտի կանգնելով) Աստուծու բարին զա-  
ւակս...

ԽԱՉՕ. (Յով. Էֆեկոյն յետևից ներս մտնելով)  
Բարե՛, Սառա իսթոն, ի՞նչպէս ես, լա՛ւ ես...

ՍԱՌԱ. Ծնորհակալ եմ, է՛հ, ապրում ենք էլի՛...

ԽԱՉՕ. (Յով. Էֆեկոյուն) Ներողութիւն, Էֆէնդիս,  
աթոռներ չունենք, համեցէ՛ք այս դոշակի վրայ  
նստեցէ՛ք... (Յոյց է տալիս Սառայի դեմի դռակը):

ՅՈՎ. ԷՖ. Հոգ չէ՛, այդպէս նստելու էլ վարժ-  
ւել եմ, միայն մի քիչ այս նեղ տաբատները ան-  
յարմար են: (Տարատի ձկնի մասերը վեր քաշելով  
դռակի վրայ ծարսպատիկ նստում է):

ԽԱՉՕ. (Սառայի կողքին նստելով) Նստի՛ր, Սառա  
իսթոն:

ՍԱՌԱ. Գործ ունեմ, գնալու եմ:

ԽԱՉՕ. Վնաս չունի, մի քիչ նստի՛ր:

ՍԱՌԱ. (Նստում է Խաչօյի կողքին), Լա՛ւ, մի  
քիչ կը նստեմ...

ԽԱՉՕ. (Յով. Էֆեկոյուն) Այս մեր գիւղի պառան  
է, մի տղայ ունի, այն էլ Պօլսումն է, ինքը գիւ-  
ղում չոր գլուխ է մնացել, շատ ժիրն է, ամեն-  
քին հասնում է...

ՍԱՌԱ. (Ծիծաղելով) Հա՛... հա՛... հա՛..., այն-  
քան զովում ես, որ նորից ամուսնանալու փա-  
փաքիմ... հա՛...

ՅՈՎ. ԷՖ. (Ծիծաղում է) Հա՛... հա՛... հա՛...

ԽԱՉՕ. (Ծիծաղելով) Հա՛... հա՛... հա՛..., եանի  
սուտ էլ չես ասում... երևի Սիմօն ախպէր վրայ  
աչք ունիս...

ՍԱՌԱ. (Դեմքը րբշտակելով) Ո՛ւյ... զրո՛ղս տա-  
նի՛...

ՅՈՎ. ԷՖ. (Բամբիծարով և նետաքրքիր) Սիմօնը  
ո՞վ է...

ԽԱՉՕ. Այն կաղ և միաչքանին, որ ձեր ձիան  
գլուխը պահեց, մեր գիւղի գզիբը...

ՅՈՎ. ԷՖ. (Բամբիծարով) Չէ՛, իսկապէս նա պա-  
ռաւին արժանի չէ:

ՍԱՌԱ. (Աչ ձեռքի մտնելը հաշարելով կոշիկ  
է րակում) Օ՛իս... հիմի հասկացա՛ր:

ԽԱՉՕ. (Գեպի կողքի դռուր քարձրանայն կան-  
չում է) Մա՛րօ... Մա՛րօ:

ՄԱՐՕ. (Գրասն յետևեց անյն տարով) Ի՞նչ է, հայ-  
րի՛կ...

ԽԱՉՕ. Աղջի՛կ, լագանով տաք ջուր բեր, մեր  
հիւրի ոտքերը լա՛ւ...

ՅՈՎ. ԷՖ. (Չարեացած Խաչոյի երեսն է նայում)  
Ո՞ր հիւրի:

ԽԱՉՕ. Էֆէնդո՛ւս...

ՅՈՎ. ԷՖ. Ծնորհակալ եմ, հարկաւոր չէ:

ԽԱՉՕ. Այդ չի լինել, մեր հիւրերին ամէն կերպ  
պատուել մեր հոգու պարտքն է:

ՍԱՌԱ. Էֆէնդի, մեր գիւղի սովորութիւնն է,  
ճանապարհից եկել էք, ձիան վրայ յոգնել էք,  
ոտքերնիդ լանան՝ որ հանգստանաք:

ՅՈՎ. ԷՖ. Ես հանգիստ եմ:

ՍԱՌԱ. Մեզ համար անպատուութիւն է, որ ու-  
րիշներ ասեն թէ հիւրի ոտքերն էլ չը լացին...

ՅՈՎ. ԷՖ. Մայրիկ, անպատուութիւնը ես հենց  
այդ որ լանալու մէջ եմ տեսնում...

ՍԱՌԱ. (Ապշած) Մեղայ՛ Աստուծ... (մեկոտսի)  
Այս էլ մեր վարժապետի խելքիցն է. ուզում են  
գիւղի սովորութիւնները տակն ու վրայ անել:  
(Ոտի է ելնում) Մնաք բարո՛վ (Գրոշի տարով հե-  
ռանում է դեպի մուտքի դռը):

ԽԱՉՕ. Նստի՛ր, Սառա խաթուն, մի սուրճ խը-  
մի՛ր...:

ՍԱՌԱ. Գործ ունեմ, ուրիշ անգամ (մեկոտսի)  
Ես հեռանամ թող իմ աչքերը չտեսնեն (գը-  
նում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Թ.

Նոյնը և Մարօ

ՄԱՐՕ. (Թեկոյր մի սրբիւ կախ տաւ և երկու  
ձեռքերով մի լագան ջուր բռնած՝ կողքի դնելով ներս  
է մտնում և ուղղակի գնում Յոյ. Էֆեկոյն առաջ,  
լագանը ցած դնում, ինքն էլ ծռնկ յոգում և պաւ-  
տում է որ հիշըր ոտները երկարացնի: Աւերըր միշտ  
խոնարհած է):

ՅՈՎ. ԷՖ. (Մարօյիև դիտելով) Չեմ ուզում, աղ-  
ջիկս, տա՛ր:

ԽԱՉՕ. Թողէ՛ք լանայ, Էֆէնդիս:

ՅՈՎ. ԷՖ. (Լորջ) Խաչօ Ամի՛, ժամանակ է որ  
թողնէք գիւղական տգեղ սովորութիւնները. կան  
սովորութիւններ՝ որոնց պահպանելը լաւ է, բայց  
կան սովորութիւններ էլ, ինչպէս այս ոտ լա-  
նալն է, որ ազդում են մարդու բարոյականի վը-  
րայ, արժանապատուութեան զգացումը չբացնում...  
Ի՛նչու համար մարդիկ պիտի ստորանան ուրիշի  
աղտոտ ոտքերը լանալու...: Ես ձեզ խորհուրդ  
կը տամ թողնել այս ստորացուցիչ և տգեղ սովո-  
րութիւնը...

ԽԱՉՕ. (Րկնձած) Լագանը տա՛ր, աղջիկս. Էֆէն-  
դին չէ ցանկանում: Մեզ սուրճ բեր...

ՄԱՐՕ. (Լագանը վերցնելով՝ կողքի դնելով գը-  
նում է):

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ .

Նոյնք (բաց ի Մարտից)

ՅՈՎ. ԷՖ. Նախ քան ձեր երկուքին հաշտեցնելը, ուզում եմ երկու կողմերին էլ լսել. դրա համար շուտ եկայ, Պետոյին արդէն տեսել եմ, դու էլ պատմիր տեսնեմ:

ԽԱՉՈ. (Երկար հառաչելով) Ախ... Էֆէնդիս, կարճ կապեմ, մօտ տասը տարի առաջ մեծ տղաս մի օր արտն էր ջրում. Պետօն վրայ հասնելով առուի ճանապարհը փակում է և իր արտը ջրում, ասելով՝ որ մենք իրաւունք չունենք իր արտից առաջ մեր արտը ջրելու: Տղաս եկաւ եղելութիւնը պատմեց: Ես էլ բարկացած՝ բահը վերցրի և գրնացի առուի ոտքը մեր արտը կապելու: Պետօն վրայ հասաւ և մեր մէջ մի տաք վէճ սկսեց...: Եթէ դիւղացիք չմիջամտէին՝ անկասկած կօխը արիւնոլ էր վերջանալու...: (Երկար շունչ է քաշում):

ՅՈՎ. ԷՖ. Յետոյ...

ԽԱՉՈ. Հետեւալ օր քաղաք իջայ, դատաւորին մի քանի ոսկի կաշառք տւեցի և Շէրիի օրէնքով ջրելու առաջնութիւնը ինձ տւեց: Բայց յետոյ Պետօն ևս իր կարգին դատաւորին կաշառելով՝ վրձիւր փոխել տւեց և ջրելու առաջնութեան իրաւունք ստացաւ: Ինչ երկարեմ, այսպէս փոխն ի փոխ եկող գնացող դատաւորներին երկու կողմից էլ մօտ երկու հարիւր ոսկի կաշառք տւեցինք...:

ՅՈՎ. ԷՖ. Լսել եմ՝ որ դուք և Պետօն մի քանի անգամներ բանտարկուել էք այդ դատի պատճառաւ. այդ ինչպէս է եղել...:

ԽԱՉՈ. Միմեանց մասին զանազան զրպարտութիւններ էինք անում, այդ զրպարտութիւններն էլ դատաւորները իրենք էին մեզ սովորեցնում...:

ՅՈՎ. ԷՖ. (Սրտնեղած) Վայ անախտաններ... յետոյ...:

ԽԱՉՈ. Մի քանի օր առաջ Ալի Էֆէնդին Պետոյին բանտարկելու համար տասնհինգ ոսկի պահանջեց. տասը ոսկին ճարեցի, իսկ հինգ ոսկու համար երկու օր միջոց տւեց: Այդ հինգ ոսկին չկարողացայ վճարել. դրա վրայ Պետոյին բանտից արձակեց և ինձ էլ լուր ուղարկեց՝ որ մինչև տասը օր այդ փողը վճարեմ, հակառակ պարագային ինձ է բանտարկելու...:

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ա .

Նոյնք և Մարօ

ՄԱՐՕ. (Չնայելով երկու բաժակ սուրճով մի սպիտակ շուշուկ՝ կողքի դռնով ներս է մտնում և Յով. Էֆէնդիոյն առաջ նստիւմ և աչքերը խոնարհած կանգնում):

ԽԱՉՈ. Համեցէք, Էֆէնդի:

ՅՈՎ. ԷՖ. (Սուրճի բաժակը վերցնելով՝ սկսում է ունկ ունկ խմել):

ՄԱՐՕ. (Ապուկ ներկայացնում է հօրը):

ԽԱՉՈ. (Բաժակը վերցնելով ծանր ծանր խմում է):

ՄԱՐՕ. (Մի կողմ քաշելով՝ սպիտակ ձեռքիկ՝ անշարժ սպասում է):

ՅՈՎ. ԷՖ. Լաւ: Հիմի տեսնում ես՝ որ այդ կաշառակեր անիրաւ պաշտօնեաներից ոչ քեզ օգուտ կայ և ոչ էլ Պետոյին: Երկուսդ էլ մի անմիա խնդրի համար ձեր ճակտի քրտինքով և դառն

աշխատանքով շահած հալալ արդիւնքը թշւառահանների գրպանն էք լցնում... իսկ դուք աղքատանում...: Այնպէս չէ... (Շարունակում է սուրճը խմել):

ՄԱՐՕ. (Մեկուսի) Երանի էր հօրս համոզէր...:

ԽԱՉՕ. (Տխուր շեշտով) Ճիշդ էք ասում, Լեֆէնդի (Սուրճը խմում է):

ՅՈՎ. ԷՖ. Դէ՛ լաւ. մտիկ արա՛. այդ անպիտան Ալի Լեֆէնդուն մի փարայ չպիտի տաս, իմացա՛ր... Ես չէ համարձակելու երկրորդ անգամ պահանջելու, քանի որ ես այս գործին միջամտել եմ. (Սուրճը խմում է):

ԽԱՉՕ. (Ուրախ) Ասուած ձեզ երկար կեանք տայ...:

ՄԱՐՕ. (Ուրախուրիւնից վեր է բռնում և սպսկե սկզբարար անքից բաց բողբոջում, որը շխրտարով գետինն է ընկնում: Խոկոյն վերցնում է սպսկե և մեկուսի) Ո՛հ... այլ ես թշնամութիւնները վերջ են գտնելո՞ւ...:

ԽԱՉՕ. (Սուրճը խմելով վերջացնում է) Ե՛կ, ա՛ռ, Մարօ...:

ՄԱՐՕ. (Ապսկե հօրը պարզելով՝ սուրճի բաժակը առնում է):

ՅՈՎ. ԷՖ. (Սուրճի բաժակը Մարոյին ուղղելով) Ա՛ռ, աղջիկս:

ՄԱՐՕ. (Ապսկե ներկայացնում և բաժակը առնելով՝ կողքի դռնով գնում է, դռնը կիսաբաց բողբոջով՝ արանքից խօսակցութեան տեսք է դնում: Հաւն դիտարկները կիսաբաց դռնից Մարոյին տեսնում են):

ՅՈՎ. ԷՖ. Այժմ քեզ մի բան է մտում անելու, այն է՝ այսօր իսկ հաշտել Պետոյի հետ, որին արդէն ես համոզել եմ: Արտերը ջրելու համար որոշեցինք առաջնութիւնը միանգամ քեզ և միան-

գամ նրան տալ հերթով: Ասլանը թէև ասում էր՝ որ առաջնութիւնը բոլորովին քեզ թողնեն, բայց ես ու վարժապետը այսպէս յարմար տեսանք: Ի՛նչ ես ասում...:

ՄԱՐՕ. (Դրան արանքից ուրախ) Ասլանը ինձ չըխաբեց, վերջապէս հօրը համոզել է...:

ԽԱՉՕ. Ինչ որ որոշել էք ընդունակա է:

ՅՈՎ. ԷՖ. Շատ ուրախ եմ. Պետոն տարիքով փոքր է, նա թող գայ այստեղ. համբուրեցէ՛ք, վերջանայ:

ԽԱՉՕ. Ինչպէս կամենում էք:

ՄԱՐՕ. (Դրան արանքից) Այսօր աշխարհ իմս է...:

ՅՈՎ. ԷՖ. Լաւ ուրեմն, ես կը գնամ. (Ոտի է ելնում): Մի ժամից այստեղ կը լինենք:

ԽԱՉՕ. (Միաժամանակ ոտի ելնելով) Տունը ձերն է, Լեֆէնդիս, միշտ շնորհ բերէք...:

ՅՈՎ. ԷՖ. (Խաչոյի անքը սեղմելով) Առ այժմ ցտեսութիւն. (Մուտքի դռնով գնում է):

ԽԱՉՕ. Յտեսութիւն, գնաք բարով, ձեզ ճանապարհը ցոյց տամ. (գնում է նրա յետևից):

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Բ .

#### Մարօ (Առանձին)

ՄԱՐՕ. (Կողքի դռնով ներս է մտնում, ուրախ) Վերջապէս... վերջապէս տասը տարւայ դատը վերջացաւ... այս հաշտութիւնը մեր երկու ընտանիքներին միմեանց է մօտեցնելու... մեր ամուսնութեան ճանապարհները բացելու են... եթէ Սառան լա՛է, չէ հաւատալու (Դրանում նուսձայն ընկնելով՝ դառնում է դեպի մուտքի դռնը) Հայրս գալիս է (Միևեկ կողքի դրան առաջ գնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Գ .

Նոյն և Խաչօ

ԽԱՉՕ. (Ներսև մտնելով) Մարօ՛, աղջիկս... այսօր ուրախ օրս է, Պետոյի հետ հաշտելու եմ, գնա մօրդ ասա՛ որ մի քիչ զինի և մրգեղէն պատրաստէ:

ՄԱՐՕ. (Ուրախ զնու՛մ է) Շատ լաւ, հայրիկ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Գ .

Խաչօ և Գասպար Ամի

ԳԱՍՊԱՐ. (Ծանրաբայլ մուտքի դնելով ներս է մտնում, ձեռնախայտի րիսիսկոյը շնչի է շինում) Բարե՛, Խաչօ ախպէ՛ր...

ԽԱՉՕ. Բարի եկար, հազար բարով, Գասպար Ամի, հրամէ նստի՛ր. (նստում է):

ԳԱՍՊԱՐ. (Գոչակի վրայ նստում է՝ ձեռնախայտը կողքին դնելով) Ի՛նչպէս ես, լաւ ե՞ս...:

ԽԱՉՕ. Շնորհակալ եմ, շատ լաւ եմ:

ԳԱՍՊԱՐ. Երևո՞ւմ է... դէմքիդ վրայ այսօր մի քիչ ուրախութիւն եմ տեսնում...: Հա՛, լսեցի, որ քեզ մօտ մի փաստաբան է եկել, ասում են շատ լաւ մարդ է, ո՞րտեղ է:

ԽԱՉՕ. Քիչ առաջ գնաց, բայց նորից գալու է: Աստուած նրա բանն աջողի. նրա շնորհիւ իմ ու Պետոյի միջև եղած առուի դատը վերջացաւ:

ԳԱՍՊԱՐ. Հա՛... դրա համար քեզ ուրախ եմ

տեսնում... լաւ... լաւ... (նկատարարած) բայց ի՛նչպէս վերջացաւ: (Գրպակից քրախտի տուփը հանելով՝ բաց է սկսում և քաշում, Խաչօյի ել հրաման զնում):

ԽԱՉՕ. (Քրախտից քաշելով, փրշտում է մի քանի սնգում) Շուտով Պետօն ինձ մօտ է գալու, համբուրելու ենք, վերջանայ:

ԳԱՍՊԱՐ. Շատ ուրախ եմ. դուք ձեզ համար դարտ էիք շինել էլի՞... կարծես աշխարհիս դարտերը պակաս լինէին... (Քրախտի տուփը փակելով գրպակն է դնում):

ԽԱՉՕ. Հա՛, Գասպար Ամի, այդ դատի համար ամէն բան ձեռքիցս գնաց ու պարտքերի տակ մնացի:

ԳԱՍՊԱՐ. (Գրոշիւր շարժելով հառաչում է) Ա՛խ... այդ անիծւած պարտքը... Հենց ես էլ դրա համար եկայ, փաստաբանին էի տեսնելու... հիմի քեզ եմ տալու այդ նեղութիւնը:

ԽԱՉՕ. Չեղբիցս գալիքը չեմ ինայել...:

ԳԱՍՊԱՐ. Խնդրում եմ՝ իմ ցաւը հասկացնեա փաստաբանին, ասում են մեզ նման խեղճ զիւղացիներին պաշտպանում է...:

ԽԱՉՕ. Շատ ազնիւ մարդ է՝ իր հանգիստը զոհում է մեզ նման զիւղացիներին պաշտպանելու համար. բոլորին էլ հասնում է և մի կոպէկ փող չէ վերցնում. ասում են՝ ընկերութիւնն է ուղարկել նրան, Թուրքերի և Քրտերի արդար դատերն էլ է վերցնում...:

ԳԱՍՊԱՐ. Նրանցից էլ փող չէ՞ վերցնում...:

ԽԱՉՕ. Չէ՛, հենց դրա համար էլ հայերից աւելի նրանք են գնում նրա մօտ, պաշտում են նրան...:

ԳԱՍՊԱՐ. (Չեղբերը կրկին քարձրացնելով) Աստուած նրան երկար կեանք տայ...:

ԽԱՉՕ. Յաւդ ի՞նչու՞ն է:

ԳԱՍՊԱՐ. (Տխուշ շեշտով) Միթէ՞ չես լսել՝ որ քուլֆաթիս միակ ապրելու միջոցը եղող արտս ձեռքիցս գնում է. (Գրուխը շարժում է):

ԽԱՉՕ. Չէ՛, չեմ լսել:

ԳԱՍՊԱՐ. Անիծւած Մաթխոշեանը դատարան է դիմել, և հինգ ոսկի պարտքիս փոխարէն արտս է ուզում գրաւել:

ԽԱՉՕ. Այ այդ անիրաւը, իմ մուխս էլ մարեց...

ԳԱՍՊԱՐ. Այդ անասուածը, այդ անհաւատը ո՞ւմ տունը չէ քանդել...: Տասը տարի առաջ ոտին տրեխ չունէր, իսկ այսօր գիւղերի ու պալատների տէր է եղել... (բարկացած) Ի՞նչով... Ի՞նչպէս, մեզ նման յիմար գիւղացիների մուխը մարելով...:

ԽԱՉՕ. Հիմի ո՞րքան է պահանջում:

ԳԱՍՊԱՐ. Չորս տարի առաջ փոքր որդիս պսակելու համար հինգ ոսկի պարտք վերցրի. ամէն տարի արտիցս մի քիլէ ցորեն տալիս էի և այսօր էլ տոկոսն տոկոսի վրայ բարդելով՝ քսան ոսկի է պահանջում... ամէն տարի մուրհակ էր փոխում, այսպէս էլ բան կը լինի... վերևում Աստուած չկայ...

ԽԱՉՕ. Անշուշտ փաստաբանը քթից մէկ մէկ դուրս կը բերի... տասը ոսկի պարտքս չորս տարուոյ մէջ 25 ոսկու բարձրացրել է... աչքը վերի արտիս է տնկե...:

ԳԱՍՊԱՐ. Աչքը դուրս գայ... դու մի անգամ փաստաբանին իմ ցաւը յայտնիր... եթէ իմ գործը կարգադրի՝ քոնն էլ վերջացած համարիր. բայց խնդրեմ, թող առաջ իմ գործը տեսնէ, դատարանը կարող է շուտով վճիռ տալ. անխիղճները շարունակ կաշառում են դատաւորներին և մեզ նման խեղճերին անիրաւ հանում...:

ԽԱՉՕ. Միամիտ կաց, առաջին առթիւ քո գործի համար կը խնդրեմ...

ԳԱՍՊԱՐ. Դու ես իմանում... Աստուած քո բանն էլ աջողի. (Դողդոջով վեր է կենում և ձեռնախայտը վերցնելով) Մի՛ մոռանար:

ԽԱՉՕ. (վեր կենալով) Աչքիս վրայ, յոյսդ մի՛ կտրիր:

ԳԱՍՊԱՐ. (Դողդոջուն քայլերով և ձեռնախայտը րդրդացնելով՝ դեպի մուտքի դռն է առաջանում) Շնորհակալ եմ, մնաս բարով. (Գնում է):

ԽԱՉՕ. Գնաս բարով:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ե .

Խաչօ և Մարօ

ՄԱՐՕ. (Կողքի դռնով ներս է մտնում և ձեռքին բռնած սպիտակ սփռոցը երկու ետև-դռակների մէջ տեղում պարզում):

ԽԱՉՕ. Դռակները քիչ առաջ քաշի՛ր, սփռոցին մօտեցրու:

ՄԱՐՕ. Լաւ, հայրիկ (Դռակները առաջ քաշելով սփռոցին մօտեցնում է):

ԽԱՉՕ. Գինին ու մրգեղէնն էլ բեր:

ՄԱՐՕ. Իսկոյն, հայրիկ. (Շտապ գնում է):

ԽԱՉՕ. (Դրտում ոտնաձայններ, դեպի դռնն է նայում) Երեւի գալիս են (Դեպի կողքի դռնը ուղշելով) Մարօ՛, շուտ արա՛...:

ՄԱՐՕ. (Ձեռքին մի բարձ գինի և երկու հողի քեասակ՝ մտնում և սփռոցի վրայ շարում) Գնամ մըրգեղէնն էլ բերեմ (գնում է):

ԽԱՉՕ. (Մուտքի դռնը գնում և սկսել է դնում):

Դրտում խօսում և ծիծաղում են: Զարմացած) Ի՞նչ են խօսում տաք տաք...

ՄԱՐՕ. (Չեղբին երկու պնակ մրգեղեկ՝ մտնում և ախոցի վրայ դնում) Պատրաստ է, հայրիկ...:

ԽԱԶՕ. (Դեպի Մարօն դառնալով) Ահա նրանք էլ գալիս են, դու գնա...:

ՄԱՐՕ. (Ոչրախ ցատկոտերով՝ կողքի դռնով հեռաւում է) Ասլանիս մատաղ...:

ՏԵՍԱՐԱՆ ԺԶ.

Խաչօ, Յով. Էֆեկերի, Պետօ, Նշան Պատուելի և Ասրան

ԽԱԶՕ. (Մոռարի դռնով ներս մտնող հիշերթին) Հրամեցէ՛ք, բարի եկա՛ք, հազար բարով, մեր տունը բազմաւորացրիք...:

ՅՈՎ. ԷՖ. (Ոչրախ ներս մտնելով Խաչօյի ձեռքն է սեղմում) Բարե՛... հա՛, սեղմն էլ պատրաստել ես... (Բեւի առաջն է գալիս):

ՆՇԱՆ. (Յով. Էֆեկերոց յետոյ ներս մտնելով՝ Խաչօյի ձեռքն է սեղմում) Բարե՛... Ի՞նչ կօնծեւու ենք (ծիծաղում և գնում է փաստարանի մօտ):

ԽԱԶՕ. (Ոչրախ և Ժպտադեմ) Չեր շնորհիւ այսօր ուրախութեան օր է:

ՊԵՏՕ. (Ժպտերես ներս է մտնում է Խաչօյի վիզը փարսրելով՝ համբուրում է) Տասը տարւայ կարօտս է (Աչքերը ըջում են):

ԽԱԶՕ. (Նայնպես փարսրում է Պետօյի վզին և համբուրում) Անցածը մոռնանք...:

ԱՍԼԱՆ. (Ներս է մտնում և դրան առաջ սպաւում է՝ որպիսցի Խաչօյի և Պետօյի ողջագոչրակքը

վերջանայ) Ես վազուց այսօրը տեսնել ցանկաւ նու՛մ էի:

ՊԵՏՕ. (Խաչօյից բաժանելով, Ասլանին) Ե՛կ ձեռքը համբուրի՛ր:

ԱՍԼԱՆ. (Համբարում է Խաչօյի ձեռքը):

ԽԱԶՕ. (Ասրանի ձախտան է համբուրում և ներկայներեն սերսն հրաշիրում) Համեցէ՛ք նստէ՛ք, բուրդ էլ բարի եկաք, մեր տունը ուրախացրիք... (բորբն էլ սերսնի շորջը դօշակների վրայ նրատում են):

ՆՇԱՆ. Երկուսիցդ էլ շնորհակալ ենք, ուրախ ենք՝ որ մեր աշխատանքը ի գուր չկորու և այսօր դուք կողք կողքի նստել էք իբրև վազեմի բարեկամներ:

ԽԱԶՕ. (Գիտու շորջը վերցնելով՝ քիստները ըջնում է, մին Պետօյին և միսն էլ Յով. Էֆեկերուն է տալիս) Հրամեցէ՛ք, ես ձեր բուրդից երկնքից մինչև գետին շնորհակալ եմ:

ՊԵՏՕ. (Քիչ գիտուց խմելով՝ քիստն է տալիս է Նշան պատուելուն) Պ. Փաստաբանից, բժշկից և մեր պատուելուց շատ շնորհակալ եմ, Աստած նրանց երկար կեանք տայ, նրանց շնորհիւ այսօր կենացս ամենաուրախ օրն է:

ՅՈՎ. ԷՖ. Մենք մեր պարտականութիւնը կատարեցինք, մենք էլ ձեզ հետ ուրախ ենք. ձեր բուրդի կենաց (խնում է, քիստն է տալիս է Ասլանին):

ՆՇԱՆ. Մասնաւորապէս Յով. Էֆեկերուց շնորհակալ պէտք է լինել, կաշառակեր պաշտօնեաների բերնին սանձ դրեց. ձեր կենաց Յով. Էֆեկերի (խմելով՝ քիստն է ախոցի վրայ է դնում):

ՅՈՎ. ԷՖ. Շնորհակալ եմ:

ԱՍԼԱՆ. (Յով. Էֆեկերուն) Չեր կենաց. (Միտու

ներիև) ձեր բոլորի կենաց. (խմելով՝ քիսսուկն սրի-  
ռոցի վրայ է դնում):

ՊԵՏՕ. Մենք ձեր երեքիցն էլ հաւասարապէս  
շնորհակալ ենք, բժիշկը իր տեղը ունի, Յով.  
Էֆէնդին իր տեղը և վարժապետը իր տեղը, երեքն  
էլ իրենց գործքով գիւղին օգտակար են դառնում  
և միևնոյն ժամանակ երեքն էլ միևնոյն նպատակի  
են ձգտում. Աստուած նրանց փափաքները իրա-  
կանացին:

(Գիւնու քիսսուկները մի քսակի սեզամ յցնում և դա-  
տարկում են. ուտում են մրցեղիկից, երբևէ մի-  
մեանց հետ չիկ խօսում են, մանաւանդ Պետոն և Խա-  
չօն: Բարբի տրամադրութիւնը դեպի շաւն է գնում):

ՆՇԱՆ. (Քիսսուկն ձեռքիւ շաւն և ոգևորած)  
Թոյլ կը տամ այս առթիւ մի քանի խօսք ասելու:  
Մենք մեր վարքն ու բարքով, նիստ ու կացով  
շատ յետ ենք մնացել, թէև պարծենում ենք՝ որ  
Արեւելքի յառաջագէմ և քաղաքակիրթ ժողովուրդ  
ենք...: Հենց մեր ներկայ վիճակը մի պատկեր  
է մեր կիսավայրենի կեանքին...: Տեսնում էք՝ որ  
մարդավայել ասլրելու համար ոչ սեղան ունենք,  
ոչ բաժակ, ոչ աթոռ, և այլն, և այլն...: Մինչ-  
դեռ Եւրոպայում մեզանից նւազ հարուստ գիւղա-  
ցին մարդավարի ասլրում է, նրա տնական կահը  
կարասիքը, թէև պարզ, բայց հանգստաւէտ է: Եւ-  
րոպայում գիւղացի ընտանիքը աշխատանք չեղած  
ժամանակ՝ սեղանի շուրջը բոլորում և զիրք ու  
լրագիր է կարգում: Իսկ մենք... ծոյլ ու անհոգ  
նստած՝ բամբասանքներ ենք անում և կամ մի-  
մեանց տուն քանդելու հնարքներ մտածում...: Ու-  
րեմն, ես խմում եմ մեր գիւղացիների գիտակ-  
ցութեանը, և հետևաբար երջանկութեանը համար.  
(խմելով՝ քիսսուկն սիւռոցի վրայ է դնում):

ԱՍԼԱՆ. Ես չեմ կարող բոլորովին մեր գիւ-  
ղացիներին մեղադրել, որովհետև նրանց հասկա-  
ցնողներ և քարոզողներ չեն եղել: Այժմ, ես յոյս  
ունեմ, որ ձեր ջանքերի շնորհիւ այդ բարեշրջու-  
թիւնները շուտով մուտ կը գտնեն մեր գիւղում:  
ՆՇԱՆ. Յաւալին այն է՝ որ գիւղացիք իրենց  
նահապետական բարքերից դիւրաւ չեն հրաժար-  
ւում:

ՅՈՎ. ԷՖ. կարծում եմ այնքան էլ գանգատե-  
լու իրաւունք չունինք: Չէ կարելի կարճ միջո-  
ցում դարաւոր հասկացողութիւնները, նախապա-  
շարումները և սովորութիւնները յեղաշրջել: Բա-  
րեշրջումը աստիճանաբար է լինում, բնութեան  
օրէնքը անխախտ է: Երկարատև, համբերատար  
և անվհատ աշխատանք է հարկաւոր:

ԱՍԼԱՆ. Այդ յեղաշրջումը արդէն նկատելի է  
հենց այս գիւղում: Այժմ առողջապահական պայ-  
մանները աւելի լաւ են, հետզհետէ կուլտուրական  
հիմնարկութիւնները աւելանում են, ժողովուրդը  
բիշ ու շատ գիտակցութեան է գալիս... պակասը  
ժամանակը կը լրացնի:

ԽԱՉՕ. (Բարջից քիսսուկի մէջ գիւնի ածելով՝ տա-  
լիս է Ասլանին) Ա՛ռ, Ասլան գաւակս, մենք արդէն  
ձերացել ենք, դուք նոր հասածներդ մտածեցէք  
այդ բաների վրայ և լաւ օրեր վայելեցէք: (Միւս  
քիսսուկն էլ յցնելով՝ Յով. Էֆէնդուն է տալիս) Հա-  
մեցէ՛ք, հազար ասլրիք, դուք գործեցէք, ձեր աշ-  
խատանքը ի զուր չի կորչել, անուշ արէք, միշտ  
այսպէս ուրախ լինէք:

ԱՍԼԱՆ. (Խաչօյիև) Ձեր կենաց: Մենք նոր  
հասածներս այդ քարոզողութիւններից բաւական  
օգուտել ենք, այժմ լաւ ենք ըմբռնում ժամանակի  
ոգին...: (Խմում և քիսսուկն ցած է դնում):

ՊԵՏՕ. Մենք ձերերս էլ ձեր յետևից հասնում ենք... օրինակ, մեր այսօրւայ հաշտութիւնը պարզ ապացոյց է՝ որ մենք էլ խելքի ենք եկել:

ՅՈՎ. ԷՖ. (Ոգևորւած, գիտնո թխասեկ վերցնելով) Կեցցես, Պետօ Ախպէր, ուրեմն խմում եմ Ձեր ու խաչօյի կենացը. (խմում է):

ՊԵՏՕ ԵՒ ԽԱՉՕ. Շնորհակալ ենք:

ՅՈՎ. ԷՖ. (Քիտասեկ ձեռքիկ պահած) Մեր այս ուրախութիւնը, այս երկու տան հաշտութիւնը կատարեալ անելու համար մտքիցս մի բան է անցնում... (Լռում է):

ԲՈՒՈՐԸ. (Հեատքրքիր) Ինչ...

ՅՈՎ. ԷՖ. Բոլորդ ցանկանում էք՝ որ այս երկու տան բարեկամական կապերը ամուր և տեւական լինին:

ԲՈՒՈՐԸ. Այո՛... այո՛...

ՅՈՎ. ԷՖ. Այդ ամուր կապը կը լինի Մարօն ու Ասլանը միմեանց միացնելը... պայմանա՛ւ որ երկուքն էլ հաւան լինին: Դէ՛, ինչ էք ասում... ԶԱՅՆԵՐ. Կեցցես... հիանալի է:

ՆՇԱՆ ԵՒ ԱՍԼԱՆ. (Լռու եւ մկում):

ՅՈՎ. ԷՖ. Ուրեմն, երկու խնամիների կենացը (խմում և թխասեկ ցած է դնում):

ՆՇԱՆ. (Մեկուսի, տխուր և հիասրախած) Վայ...

ՅՈՎ. ԷՖ. Էֆէնդի... մուխս մարեցիր... ախ, ես ինչ յիմարն էի՝ որ սիրտս ընկերներիս բաց չարեցի... բայց այս բանը ո՛ւմ մտքիցն էր անցնում...

ՄԻԻՍՆԵՐԸ. (Հերքով խմում և ուտում կն):

ԱՍԼԱՆ. (Ամառում է և յազում):

ՊԵՏՕ. (Նշակի տխուր խելքիկ և կատարով) Պատելի, դուք ինչու չէք մասնակցում մեր ուրախութեան. սպենք Ասլանը ամաչում է, դուք ինչ ունէք...

ՆՇԱՆ. (Բնկձած) Անհանգիստ եմ, ներողու-

թիւն, ինձ մի քիչ հանգիստ թողէք (Մեկուսի) Ուրախութիւն... (Երկարում է խօսքը) իսկ ինձ համար... օհ... դժբախտութիւն. (Քարձիկ կարկեռով՝ ձեռքը կրակիկ դրած մտածում է):

ԽԱՉՕ. Երևի գինին զուլին է զարկել, պատեւ լին այնքան էլ վարժ չէ խմելու:

ՅՈՎ. ԷՖ. (Նշակիկ) Իսկապէս ինչ ունիս:

ՆՇԱՆ. Գլուխս պտոյտ է գալիս:

ՅՈՎ. ԷՖ. Ոչինչ, կ'անցնի, մի քիչ յետոյ կը պառկես կը հանգստանաս: (Խաչօյիկ) Պէտք է Մարօյին այստեղ բերել և նրա հաւանութիւնն էլ առնել:

ԽԱՉՕ. (Տատաւում է)... Բայց...

ՅՈՎ. ԷՖ. Բայց ինչ...

ԽԱՉՕ. (Ճակատեկ է շփում) Անյարմար է... ես խօսք տեցի՛ վերջացաւ:

ՅՈՎ. ԷՖ. Միմեանց տան քանդելն է անյարմար. երկու նշանածներին մի քանի ըստէ միմեանց մօտ բերել և նրանց կամքը իմանալը՝ ամենայարմար բանն է: Գիւղացիք պէտք է թողնեն այդ նահապետական ստորացուցիչ բարքերը, որոնց պատճառաւ հազարաւոր անմեղ հոգիներ են նահատակում:

ԽԱՉՕ. (Բնկձած) Դուք էք իմանում, աղջիկը ձերն է:

ՅՈՎ. ԷՖ. Ոչ մերն է և ոչ ձերը. այս դէպքում նա ինքը իր տէրն է, ոչ ոք իրաւունք ունի նրա կամքի վրայ բռնանալու: Դէ՛, ձայն տէք բայ...

ՆՇԱՆ. (Նոյն դիրքում, մեկուսի) Այդ նահապետական բարքերն էին՝ որ Մարօյի լեզուն կապեցին... գուցէ այն օր իր հաւանութիւնը տար և ամէն բան վերջացած լինէր: Այլ ևս ինձ համար

ամէն յոյս կորաւ, պէտք է համակերպիմ եղա-  
ծին... բայց չեմ կարողանում իշխել իմ զգաց-  
մունքներէ վրայ... ո՛հ... (Ճակատեմ ե շփում):

ԽԱՉՕ. (Բարձրաձայն կակուշում է) Մարօ... Մա-  
րօ...:

ՄԱՐՕ. (Կոշիտի յետեից) Ի՞նչ է, հայրիկ...:

ԽԱՉՕ. Ե՛կ այստեղ, աղջիկս:

ՆՇԱՆ. (Մեկրուի) Չէ՛, չեմ կարող զիմանալ...  
պէտք է հեռանամ այստեղից... զօրաւոր կամք է  
հարկաւոր, իսկ այսօր սէրս իշխում է կամքիս էլ  
վրան, միմեանց հետ կուռում են... վայ թէ սէրս  
յաղթէ կամքիս, կորսուած եմ... (Ոտի է կրնում.  
ննրիակներին) Ներողութիւն. կ'զնամ հանգստանա-  
լու, մնաք բարով. (գլխով բարկերով՝ դեպի մուտքի  
դռնէ է գնում ծակարարի):

ԽԱՉՕ. (Ոտի կրկերով՝ Նշանին) Այս չեղաւ, մեր  
ուրախութիւնը խանգարեցիր...:

ՆՇԱՆ. (Դրանք առաջ) Շարունակեցէք ձեր ու-  
րախութիւնը, ինձ համար մի՛ խանգարէք. (գը-  
նում է):

ՅՈՎ. ԷՖ. Թող զնայ հանգստանայ, երեւի խը-  
միչք չէ կարողանում տանել:

## ՏԵՍԱՐԱՆ ԺԷ.

### Մեացողները և Մարօ

ՄԱՐՕ. (Աւօրիսած և աչքերը միշտ խոնարհած՝  
կողքի դնելով ներս է մտնում և կակուշում, կրկնէ  
աչքերի տակով Ասրակին դիտելով):

ՅՈՎ. ԷՖ. (Ոտքի կրկերով) Օրի՜՜՜րդ, մենք բու-  
լորս ցանկանում ենք՝ որ այս երկու տան բարե-

կամութիւնը տեւական լինի ձեր և Ասրակի միու-  
թեամբը. եթէ Ասրակին հաւան ես, ձեռքդ նրան  
տո՛ւր:

ՄԱՐՕ. (Կնարկում և գրոշխը աւելի է խոնարհեց-  
նում):

ԽԱՉՕ. (Մարօյին մօտենալով) Աղջիկս, ես հա-  
ւան եմ՝ որ դու զնաս Ասրակին, եթէ դու էլ հա-  
ւան ես՝ տո՛ւր ձեռքդ, մի՛ ամաչիր. (ձեռքը եր-  
կարում է Մարօյին):

ՄԱՐՕ. (Անհամարձակ ձեռքը պարզում է, աչքերը  
արտասուքով քրչւում են):

ԽԱՉՕ. (Ասրակին) Ասրակ, զաւակս, մօտ ե՛կ:  
ԱՍԼԱՆ. (Ոտի ցատկերով, քիչ ամօրիսած մօտե-  
նում է խաչօյին):

ՊԵՏՕ. (Ոտի է կակուշում և դիտում տեսարանը):

ԽԱՉՕ. (Ասրակի ձեռքը Մարօյի ձեռքին մէջ դնե-  
լով) Աստուած օրհնէ ձեր միութիւնը, թագ ու պը-  
սակնիդ տեսնենք:

ՊԵՏՕ. (Չեռքերը կրկին բարձրացուցած) Աստուած  
օրհնէ:

ՅՈՎ. ԷՖ. (Ոտքիս ծախ տարով) Կեցցէ՛... կեց-  
ցէ՛...:

### ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Պետոյի գիւղական տան հիւրասենեակը: Գետնին կապերտներ, մէջ տեղում մի փայտէ սեղան, այս ու այն կողմ աթոռներ, աջ կողմը մի պատուհան, որի տակ դրւած է մի եան-դոշակ՝ երկու երկայն բարձերով: Չախ կողմից թոնրատուն տանող մի դուռ: Ճակատից մուտքի դուռ: Պատից կախած է մի հրացան՝ փամիշտակալով, թախչաներում շարւած են պղնձէ և հողէ ամաններ, երկու մեծ տաղեայ մոմկալ: Վարագոյրը բացելիս՝ Պետո և Նազլու սեղանի մօտ նստած՝ սուրճ են խմում: Պետո այս գործողութեան մէջ նոր շորեր է հագած: Արշալոյս է:

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա

Պետո և Նազրո:

ՊԵՏՕ. (Սուրճը մի կողմից խմելով) Կնիկ, Ասլանին պսակելու ժամանակն է, պարտքերիցս պրծել եմ, տունս տեղս քիչուամիչ շտկել, այս տարի բերքն էլ աջող է:

ՆԱԶԼՈՒ. (Նոյեպես սուրճը խմելով) Հապա՛... Չահիլին մեղք է, երեք տարի է նշանւած է, հարկաւ սիրտը հատնում է:

ՊԵՏՕ. Ճիշդ ես ասում, կնիկ, բայց ինչ արած, տասը տարի այն դատի երեսից պարտք պարտքի վրայ զիգեցի. փառք Աստուծոյ, հիմի վիճակս լաւ է. պարտական եմ փաստաբանին, բժշկին ու վարժապետին, մի քանի տարւայ մէջ գիւղը դրախտ

դարձրին... (Նստած արուր ցոյց տալով) Այս նորմօտնի աթոռները մի քանի տարի առաջ մեզ մօտ գոյութիւն չունէին, իսկ հիմի ամէն տան կայ: Մենք սրտեղից էինք իմանում՝ որ կարագը կաթից պէտք է հանել, ոչ թէ մածնից... զանազան տեսակի պանիրներ շինել: Հապա այն նոր գործիքները... որ համ աշխատանքը պակսեցրին, համ էլ աւելի շուտ և շատ արդիւնք են տալիս... (Սուրճը վերջացնելով՝ բաժակը սեղանի վրայ է դնում):

ՆԱԶԼՈՒ. Աստուած նրանց երիտասարդ արևը պահէ: Ասլանս կիրակի օրերը դպրոց գնալով՝ կարդալ, գրել, հաշուել, և չեմ գիտեր դեռ ինչ լաւ բաներ սովորեց, կէս բժիշկ է դարձել... (Սուրճի բաժակը սեղանի վրայ է դնում):

ՊԵՏՕ. Կէս էլ փաստաբան ասա՛, կնիկ... Օրէնքները այնպէս է իմանում, այնպէս է իմանում, սր... Ալի էֆէնդուն կը կարգացնի: Խօ՛, մենակ Ասլանը չէ, գիւղացիք բոլորը ուսում առած մարդիկ են դարձել:

ՆԱԶԼՈՒ. Սէրն ու միաբանութիւնը ամէն բարիք կը ծնին... Տե՛ս, խաչօյի հետ հաշուելուց յետոյ վիճակնիս ինչպէս լաւացաւ: Դո՛ւ այն ասա՛, Ասլանին Սուրբ Սարգսին պսակենք:

ՊԵՏՕ. Հա՛, կնիկ, ես էլ այդպէս էի մտածում. (Դրտում ուսնածայն. Դեպի մուտքի դռնէ կայում, որը նոյն միջոցիկ բացում է և Արսակ երևում) Ահա՛ ինքն էլ գալիս է:

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի .

## Նոյնը և Սարսև

ԱՍԼԱՆ. (Տխուր և յուզուած՝ մուտքի դռնով ներս մտնելով՝ ընկնում է մի արուռի վրայ, ձեռքը ձակտախն տանում և արտասւռնում):

ՆԱԶԼՈՒ. (Վեր է ցատկում և ձեռքը Սարսևի ուսին դնելով) Ի՞նչ կ'այ. ի՞նչ ես եղել...:

ԱՍԼԱՆ. (Հեծկրտում է և հառաչում) Ա՛խ...:

ՊԵՏՕ. (Վեր է ցատկում և մտանում Սարսևին) Քեզ ի՞նչ է պատահել...:

ՆԱԶԼՈՒ. (Տխուր և սենսանցիտ) Դէ՛ շուտ ասա՛, ինձ վախեցնում ես...:

ԱՍԼԱՆ. (Հառաչելով) Ա՛խ... Մարօ... (Չեռքը մի քանի ակզամ ձակտախն է խփում և երկիսի նման արտասւռնում) Մարօ...:

ՊԵՏՕ. (Բոյրովիկ շփորշած, բարձրաձայն) Դէ՛ ասա՛, ի՞նչ է պատահել Մարօյին...:

ԱՍԼԱՆ. (Յուսանատ մի շեշտով) Քրդերը փախցրել են... փախցրել. (Լացը շարունակում է):

ՊԵՏՕ. (Ապշած ու չճանաչ) Փախ... ցրել...:

ՆԱԶԼՈՒ. (Երկու ձեռքերը գլխին խփելով՝ լաց է լինում) Վա՛յ իմ գլխին...:

ՊԵՏՕ. (Յուզուած) Մի՛ ուղղւի՛ր ու պատմի՛ր տեսնեմ, այդ ի՞նչպէս է պատահել...:

ԱՍԼԱՆ. (Ուղղելով՝ րևովը աչքերն է յորացնում) Գիշերը Հիւսէյին Բէգի մարդիկը խաչօյի տունն են մտել և տեղն ու տեղը սպանել խաչօյին, կոշը, հարսին... Թալանել և Մարօյին փախցրել... (Չեռքը աչքերին տանելով՝ դարձեալ լաց է լինում):

ՊԵՏՕ. (Չեռքով ձակտան է քակում) Վա՛խ... վա՛խ... վա՛խ. (Լաց է լինում):

• ՆԱԶԼՈՒ. (Երկու ձեռքերով ծնկերը քակում և գրշիկը այս ու այն կողմ շարժում) Ո՛ւշ... Ո՛ւշ... տունն քանդուեց... մոլորս մարեց... ա՛յ անհաւատնե՛ր... ա՛յ գազաններ... (հեծկրտում է):

ՊԵՏՕ. Վա՛յ, անիծւես, Հիւսէյին Բէգ... վա՛խ խաչօ... վա՛խ Մարօ...:

(Նեւի վրայ մի րուպէ շուրջն է տիրում, միայն խոշ հառաչանքներ և հեծկրտանքներ են լսում):

ՊԵՏՕ. (Ինքն իրեն հառաչելով և աչքերը սրբելով) Գնամ տեսնեմ զիւղում ի՞նչ են խօսում... գուցէ Մարօն մի տեղ թագնուած լինի...:

ԱՍԼԱՆ. (Աչքերը Պետօյին ուղղելով) Ի՛ զ՛ւր... ասում են՝ որ Քրտերը փախցրել են...:

ՊԵՏՕ. Ես այս բոպէիս ամէն բան տեղնուտեղը կ'իմանամ... Սառնասիրտ եղի՛ր, Ասլան...:

ԱՍԼԱՆ. Ասելը հեշտ է... (Լաց է լինում):

ՊԵՏՕ. (Սարսևի րևերը բռնելով՝ քաշում է) Ե՛կ, գնանք, մի լաւ տեղեկանանք. (Մուտքի դռնով գրնում ևն):

ՆԱԶԼՈՒ. (Լացը շարունակելով՝ ընկնում է մի արուռի վրայ) Ա՛յս է դրախտը... բոլորը ասում էին՝ որ մեր զիւղը դրախտ է դարձել... հապաղժօխքը ո՞րն է... (Գոզնոցի ծայրերը աչքերին է տանում):

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

## Նագրու և Գառար Ամի

ԳԱՍՊԱՐ. (Մուտքի դռնով ներս է մտնում՝ ձեռնախայտիկ յեկած, և ինքն իրեն խօսելով՝ դանդաղ դարձալ առաջանում է) Գազաններ... (Նագրուիկ մօտեկարով) Այս ի՞նչ զուլում է, քուրիկ... այս ի՞նչ անտանելի ցաւ է...

ՆԱԶԼՈՒ. (Գողնցի ծայրերը ցած բողկելով և խոր հառաչելով) Ա՛խ... Գառար Ամի, դժոխք է... դժոխք...

ԳԱՍՊԱՐ. (Արտաքի վրայ նստում՝ Նագրուի դեմը, ձեռնախայտը ցած դնում և գրպակից քրախտախ տուփը հանելով քաշում է): Երեւի Աստուած իր դժոխքը այստեղ է փոխադրել, մեզ մեղաւորներին պատժելու համար... Քուրը կոտորում ու թալանում է մեզ... կառավարութիւնը ճնշում ու հարբատահարում... իսկ հայ Մաթիսոշլեանները՝ տղրուկի նման մեր արիւնքը ծծում... (Քրախտախ տուփը Նագրուիկ ներխայտեցնելով) Քաշիր...

ՆԱԶԼՈՒ. Ծնորհակալ եմ, ես չեմ քաշում:

ԳԱՍՊԱՐ. (Տուփը յետ է քաշում և գրպակը դնում) Ճիշդ է, դու չես քաշում... է՛հ, ծերութիւն է, մոռանում եմ:

ՆԱԶԼՈՒ. Այս ի՞նչ դժբաղդութիւն է... զաւակս ձեռքիցս գնալու է... Ասլանս այս ցաւին չէ կարող դիմանալ, երեխի նման արտասուում էր. (Ձեռքերը աչքերիկ տակելով արտասուում է):

ԳԱՍՊԱՐ. Ի՞նչ ասեմ, քուրիկ... զուլումի երկիր է... քեզ միտիթարելու խօսք չեմ գտնում.

(Ձեռքերը դեպի երկիւր շարձեցնելով) Է՛լ բաւական է... քո ողորմութիւնը անբաւ է...

ՆԱԶԼՈՒ. Մինակ մեզ չէ հասնում...

ԳԱՍՊԱՐ. Յոյսը մի՛ կարիր... Թոռս մահամերձ վիճակի մէջ էր... Աստուած նրա անմեղ հոգուն ողորմեց...

ՆԱԶԼՈՒ. (Ձեռքերը աչքերից ցած բերելով) Եթէ բժիշկը նրա կաշւի տակից դեղ չխփէր, դժար թէ Աստուած նրան ազատէր... Տես ի՞նչպէս թուրքերի երեխերը կոտորում են... որովհետեւ բժշկին չեն հաւատում... Խեղճը շաբաթներով նրանց զիւղերում ման է գալիս, բայց քիչներն են դիմում... ի՞նչու համար Աստուած նրանց երեխերին չէ ողորմում...

ԳԱՍՊԱՐ. Անհաւատներին էլ ողորմելու է...

ՆԱԶԼՈՒ. Է՛հ, մեզ շատ է ողորմում...

ԳԱՍՊԱՐ. Ես իմ յոյսը նրա վրայ եմ դրած... Ո՞ւմ մտքիցն էր անցնում՝ որ ես կարող էի Մաթիսոշլեանի ճիրաններից ազատել:

ՆԱԶԼՈՒ. Աստուած երկար կեանք տայ փաստաբանին, եթէ նա չլինէր՝ արտդ վաղուց ձեռքիցդ զնացել էր...

ԳԱՍՊԱՐ. Քո ցաւը այնքան մեծ է՝ որ դու այսօր հաւատքդ էլ կորցրել ես... հանգստացիր, ամէն բան կ'անցնի...

ՆԱԶԼՈՒ. Ազնիւ փաստաբանը մեր երկու տներում ժպիտ և ուրախութիւն մտցրեց... բայց ի՞նչ օգուտ... տեսնում ես, որ նորից տիրեցին սուգն ու լացը, վիշտն ու տառապանքը... Ե՛րբ կը վերջանան...

ԳԱՍՊԱՐ. Ի՞նչ անենք... աշխարհ այսպէս է... ո՞ր տեղ կատարեալ երջանկութիւն կայ... (Ձեռնախայտն է վերցնում և ոտի կակեղնով) Մնաս բա-

բո՛վ... յոյսդ Աստուծոյ վրայ դի՛ր (դեպի մուտքի ղուշը առաջանալով) Օրհնեա՛լ է նրա կամքը... էլի նա կը հասնի մեր սև օրերին, մնաս բարձ՛վ (գնում է):

ՆԱԶԼՈՒ. (Ոտքի կրկերով) Գնաս բարձ՛վ... ոչ մեր սև օրերը հատնելիք ունին և ոչ էլ նրա ողորմութիւնը հասնելիք ունի... (Առանձին) Խենթի նման սիրո՛ւմ էր նրան... վախենում եմ նա մի յիմարութիւն կ'անի և իրեն էլ կը փճացնի... (Երեխան ներսից լաց է լինում) Երեխաս զարթնեց... (Դեպի կողքի ղուշը գնալով) Մեծացի՛ր... որ դու էլ մեզ նման տանջե՛ս. (գնում է):

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ .

### Պետօ և Այրան

ՊԵՏՕ. (Այրանի հետ մուտքի դռով մտնում և խօսելով առաջանում է) Առաջնորդի բողոքի վրայ՝ անպատճառ կառավարութիւնը մարդասպաններին կը ձերբակալի և Մարօյին կ'ազատի:

ԱՍԼԱՆ. (Տխուր, հօրը կողքով առաջանալով) Ես այդ անիրաւ կառավարութեան վրայ յոյս չունեմ... նա աւելի Քրդին կը պաշտպանի քան թէ Հային:

ՊԵՏՕ. (Սեղանի մօտ նստելով) Ես յոյս չեմ կարում... փաստաբանը անշուշտ մի բան գիտէ՝ որ Առաջնորդի միջոցաւ Պոլիս Պատրիարքին հեռագիր է խփել տւած:

ԱՍԼԱՆ. (Ոտի վրայ, րևերը կրծքին ծալած) Այդ բոլորից ո՛չ մի օգուտ: Պէրպէր Գրիգորին... Լարչենց եղբարց մօրը սպանողներին ի՞նչ արեցին... Միսաքենց հարսին փախցրին ու քրտացրին, ինչ

չո՛ւ չազատեցին... Մարդասպանները, առեանգողները ազատ ման են գալիս... Առաջնորդի, պատրիարքի դիմումների վրայ մի քանի օր բան տարկում, յետոյ բաց են թողնում... Չէ՛, հայրի՛կ, կառավարութիւնից, Առաջնորդից յոյս կտրիր...:

ՊԵՏՕ. Հապա ի՞նչ անենք... մեր ձեռքիցը ի՞նչ կ'գայ...:

ԱՍԼԱՆ. Պէտք է անոնց դատաստանը մեր ձեռքով տեսնենք:

ՊԵՏՕ. Լաւ ես ասում, զաւակս, բայց մենք ի՞նչ ոյժ ունենք:

ԱՍԼԱՆ. (Վայրկեակարար կատարում և աչքերը փայրում և) Եթէ այնքան ոյժ չունենք, գոնէ քաջութիւն ունենանք մեր պատւի համար մեռնելու... էլ ի՞նչ օրի համար ենք ապրում, երբ խլում են մեր ձեռքից մեր պատի՛ւը, մեր ի՞նչքը, մեր կեանքը...:

ՊԵՏՕ. (Յուզում) Զաւակս, ես մահից չեմ վախենում... Թէև քիչ ձեռացել եմ, (բազուկը օդում պարզելով) բայց այս բազուկներս դեռ չեն թուլացել... Մահայն ի՞նչ օգուտ... մեր խկական նպատակին չենք հասնել...:

ԱՍԼԱՆ. Ես չգիտեմ, վերջապէս մի բան պիտի անել... ես ուխտել եմ կամ մեռնել և կամ Մարօյին ազատել... ինձ համար այս պատւի խնդիրը՝ մահու և կենաց խնդիր է:

ՊԵՏՕ. Ես պատրաստ եմ քեզ ընկերանալու. (Դրտում ոտնաձայններ. ոտի է կրկում և դեպի մուտքի ղուշը գնում):

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

Նոյնք, Այի Էֆեկոյի և Երկու զարբիաներ

ԱԼԻ ԷՖ. (Մուտքի դռնով խոժոռ դեմքով ներս է մտնում, յետևից Երկու զարբիաներ, ինքը առաջա-  
նում է բեմի առաջ, իսկ զարբիաները տակ Երկու  
կողմը անշարժ կանգնում են) Է... Պետո Աղա  
(հեզկերով), Խաչոյի հետ հաշտեցիր՝ որ խեղճ  
մարդուն այս օրին հասցնես... հա... հա...

ՊԵՏՕ. (Այսպիսով և շարժված) Անողները Աս-  
տուծմէ գտնան, Էֆեկոյի մեզ համար էլ անմա-  
րելի կրակ եղաւ... հարսանիք էինք անելու...  
այժմ մեր տունը սուգի տանի փոխեցաւ... Աս-  
տուած չարագործներին պատժի...

ԱԼԻ ԷՖ. Աստուած էլ կը պատժի, կառավարու-  
թիւնն էլ: Բանտում լաւ հարսանիք կ'անես (չա-  
րաձօնի ժպիտներ) Հա... հա... հա...

ՊԵՏՕ. (Լռու, Աստուծոյ վրայ տխուր մի հայեացք  
է ձգում):

ԱՍԼԱՆ. (Լռու, կատաղի աչքերով մեկ հօրն է  
նայում, մեկ պատից կախ տառ հրացանիկ):

ԱԼԻ ԷՖ. (Բարկացած) Հը... չես խօսում...  
Տասը տարի աշխատեցիր մարդուն փճացնելու...  
Երբոր չ'աջողեց՝ կեղծ հաշտութիւն գոյացրիր, որ-  
պէս զի հեշտութեամբ և առանց կասկածի մէջտեղից  
վերցնես... (Ատամները կ'արտերով) Այ անհաւատ...

ՊԵՏՕ. (Այի Էֆեկոյու ոտքերը ընկնելով) Աման  
Էֆեկոյի... խիղճ արէք, այդ Բնչ էք ասում...  
Խաչոյին երբօր պէս սիրում էի, անցեալը բոլո-  
րովին մոռացել էինք... մենք խնամիներ էինք...

ԱՍԼԱՆ. (Կանգնած տեղում կատարում և տառա-  
ներն է կ'արտացնում, կարծես ուզում է Այի Էֆեկ-  
ոյ վրայ նետել և կրակ պատարել): Հօրը դառնա-  
լով՝ սրտնեղած) Հայրիկ, Բնչու այդքան ստորա-  
նում ես...

ՊԵՏՕ. (Աղերսագիտ մի ակնարկ է ձգում Աստուծոյ  
վրայ):

ԱԼԻ ԷՖ. Գիտեմ... գիտեմ... բայց առ այժմ  
կասկածները քո վրայ են ծանրանում... եթէ ան-  
մեղ ես՝ դատարանում արդարացիր... այժմ օրէն-  
քով պէտք է ձերբակալես: (Չարբիաներին մա-  
տով ցոյց է տալիս Պետոյին) Այս մարդին ձերբա-  
կալեցէք և տարէք:

ՉԱՐԲԻԱՆԵՐ. (Մեկը Պետոյի մի րեկըր, միւր  
միւս րեկըր բռնելով՝ դեպի մուտքի դուռը քաշ են  
տալիս):

ԱՍԼԱՆ. (Կատարած նետում է զարբիաներից մեկի  
վրայ և րեկըր բռնում) Ո՛ւր էք տանում...

ՊԵՏՕ. (Հրամայական շեշտով) Ասում... զգոյշ  
կաց... մօրդ ու Մարոյիդ մտածիր... ես շուտով  
կ'ազատեմ...

ԱՍԼԱՆ. (Հօրը խօսքերից կարծես մագնիսացած,  
զայչած զազանի նման՝ բաց է բողկում զարբիայի  
րեկը):

ԱԼԻ ԷՖ. (Աստուծոյ ձիւղայիկ ծիծաղով) Հա...  
հա... հա, մի աճապարիւր, մի օր էլ դու կը  
տեսնես նրա գնալիք տեղը (մեկուսի, Պետոյի յե-  
տևից բռնեցրը ցոյց տալով) Անհաւատ... տասը  
ոսկիս կ'ուտես... ահա՛ այսպէս ծուղակս կ'ընկ-  
նես... փաստարանն այս անգամ էլ թո՛ղ քեզ  
ազատի... հարիւր ոսկիով ձեռքիցս հազիւ ա-  
զատուելու ես... (Առաջանում է դեպի մուտքի  
դուռը) այո՛, հարիւր ոսկի (Գնում է):

ՍԱԼԱՆ. (Այի էֆեկորո՛ւ յետեւից մի տխուր սկեսրկ ձգելով) Այս էր պակաս... պէտք էր տեղնուտեղը շանսատակ անէի գազանին... Ստրկօրէն տանել այս ամէնը. չէ՛... այս կեանք չէ՛... Բայց հայրս իրաւունք ունէր, Մարօյիս ո՛վ պիտի ազատէ (Կատարուրեամբ բռունցքը օրում ձօձերով և դեպի մտքի դռնը առաջանալով) Ես նրանց ցոյց կ'տամ (Գնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ .

Նազրու (Առանձին)

ՆԱԶՂՈՒ. (Գողկոցի ծայրերը աչքերին տարած՝ կողքի դնելով ներս է մտնում, և ըստ լիներով՝ առաջանում և ետև-դօշակի վրայ ընկնում: Մի քանի րոպէ հեծկրտագին ըստ շոշոռակերոց յետոյ՝ գողկոցի ծայրերը ըստ է ընդունում) Եթէ երկնքում Աստուած կայ... հապա մեր այս քաջածնեքը ի՞նչ է... չի՛ տեսնում... Այս մէկ օր չէ, երկո՛ւ օր չէ, մէկ տարի չէ, երկու տարի չէ՛, միշտ այս այսպէս է եղել, շարունակ հաշածանք, շարունակ զուլում... Սո՛ւտ է որ ասում են թէ միւս աշխարհքում դժոխք կայ... Մի՛թէ մարդիկ այնտեղ սրանից աւելի՛ պիտի տանջուին ու չարշարեն... Ուրիշ ազգերի համար չգիտեմ, բայց Հայի համար դժոխքը այս է՝ որ կայ... (Չօքի մատներով անկատն է սեղմում) Գլուխս ճարւեց... Օհ... ցաւիցը աչքերս դուս պիտի գայ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Է .

Նոյն և Սառա Խարուն

ՍԱՌԱ. (Տխուր. մուտքի դնելով ներս է մտնում և դեպի Նազրու առաջանալով) Բարեւ, Նազրու բաշի... (Նրա կողքին նստելով) Աստուած համբերութիւն տայ... (Նազրուի ձեռքը ձակատից ցած բերում և բռնած պահում է) Երեխայ՛ ես, ի՞նչ ես... խելքդ գլխիդ հաւարի՛ր... եթէ դու հիւանդանաս՝ երեխերքդ ո՛վ է պահելու...

ՆԱԶՂՈՒ. (Սառայի վրայ մի տխուր հայեացք ձրգելով) Է՛լ դիմանալու սիրտ չմնաց... ո՛հ, աչքերս դուրս են գալիս, գլուխս սաստիկ ցաւում է:

ՍԱՌԱ. Այդքան որ լաց լինիս՝ հարկաւ զուլիդ կը ցաւի. Պետո Ախպէրը կ'ազատի, իսկ դու դարդի տէր կը լինիս ու կը քաշես... Աստուծով այս էլ վերջինը կը լինի, սրանից յետոյ ուրախ օրեր կը վայելէք (Նազրուի ձեռքը ըստ է ընդունում):

ՆԱԶՂՈՒ. Եանի երկրիս երեսում ուրախութիւն սասած բանը կայ...

ՍԱՌԱ. Ինչո՞ւ չկայ... էգուց մարդդ կ'ազատի, դու էլ կ'ուրախանաս... մի քանի օրից Մարօյին կը բերին, ուրախ հարսանիք կ'անես...

ՆԱԶՂՈՒ. Ի՞նչպէս հեշտացնում ես ամէն բան... ո՛չ այդ ցաւերը հարկաւոր էին ինձ և ո՛չ էլ դրանց պատճառաւ լինելիք ուրախութիւնը...

ՍԱՌԱ. Ի՞նչ անենք, աշխարհի բանը այսպէս է. Աստուած դարդը տւած է՝ դարմանն էլ հետը, ցաւը տուած է՝ ուրախութիւնն էլ հետը. ո՛վ է իմանում, եթէ ցաւը չլինէր, ուրախութեան համե էլ իսկի չառնէինք...

ՆԱԶԼՈՒ. Է՛հ, տանելի ու մանր ցաւեր կան, թագաւորներն էլ ունին իրենց ցաւերը... բայց մերը անտանելի է... անտանելի՛...

ՍԱՌԱ. Մեծ ցաւերն էլ իրենց հետ մեծ ուրաւ թախուժիւն կը բերեն... Աստուած փաստաբանին օրեր տայ, քանի որ ան կայ՝ մարդդ շուտով կ'ազատի:

ՆԱԶԼՈՒ. Մենակ յոյսս նրա վրայ է:

ՍԱՌԱ. Դեհ, ուրեմն համբերի՛ր, մի՛ մտածիր, ե՛լ տանդ գործերը տես, զբաղէ՛ որ ցաւերդ մոռանաս (Ռոտի և կակոզուս):

ՆԱԶԼՈՒ. Վրաս ո՛յժ է մնացել որ աշխատիմ... երեխերբի շորերը պէտք է լուանալ, հաց պէտք է թխել: Ո՞վ պիտի անէ այս ամէնը: Աչքերս մ'իջնում են, զլուխս պտոյտ է գալիս, ոտերս գողզոջում են...

ՍԱՌԱ. (Նազրուի ձեռքիցը բռնելով՝ վեր և բարձրացնում) Ե՛լ, աշխատելով ոյժ կ'գայ, յետոյ ես կ'գամ քեզ օգնելու, շորերը՛ ես կը լուանամ, դու միւս բաները արա՛. առ այժմ մնաս բարով. (Մոռալի դռնով գնում է):

ՆԱԶԼՈՒ. (Վեր կեւարով) Գնանս բարով, շուտ ե՛կ, Սառա. (կողքի դռնով գնում է):

ՏԵՍԱՐԱՆ Ը.

Բժիշկ Վանեան, Յով. Էֆեկի և Նշան Պատուկի

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Փաստաբանի և Նշանի հետ մտաքի դռնով ներս մտնելով, դռնից խօսակցութիւնը շարունակում և երեքը միասին դեպի սեղանը առաջաւում են) Զարմանալի մարդիկ են այս թիւրքերը... ճրի դեղերը թողած՝ գնում են մի որ և է Հօ-

ջայի մօտ նուսխայ գրել տալու կամ հիւանդին մի որ և է սուրբի զերեզմանին ուխտի տանելու:

ՅՈՎ. ԷՖ. (Միասին դեպի սեղանը առաջաւում) Դիմողներ չեղան:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Ի՛նչպէս չէ... բոլոր դիմողները հակառակը լաւացան. բայց նոյն իսկ այդ փաստը չի ազդեց մնացած մեծամասնութեան վրայ:

ՆՇԱՆ. Որովհետեւ նրանք աւելի հաւատք ունեն որ և է նուսխայի կամ ուխտատեղոյ վրայ՝ քան թէ բժշկի դեղի վրայ:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Այժմ թողնենք այդ մի կողմ, խօսենք մեր կարելոր հարցի մասին...: Կարծես փոթորիկը մօտենում է. մեր գործելու տակալիկան փոխելու պէտք կայ (Նստում և սեղանի մօտ):

ՅՈՎ. ԷՖ. (Նստելով բժշկի մօտ) Կարծում եմ:

ՆՇԱՆ. (Նստելով նրանց դեմը) Կառավարութեան լրբութիւնը ծայր աստիճանին է հասել. Հային նկատում են ոչ թէ հպատակի, այլ գերու հաշուով:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Ճիշդ է, որ մեր կազմակերպութիւնը շատ մեծ գործեր է կատարել. առանց այդ կազմակերպւած ոյժի՝ հայ ժողովուրդը կուղուրաս պէս շատ յետ էր մնալու. այժմ գրեթէ բոլոր գիւղերում ունենք կարգին դպրոցներ, գրադարան, լսարան, կիրակնօրեայ դպրոցներ, երբեմն ներկայացումներ: Տնտեսական և երկրագործական գիտելիքները և գործիքները տարածւել և ընդհանրացել են. ժողովրդի տնտեսական վիճակը, նիստը ու կացը, վարքն ու բարքը դէպի լաւը փոխւել են: Դեռ ի՛նչ ասեմ... համայնական շտեմարանները և կօօպերատիւ ընկերութիւնները ամբողջ գաւառում հրաշքներ են գործում... ժողովուրդը գիտակցութեան է եկել... բայց... բայց ամենակարեւորը պակասում է:

ՅՈՎ. ԷՖ. (Ընդմիջերով) Այդ բոլոր բարիքները ազատ վայելումը...

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Ճիշտ, այդ է պակասում: Մենք ամէն բան անում ենք, բայց բռնակալ և անարգար ըէժիմը մի հարւածով քանդում է ամէն ինչ... այնպիսի մի վիճակ է ստեղծում՝ որ ժողովուրդը զրկում է այդ բարիքների վերջնական վայելումից: Հացը պատրաստում ենք, և ճիշտ պատար բերաննիս տարած ժամանակ խլում են մեր ձեռքից:

ՆՇԱՆ. Առաջները երբ գիւղական տարրը տգիտութեան խոր քնի մէջ էր, էլի մի կերպ տանում էր ամէն ստրկութիւն և հարստահարութիւն, համակերպում էր իր ճակատագրին...: Բայց այժմ քանի գիտակցութիւնը զարթնել է նրա մէջ, մանաւանդ երիտասարդ սերունդի մէջ, այլ ևս չէ կարողանում տանել որ և է ճնշում կամ բռնաբարում: Հինգ հարիւր տարւայ հանգչած հրաբուխը՝ այժմ սկսում է ուժեղ կերպով բորբոքել և կրակ ու բոց ժայթքել:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Եւ ոչ միայն այս գաւառի, այլ ամբողջ Տաճկահայաստանի համար այդ՝ այդպէս է...: Ամէն տեղ պակասում է կեանքի, գոյքի և պատւի ապահովութիւնը և ազատ վայելումը... հետևաբար հրաբխային այդ պոթիւկումը ընդհանուր է:

ՅՈՎ. ԷՖ. Այդ ցնցումն է՝ որ հիմնայատակ պիտի կործանէ բռնակալութեան խաբիսը շէնքը:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Պէտք է ներկայ ըէժիմը տապալել և նրա տեղ ստեղծել մի այնպիսի նոր ըէժիմ, որի շնորհիւ մարդ կարողանայ իր ճակտի քրտինքի հալալ արգիւնքը վայելել և պատիւը պաշտպանել:

ՅՈՎ. ԷՖ. Հենց մեր կազմակերպութիւնն էլ

այդ բանին է ձգտում... այժմ ինքնապաշտպանութեան հողի վրայ է գործում, բայց շուտով յարձակողական ակտիւ տակտիկայի կը հետևի:

ՆՇԱՆ. Այս դժոխային պայմանները անտանելի են. Հային սպանում է թուրքը՝ և ազատ ապրում, իսկ նրա տեղ իբրև մարդասպան՝ դարձեալ Հային են բանտարկում ու պատժում. անարդարութեան և անիրաւութեան այսպիսի քստմնելի օրինակներ պատմութեան մէջ հազիւ պատահենք:

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Թ.

### Նոյնք և Ասլան

ԱՍԼԱՆ. (Մուտքի դռով ներս է մտնում) Գիւղումը չէր, արտումը տեսայ, դրա համար էլ ուշացի:

ՅՈՎ. ԷՖ. Ի՞նչ պատասխանեց:

ԱՍԼԱՆ. Ասաց՝ որ եթէ իրեն դատարան հրաւիրեն, պատրաստ է տեսածը պատմելու:

ՅՈՎ. ԷՖ. Ի՞նչպէս:

ԱՍԼԱՆ. Պիտի վկայի թէ ինքը արտը ջրած ժամանակ՝ տեսաւ Հիւսէյին Բէգի մարդկանց՝ Մարոյին փախցնելիս:

ՅՈՎ. ԷՖ. (Ոչրախ) վկայների թիւը հինգի բարձրացաւ, երեք հայ և երկու թուրք: Այս վկայութիւնները ջախջախիչ փաստեր են Պետոյի անմեղութիւնը հաստատելու և Հիւսէյին Բէգի մարդկանց բանտարկել տալու:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Ոտի կրկերով՝ Ասլանի ուսն է քակում) Հայրդ շուտով կ'ազատւի, սառնասիրտ եղի՛ր:

ԱՍԼԱՆ. Հաւատում եմ, բայց Մարոյիս ո՞վ պիտի ազատէ...

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Դուն և մենք բոլորս... (Ձեռքը քաշում է Աւրանի ուսից):

ԱՍԼԱՆ. Ես պատրաստ եմ նրա համար կեանքս զոհելու... առանց նրան՝ այս կեանքը ինձ հարամ է. (աչքերը արտասուքով լցում ևև, ձեռքովը շարացնում է աչքերը):

ՆՇԱՆ. (Ոտի կլկերով՝ Աւրանի ուսն ծնծում) Աւլան... արտասուքը տղամարդին չէ սազո՞ւմ...

ՅՈՎ. ԷՖ. (Ոտի կլկերով) Թո՞ղ հովաքնի այրած սիրտը: Զգացմունքների փափկութիւնը՝ միայն կանացի սեփականութիւն չէ. զգայուն սրտերը միշտ տրամադիր են յուզելու և արտասուելու: Աւլանը որքան էլ քաջ է, բայց ունի մի զգայուն սիրտ, մանաւանդ սիրող մի սիրտ... Գնանք (Աւրանի ձեռքը սեղմելով) Մնաս բարով... անհոգ կ'աց, մի քանի օրից յետոյ հայրդ կ'ազատուի, նրանից յետոյ Մարոյի մասին կը մտածենք: (Մուտքի դռնով գնում է):

ՆՇԱՆ. (Աւրանի ձեռքը սեղմելով) Մնաս բարով... (գնում է փաստաւարանի յետևից):

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Աւրանի ձեռքը քօրշերով) Մնաս բարով (քննիծարով) Միամիտ կ'աց, շուտով հարսանիքդ կ'անենք, նշանդրէքիդ ես ներկայ չեղայ, բայց հարսանիքիդ անպատճառ ներկայ կը լինիմ...

ԱՍԼԱՆ. (Միևէկ դուռը կրակնց հետևելով) Գնանք բարով:

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ.

Աւրան (Առանձին)

ԱՍԼԱՆ. (Բեւի առաջ գարով) Երեքն էլ միմիանցից լաւ: Այ գաղափարի մարդիկ... Թողել են մայրաքաղաքի քնքոյշ կեանքը, մտել են գաւառի այս խուլ անկիւնները... տառապում են մեր ցաւերով, ուրախանում են մեր ուրախութիւնով: Հիանում եմ նրանց անձնւիրութեան վրայ և իմ ցաւերս մոռանում: (Քիչ բռն, յետոյ տխուր նաւաւում է) Այս Մարոս... հրեշտակա, արդեօք որքան տառապում ես զազանների այդ որջում... քեզ չեմ թողնի վայրենիների ձեռքում... (Դեպի կողքի դուռը առաջանալով) Այս զազանների երկրում իրաւունքը հրացանի ծայրին է... (ղրկում է):

(Բեւի վրայ մի րույկ տակաշորիւն է. վարաւ գոյրը իջնում և քարձրանում է):

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ա.

Աւրան, յետոյ՝ Յով. Էֆեկոյի, Պետո և Նազոռ

ԴՐՍԻՑ ՉԱՅՆԵՐ. (Բեւի վրայ տակաշորիւն և լուռաշորիւն է, դրտում ոտնաձայններ և քարեմուտքորիւններ) Անցած լինի... աչքդ լոյս...

ԱՍԼԱՆ. (Կողքի դռնով շուտ դուռը գարով՝ ուղղում է դեպի մուտքի դուռը՝ զարմացած) Այս էնչ ձայներ են... (Դուռը բաց է սկսում և դուռը դի-

տուն, ոչրախ) Բահ... մերոնք են... (Շտապ կողքի դռնն է վազում և կես բաց անկրով՝ բարձրում) Մայրիկ... շուտ եկ... հայրիկին բերին (Նորից վազում է դեպի մուտքի դռնը, որի առաջ արդեն կրկնում է Յով. Էֆեկոյի):

ՅՈՎ. Էֆ. (Ժպտապիւմ ներս մտնելով) Աւլան, ահա հայրդ. (ցոյց է տալիս իր յետևից ներս մտնող Պետոյիկ):

ՍՍԼԱՆ. (Հորը վիզը փարսքշելով համբոշտում է) Հայրիկ...

ՊԵՏՕ. (Ասլանիկ համբոշտելով) Չաւակա...

ՍՍԼԱՆ. (Յով. Էֆեկոյուն) Շատ երախտապարտ ենք ձեզ...

ՅՈՎ. Էֆ. Պարտականութիւնը կատարողի հանդէպ շնորհակալութիւնը անելորդ շոյալութիւն է:

ՆԱԶԼՈՒ. (Կողքի դռնով շտապ և յուզած ներս է մտնում: Գոգնոցի վրայ սպիտակ և ալիշրտ մի կրծկալ է կապած, րևերը վեր սորտած և ձեռքերը ալիշրտով սպիտակացած են: Խոնյն կետում է փաւտաքանի վիզը և ձակատը համբոշտում: Փաստաքանի սև շորերը Նագրուի ձեռքերի և կրծկալի ալիշրից սպիտականում են) Արեւի դեռնիմ, զաւակա... մեր փրկիչը եղա՛ր... Աստուած սրտիդ մուրատը տա՛յ...

ՍՍԼԱՆ. (Նագրուի րևիցը բռնելով մի կողմ է բաշում) Մայրիկ, խելքդ գլուխդ հաւաքիր... Էֆէնդու շորերը աղտոտեցիր...

ՆԱԶԼՈՒ. (Յետ է բաշում և սպշած դիտում է փաստաքանի ալիշրտած շորերը) Ախ... մի՛ մեղադրէք ինձ... Թոնիլի տակից խենթի նման վազեցի. (Սկսում է ձեռքերով փաստաքանի շորերը րափ տալ) Ների՛ր, զաւակա...

ՅՈՎ. Էֆ. (Տեսնելով որ շորերը աւելի են կեղտոտում և Նագրուն ոչրախոշորիւնից շշուած այդ բանը

չէ նկատում, յետ է բաշում և ինքն է րափ տալիս) Հոգ չէ, մայրիկ, ես ինքս կը մաքրեմ:

ՆԱԶԼՈՒ. (Պետոյիկն մտնելուով՝ գոշգոշարալի մի ակնարկ է ձգում նրա վրայ) Քեզ շատ նեղացրի՛ն...

ՊԵՏՕ. Չէ, լաւ էին պահում, միայն Ալի Էֆէնդին շուտ շուտ մօտս մարդ էր ուղարկում և ինձ ազատելու համար հարիւր ոսկի պահանջում... բայց Յով. Էֆէնդու շնորհիւ մի փարա չ'տուեցի...

ՆԱԶԼՈՒ. (Յով. Էֆեկոյուն դառնալով) Ես քո հոգուն մատա՛ղ... Քրդերի բանտարկելիւ ճի՛շդ է...

ՅՈՎ. Էֆ. Հա՛, մայրիկ, ճիշդ է, մի քանիսին բանտարկել տուեցի, հերթը Հիւսէյին Բէգին է գալիս, առ այժմ խոշոր կաշառքներով ազատում է, բաց ես նրա օձիքը բաց չեմ թողնելու...

ՆԱԶԼՈՒ. Ախ, մի անգամ այդ օձի գլուխը տրորէ՛ր, ամբողջ գաւառը կը հանգստանար... (բոլորիկն) Նստեցէ՛ք, ձեզի թագա լաւաշ բերեմ կերէ՛ք. (Կողքի դռնով գնում է, միշտ ներս սեղանի շուրջը նստում են):

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

Նոյնը, առանց Նագրուի

ՍՍԼԱՆ. (Յով. Էֆեկոյուն) Մի մեծ յաղթանակ տարիր. մինչև այսօր մեր կողմերում բնաւ լուած ու տեսնած չէր՝ որ հայի համար քրդին բանտարկեն...

ՅՈՎ. Էֆ. Որովհետև օրէնքը հասկացողներ չկային, անիրաւ պաշտօնեաները ուզածնուն պէս վարւում էին... Դեռ անելին պէտք է անեմ... Թէև Հիւսէյին Բէգը մարդասպանների հետ չէ

եղել, բայց քանի որ մարդասպանները իր մարդիկն են և Մարօն իր մօտն է պահում, օրէնքով չարագործներին մեղսակից է, նոյն իսկ հրամայողը: Անկասկած ես նրան էլ բանտարկել կ'տամ:

ԱՍԼԱՆ. Աւելի պիտի կատարին և վրէժխնդիր լինին...

ՅՈՎ. ԷՖ. Առանց դրան էլ արդէն ինչ որ ձեռներիցը գալիս է՝ անում են: Այժմ ժամանակը հասել է՝ որ Հայն էլ դրանց փոխարինէ, մինչև որ նրանք էլ գիտակցութեան գան և կառավարութեան ձեռքին կոյր գործիք դառնալուց դադարին: Մի օր պիտի գայ՝ որ նրանք էլ պիտի իմանան չարն ու բարին, և միանան մեզ և բոլոր ճնշածների հետ՝ տապալելու համար բռնակալ բէժիմի ժանգոտած շղթաները... որովհետև ֆուրք ժողովուրդն էլ՝ պէտք է խոստովանիլ՝ Հայու չափ և գուցէ աւելի ճնշում և հարստահարում է իր բէզերից...

ՊԵՏՕ. Ծատ ճիշդ է. հասարակ ֆուրք ժողովուրդը Հայից աւելի ստրուկ է. ինչ որ աշխատում է՝ բէզի համար է, հագիւ ուտելու մի չոր հաց է գտնում:

ԱՍԼԱՆ. Բայց դարձեալ հնազանդում է իր բէզերին, և հարստահարում խաղաղ Հայ ժողովրդին:

ՅՈՎ. ԷՖ. Եթէ Հայը ցոյց չտայ իր կենսական ոյժը, եթէ ոչխարի նման իր վիզը դնէ բուժֆանատիկոսութեամբ կուրացած քրդի ու թրքի եաթաղանի տակ... երկրի երեսից կը ջնջւի: Հայը գոյութեան կռուում միշտ ունեցել է իր ներքին անխորտակելի ոյժը, և դրա շնորհիւ ազատել է բնաջնջումից և լուր պատմական մի անուն դառնալուց...

ՊԵՏՕ. Բայց ինչպէս ցոյց պէտք է տայ իր այդ ոյժը...

ՅՈՎ. ԷՖ. Արդէն ամբողջ Տաճկահայաստանում ժողովրդական ամենալայն մուսանները յեղափոխական դրօշակի տակ կազմակերպւում են. քանի որ ժողովուրդը իր սեփական ոյժերի վրայ վստահութիւն ունի և համոզւած է՝ որ ինքը անպարտելի է, պէտք է անմիջապէս գործի անցնի, շանթահարէ կեղեքիչ պաշտօնեաներին և աւազակաբարոյ բուրդ բէգերին, ցնդէ վատթար բէժիմի հիւքերը և նրանց փլատակների վրայ կանգնէ ազատութեան շէնքը: Ժողովրդի կազմակերպւած ոյժը ամէն տեղ յաղթող է հանդիսացել. թէև երբեմն իր առաջխաղացութիւնը կասել է, բայց երբեք չէ ընկճւել, այլ վերջապէս իր նպատակին հասել է...

ԱՍԼԱՆ. Հենց մենք այդ ճանապարհով պէտք է գնանք Մարօյին ազատելու համար...

ՅՈՎ. ԷՖ. Այդ մասին արդէն մի ծրագիր պատ... (խօսքը կիսատ է մնում, դրսից եկեղեցու զանգակի ձայնն է լսուում, որը ակնկարատ շարունակում է: Զարմացած ակակն է դնում) Այս անժամանակ զանգակահարութիւնը ինչ է նշանակում (Ոտի է կրկնում):

ՊԵՏՕ. (Զանգակահարուրդի շարունակում է, ոտի կրկնով՝ ակակն է դնում) Արտասովոր մի բան պատահած է անշուշտ...

ԱՍԼԱՆ. (Ոտի կրկնով՝ դեպի մուտքի դռնն է առաջանում. զանգակահարուրդի շարունակում է):

ՅՈՎ. ԷՖ. (Դեպի դռնը առաջանալով) Գնանք, տեսնենք ինչ կայ... (Նոյն միջոցիկ դռնը դրսից բացում է):

Ամբողջ միջոցիկ նույն կերպ կրկնում է ՊԵՏՕ... Գնանք (նույնի է նույն կերպ կրկնում) ԱՍԼԱՆ

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Գ .

Նոյնը և Նշան

ՆՇԱՆ. (Չիւնած, շնչապատ, մուտքի դռնով ներս է մտնում և դրան մէջ բարձրաձայն) Քրդերը զիւղը կոխեցին... (Առաջանում է և յոգնարեկ նստում արտախ վրայ, հրացանը անշքիկ սրահած) Ասում են՝ որ Հիւսէյին բէգն էլ նրանց մէջն է...

ՊԵՏՕ. Ի՞նչ ես ասում...

ՅՈՎ. ԷՖ. (Բարկացած) Շանը գլխին գալիք կայ... կատաղել է... թո՛ղ գայ... մենք նրան շուտով ցոյց կ'տանք թէ այսօրւայ Հայը իր իմացած առաջւայ վախկոտ Հայը չէ...

ՆՇԱՆ. (Հեարով) Երբ որ լուրը իմացայ... իսկոյն եկեղեցու զանգաղները խփել տեցի... Ժողովուրդը խռնեց... հրամայեցի որ զէնքը առնողը դիրքերը բռնէ և արգիլէ Քրդերին զիւղին մօտենալ... արդէն գնում են... (Թաշկիւնակով անտի քրտիկըն է սրբում, շնչառարիւնը հանդարտում է):

ՊԵՏՕ. Շատ լաւ ես արել:

ՆՇԱՆ. (Բոյրովիկ հանդարտաւ) Քրդերի բանտարկութիւնը և Պետօ Ախպէր ազատուիլը նրանց կատաղեցրել է. Հիւսէյին բէգը սպառնացել է՝ որ մի հատ Հայի ողջ չէ թողնելու...

ՅՈՎ. ԷՖ. Կը տեսնենք... գնամ զէնքերս վերցրնեմ. (Առաջանում է դեպի դռնը):

ՊԵՏՕ. (Կողքի դռնով գնում և խփոյն վերադարձնում է զիւնած) Գնանք...

ԱՍԼԱՆ. (Պատից կախ տաւ հրացանը վերցնում

և փանդիտակալը կատրւմ, դեպի դռնը առաջանալով) Այսօր Մարոյիս վրէժը կը լուծեն...

(Բոյրը էլ մուտքի դռնով հեռանում են, սրահը մի քանի րոպէ դատարկ է մնում, դրսից հրացանաձողորեան ասյներ են գայիս):

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Գ .

Նազու (Առանձին)

ՆԱԶԱՆ. (Չեքիկ թանած երկու պնակ՝ հաց ու պանիրով, ուրախ՝ կողքի դռնով ներս է մտնում, և դրան շէմից սկսելով՝ խօսում է) Թագա հացով պանիրը համով կը լինի... (Մտնելում է սեղանին, ուզում է սեղանի վրայ դնել պնակները, բայց չէ դնում, այլ սպառ մնում է մի քանի րոպէ, նոր նկատելով՝ որ ոչ ոք չկայ: Դրսից հրացանաձողորեան ասյներ: Պնակները սեղանի վրայ դնելով՝ սկսում է երկու անշքերով ծռակները բակել) Վայ... էլի մի զժբաղղութիւն... (Արտատում է. Դրսում հրացանի ասյներ) Ես ի՞նչ յիմարն եմ... Պետոյի ազատութեան ուրախութիւնից շմուկել եմ... ոչինչ չեմ հասկացել (Դեպի մուտքի դռն է վազում, բայց դրան առաջ՝ անշքը անտիկ տակելով) Վայ... (Յուշարտախ ցած է ընկնում: Բեւի վրայ մի քանի րոպէ լռարիւն է, միայն դրսից հրացանի ասյները շարունակում են, առելի հեռուից):

## Տ Ե Ս Ս Բ Ա Ն Ժ Ե .

Նոյն և Սառս

ՍՍ.ՈՍ. (Մուտքի դռնով ներս է մտնում, և Նազրուին զեռին փռած տեսնելով՝ ծռռում է դեպի նրան և անքրիցը շնչելով) Այս ի՞նչ վիճակ է... (Նազրուին շարժելով) Վեր կաց, յիմար... Քրդերին այնպես կոտորեցին... այնպես կոտորեցին... որ մէկ էլ դալաթ կ'անեն գիւղին մօտենալու...

ՆԱԶԼՈՒ. (Սրահիւղով՝ ուրբերը յառում է Սառսային) Աչքերս մթնում են...

ՍՍ.ՈՍ. (Նազրուի րեկը շնչելով՝ վեր է հանում) Մի վախենար... բան չկայ (տանում է ետև-դռնակի վրայ, ինքն էլ նրա կողքին նստում) Շներին մի ջարդ տեցին... մի ջարդ տեցին... որ... քուրդը բանի քուրդ էր եղել, այդպես բան չէր տեսել...

(Գրտում շատ հեռուից ուղղակի մի կրգի խոշոճայն է հանում, կրքեմ էլ հատ հատ հրացանի ձայնը եւ շռում):

## Տ Ե Ս Ս Բ Ա Ն Ժ Զ .

Նոյնը և Գասպար

ԳԱՍՊԱՐ. (Մեքիկ փանիշուսից կացած և անքրի հրացանի իրքև անհատապառ յեկած, մուտքի դռնով ներս է մտնում և ծանր առաջանում դեպի սեղանը) Բարև՛ ձեզ... մի քրդի սպանելու չափ՝ աչքումս

լոյս մնացել է (Նստում է արուի վրայ յողնաթևի): Նազրու քուրդի, երկու աչքալուսանք... Պետոն ազատեց, Քրդերն էլ խօ՞ իրենց դասը առին... երբ լսեցի Քրդերի գալը... հրացանս վերցրի և գիւղի գլխին դիրք բռնեցի... թըրթիկ... քրդի մէկը գլուխեց... տղերքը բռնեցին նրանց, ափսոս... որ ոտերումս ոյժ չկայ... աւելի հեռու չըկարողացայ գնալ... (Հրացանը ցած է դնում, գրպանից քրահոտի տուփը նսնելով՝ քաշում է և Սառսային էլ տալիս):

ՍՍ.ՈՍ. (Քրահոտից քաշում է և մի քանի սև գամ փռչում):

ՆԱԶԼՈՒ. (Տխոշր) Ախ... զաւակս, մարդս ի՞նչ եղաւ... (Սրտաստում է):

ՍՍ.ՈՍ. (Նազրուի րեկ րեկն ցնցելով) Յուզը վըրադ բեր... ի՞նչ յիմարն ես... ասածներս չե՞ս լսում... մերոնցից մէկի քիթը չ'արխնեց... կտրից պարզ տեսնում էի:

ՆԱԶԼՈՒ. (Քիչ ուրախ) Մի մեղադրեր, յուշս վրաս չէր... բարի լուր ես տալիս... բերանդ պաչեմ...

ԳԱՍՊԱՐ. Հապա երբ ես խօսում էի՞ դու չէի՞ր լսում... էս տարիքի մարդ գնդակ էլ արծակել եմ... է՛հ, տասը տարի կայ՝ որ հրացան ձեռք չեմ առել... (ցոյց տալով հրացանը) Տես, ի՞նչ լաւն է. Մարտինի՛ է... Մարտինի՛...

ՆԱԶԼՈՒ. Խեղձերը բերաննին մի բան էլ չըղբեցին...

ԳԱՍՊԱՐ. Հիմի աւելի լաւ քէյֆ կ'անեն. (Հառից ու պանիրից մի պատաս թերսն է դնում):

ՆԱԶԼՈՒ. (Սառսային) Հրամէ՛, թազա հացից կեր...

ՍՍ.ՈՍ. Շնորհակալ եմ. (Մի պատաս ուտում է

և վեր կենում) Մնաս բարով, քուրիկ, մնաս բարով, Գասպար Ամի. (Ոչոքով է առաջանալ):

ԳԱՍՊԱՐ. Ես էլ եմ գնալու... (Ոտի է կրնում) Մնաս բարով, Նազուր քուրիկ... (Նոյնպես առաջանում է):

ՆԱԶԱՐԱ. (Ոտի է կրնում) Մի քիչ էլ նստելիք, մինչև մերոնք վերադառնային...

ՍԱՌԱ. Նորից կ'գամ, հիմայ գնամ տեսնեմ Մինասենց հարսին, ծանր է ասում են. (հետաշուշում է):

ՆԱԶԱՐԱ. Աստուած բժշկութիւն տայ:

ԳԱՍՊԱՐ. Յոգնել եմ, գնամ հանգստանամ. (մուտքի դռնով գնում է):

ՍԱՌԱ. Բժիշկը վերադարձել էր, յոյս էր տալիս (գնում է):

ՆԱԶԱՐԱ. Գնաք բարով. (կողքի դռնով գնում է): (Բեմի վրայ լռորիւն է. դրսից ռազմական երգեր և նշարաներ լսուում են, քանի գնում՝ ասյները մտնում են):

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Է .

### Նազուր (Առանձին)

ՆԱԶԱՐԱ. (Ոչրախ՝ կողքի դռնով ներս է մտնում, ներքին բռնած գիւնոշ շիշերը և բաժակները սեղանի վրայ շարերով) Ահա գալիս են, թող մի լաւ քէյֆ անեն... յոգնած ու անօթի են... սեղանը արդէն կէս պատրաստ է, գնամ կերակուր էլ բերեմ... (Գնում է):

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ը .

ԲԺ. Վանեան, Յոյ. Լ. ֆիկերի, Պետո,  
Նշան և Ասլան  
բոլորն էլ զիւրած ներս են մտնում մուտքի դռնով

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Հրացանը մի անկիւն դնելով՝ նստում է սեղանի մօտ) Մեր այսօրւայ կռիւը ցոյց է տալիս՝ որ Հայը հինգ հարիւր տարւայ ստրկութեան մէջ իր մարտական ոյժը չէ կորցրել... Պէտք է աւելի մեծ կոիւնների համար պատրաստուենք... որովհետեւ մի փոքր քիւրդ աշիրաթին պատժելը դեռ ևս չէ նշանակում ստրկական շրջութանների փշրումը... բանակալութեան ջնջումը...

ՅՈՎ. ԷՅ. (Հրացանը մի անկիւն է դնում, և փանփշտակալը՝ հանելով՝ պատից կախ տալիս, նրստում է քժշկի դեմը) Ամբողջ ժողովուրդը զրկւած մարդկային ամենատարրական իրաւունքներից՝ հեծում է այդ ստրկական շղթաների տակ... ամէն կողմ տիրում է ճնշում ու հալածում, թալան ու կոտորած, բանտ ու կախաղան: Տակաւին շատ ճակատամարտներ պէտք է մղենք, շատ զոհեր տուժեանք: Մասնակի անյաջողութիւնները չպէտք է մեզ յուսահատեցնեն, մեր աչքերը պէտք է յարին դէպի ապագան... ես համոզւած եմ որ արդարութիւնը՝ հետեաբար ոյժը՝ մեր կողմն է:

ՊԵՏՕ. (Հրացանը և փանփշտակալը պատից կախ տալով՝ միշտներին հրաշիրում է սեղան, և ինքն էլ նստում փաստաբանի կողքին) Նստենք մի քիչ քէյֆ անենք:

ՆՇԱՆ. (Հրացանը միւս հրացանների մօտ դնելով՝ բռնի մօտ նստում է):

ԱՍԼԱՆ. (Յոզևարեկ և տխրադիմ՝ ծակը առաջուկում է, և փանկիշտակալն ու հրացանը պատից կախ տարով՝ նստում է հօրը կողքին):

ՊԵՏՕ. (Գիկուշ բաժակները լցնելով՝ վերցնում է) Վերցրէ՛ք ձեր բաժակները. (Բարորդ վերցնում ևև իրենց բաժակները) Տօնե՛նք մեր այսօրւայ յաղթանակը և մաղթենք նորահոր յաղթանակներ... կեցցէ՛ կռիւք. (բաժակները միմեանց ևև խփում):

ԲՈՒՈՐԸ. (Գոռում ևև) Կեցցէ՛... կեցցէ՛... կեցցէ՛... (միայն Ասլան ոգևորւած չէ, ստուն կերպով է մտանկցում: Կեր ու խուճի շարունակում է և ոմակը միմեանց հետ յառ խօսակցում ևև):

ՅՈՎ. ԷՖ. (Ոգևորւած, բաժակը ձեռքին ոտի է կանգնում) Ը՛նկերներ... Մենք պարտաւոր ենք անձնւիրութեան այսպիսի կենդանի օրինակներով և անձնական զոհողութիւններով սրբագործել խօսքը, գաղափարը... Առանց գործի խօսքը՝ կը մնայ մեռած տառ... մեր դրօշակի նշանաբանը պէտք է լինի՝ մահ կամ ազատութիւն... խմում եմ այս բաժակը ազատութեան բոլոր մարդիկների կենացը. (խմում և նստում է):

ԲՈՒՈՐԸ. (Բաժակները պարպելով) Կեցցէ՛... կեցցցէ՛... կեցցցէ՛...

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Բաժակը վերցնելով՝ ոտի է կանգնում) Այս բաժակը պիտի խմեմ Նշան պատուելու կենացը, որը սուրբ գործի նախակարապետը եղած է այս շրջանում... (Գիկուշ բաժակը Նշանի բաժակին կցցնելով՝ խմում է. միշտները կոյնպես):

ԲՈՒՈՐԸ. Կեցցէ՛... կեցցցէ՛... կեցցցէ՛... Կեցցցէ՛...

ՆՇԱՆ. (Ոգևորւած, բաժակը վերցնում և ոտի է կանգնում) Ը՛նկերներ... Թրքական վատթար բէ-

ժամի բռնակալական լուծը ծանրանում է հաւասարապէս բոլոր հպատակ ազգերի վզին, առանց ցեղի և կրօնի խտրութեան... Ստրկական շղթաների տխրագոյնի շառաչիւնը լայնածաւալ պետտութեան մէկ ծայրից միւսը արձագանգ է տալիս... Մեր այսօրւայ յաջողութիւնը՝ աւելի ինձ տխրեցնում է. ներքնապէս ցաւում եմ, մտածելով՝ որ փոխանակ մեր հրացանները բռնակալութեան դէմ ուղղելու, ակամայ և ստիպւած ուղղում ենք մեզ նման հարստահարւած ու ճնշւած մի ժողովուրդի դէմ... Եթէ այսօր թուրք ու Բուրդ ժողովուրդը իր խոր տգիտութեամբ և կոյր մոլեռանդութեամբ՝ բռնակալութեան ձեռքում գործիք է դառնում և մեզ վնասում... սակայն պիտի գայ մի օր՝ որ նրանք էլ զիտակցութեան են գալու և ձանաչելու հասարակութեան ընդհանուր թշնամին... Ուրեմն, մեր վրայ աւագ պարտականութիւն է ծանրանում՝ նրանց միտքը լուսաւորելու, աչքերը բաց անելու, որպէս զի մեզ հետ միացած՝ սպաս բերեն իրենց մարտական ոյժը թուրքիոյ ընդհանուր բարեկարգութեան համար: Ուստի, ես այս բաժակը պիտի խմեմ յանուն թուրքիոյ բոլոր ճնշւած տարրերի համերաշխութեան. (խմում և նստում է):

ԲՈՒՈՐԸ. (Բացի Ասլանից, որը ընկնւած և մարած աչքերով յառ մնում է արուսի վրայ) Հուրբա՛... հուրբա՛:

ՅՈՎ. ԷՖ. (Ասլանի այս դրոշմները նկատելով, կատակարար) Երեւի մինչև Մարտը չազատւի՝ Գրբը դին համերաշխութեան ձեռք չես պարզելու...

ԱՍԼԱՆ. (Մարած ձայնով) Չէ՛, ոտերումս ոյժ չկայ, չգիտեմ ի՛նչ է պատահել ինձ...

ՊԵՏՕ. (Առանց ուշադրութիւն դարձնելու) Մինչև

այդ համերաշխութիւնը՝ դարձեալ մենք պէտք է մնանք ինքնապաշտպանութեան հողի վրայ և պատժենք միեւնոյն ժամանակ մանր բռնակալներին. օրինակ՝ Հիւսէյին Բէգի նման չարագործին անպատիժ թողնելը՝ ոճիրը քաջալերել կը նշանակէ:

ՆՇԱՆ. Խօսքս գազան բէգերի, հարստահարիչ պաշտօնեաների համար չէ, այլ այն հասարակ ժողովրդի համար, որը նոյնպէս կեղեքում ու տանջում է այդ բէգերի ու աղաների ձեռքում: Մեզ համար հաւասարապէս ատելի պէտք է լինին բէգն ու փաշան, աղան ու պաշտօնեան, վաշխառուն ու զարթիան, լինին թուրք, քուրդ կամ հայ... Բոլորն էլ ճնշում, կեղեքում, անպատում և հարստահարում են խեղճ աշխատող դասակարգին, արտադրող ժողովրդին:

ԱՍԼԱՆ. (Աչքերը փակում և նստած արտախփալ րկրում է, յետոյ արտախփալ գետիկէ և զրտրում անգրայ):

ԲՈԼՈՐԸ. (Ասրակի ընկերոջ ձայնից տարսփած՝ ոտի ևն ցատկում և նաւարում Ասրակի շորջը):

ՊԵՏՕ. (Ասրակի գլխի վերեւ չոզերով՝ կրս ձախտն է բռնում, յոզած և սրտադրով) Ի՞նչ է պատահել բեզ...:

ԱՍԼԱՆ. (Աչքերը փակած՝ լռել է մնում):

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Ուշադրութեամբ Ասրակի աչքերը և բազկերակը զննելով) Շո՛ւտ... քիչ ջուր... ուշաթափել է...:

ՆՇԱՆ. (Յոզգամ՝ գետիկը ցոյց տարով) Ա՛յ... աբեան հեաքեր... վերաւորւած է:

ՊԵՏՕ. (Ասրակի վրայ ընկնելով և ձախտը համբոշելով՝ լաց է շինում) Վախ զաւակս...:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Ասրակի շորերը լաց անում և ազդրի մասը ցոյց տալիս է) Ա՛յ... գնդակը այս-

տեղից է մտել, դուրս չէ եկել, շատ արիւն կորցրնելու պատճառով է յուշաթափել...:

ՅՈՎ. ԷՖ. (Ուշադիր վերքը դիտելով՝ բժշկին) Ի՞նչպէս է, վտանգաւոր չէ...:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Ան՛վտաս է երևում...:

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Թ.

### Նոյնը և Նազրու

ՆԱԶԼՈՒ. (Կողքի դռնով ուրախ կերս է մտնում՝ ձեռքիկ բռնած մի պեակ կերակուրով. կրք կկատում է Ասրակի դիրքը և բժշկին վերքը քննելը, խորյն յոզում և պեակը ձեռքից բաց է բողբում, որը շղիրտարով կտարում է և կերակուրը չորս կողմ տարածում: Գոռարով Ասրակի վրայ է ընկնում) Արի՛ւն... բէ՛ մեռնեմ... (նեղկաւում է):

### ԵՐՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Պետոյի նոյն հիւրասենեակը: Գիշեր է, սեղանի վրայ վառուով է նաւթի հասարակ մի լամպ: Վարագոյրը բացւելիս՝ սեղանի մօտ նստած է Պետօն, մի ոտը միւսի վերայ անցրած, աջ ձեռքում բռնած է նարգիլէյի երկայն խողովակը և արմուկը կռթնցրած սեղանին, իսկ միւս ձեռքը կշտին է դրած: Ոտքերին տրեխ, կրծքի վրայ խաչածև և մէջքի վրայ երկու շար փամփշտակալներ կապած՝ նարգիլէն քաշում է, ծուխը ուժով դուրս տալով: Մտքերի մէջ խորասուզւած է: Սեղանի միւս կողմը հագլուն տխուր նստած՝ գուլպայ է հիւսում: Ասլան բեմի առաջ, հագլուի կողմը գետնին նստած՝ հրացանն է մաքրում և ուրախ տրամադրութեան տակ երգում է «Տնօր ձեռքդ եղբայր, ժամ է շարժելու» երգը, Պետոյի նման փամփշտակալներ կապած և ոտին տրեխ հագած է: Գեռ վարագոյրը չբացւած՝ երգից մի տուն երգում է:

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

Պետօ, Կապուռ և Ասլան

ԱՍԼԱՆ. (Վարագոյրը բացելուց յետոյ) ել շարունակում է երգել եոյն երգը և միւս կողմից մաքրել գեկը: Երկու տուն երգելուց յետոյ՝ գրուխը վեր է բարձրացնում և հանդիսականներին դառնում: (Մեկուսի) Մենք Հայերս այս զէնքի արժէքը շատ ուշ իմացանք: Երանի չէ՞ր որ եօթանամական թւականներին Հայը այսօրւայ նման կազմակերպւած լինէր... գուցէ Բուլղարների ու Սերբերի նման ազատւած լինէր բռնակալութեան խայտառակ լու-

ծից. (հրացանի մաքրելը շարունակելով հառաչում է) Ախ Մարօս... էգուց դու այն տանը կը լինես... այն հրացանը (հրացանը կրկու ձեռքով բարձրացնելով ցոյց է տալիս) կամ ինձ մահ, կամ բեզ ազատութիւն կ'տայ... (հրացանի խորովակը լամպի յայտնի է ուղղում, և ձախ աչքը փակելով՝ աջով դիտում է խորովակի մեջը) Հայելու նման փայլում է... (հօրը ուղղելով) Հայրիկ, քոնը պատրաստ է: (Ոտքի է ելնում և հրացանը սեղանի վրայ Պետոյի առաջ դնելով՝ գալիս է պատից կախ տւած հրացանը վերցնում և նստում գեանի վրայ: Մեկուսի) Իմ հրացանը արդէն նոր եմ մաքրել, մի քիչ իւզոտեմ (Սկսում է հրացանն իւրտել):

ՆԱԶԼՈՒ. (Հիւսելը դարպակցելով՝ Ասլանին է նայում) Ասլան, զաւակս... ազաչում եմ, պաղատում եմ, առաջ մի՛ նետուիր, թող ուրիշները առաջ անցնեն... (Խորտելը դարպակցելով՝ գրուխը վեր է տնում, և զարմացած՝ մօրը նայում) Մայրիկ, այդ անիրաւութիւն է. ուրիշներ Մարօն ազատելու համար իրենց կեանքը վտանգի ենթարկեն, իսկ ես կուողների առաջին շարքում չլինեմ... չէ... չէ, մայրիկ, այդ տմարդութիւն է... (շարունակում է հրացանը իւրտել):

ՊԵՏՕ. (Խոր մտքերից յանկարծ սրափելով) Կնիկ, ինչ ես յիմար յիմար դուրս տալիս... (Բարկացած) Իր նշանածին ազատելու համար Ասլանը պարտաւոր է ի՞ր կեանքը զոհել և ոչ թէ ուրիշները... (Գուրպակ սեղանի վրայ է նստում և արտասուում): Ասլանս զոհւի... վայ է եկել իմ գլխին... թող այդ հարսը պակաս լինի... գիւղում ուրիշ աղջիկներ չկան...

ՆԱԶԼՈՒ. (Գուրպակ սեղանի վրայ է նստում և արտասուում): Ասլանս զոհւի... վայ է եկել իմ գլխին... թող այդ հարսը պակաս լինի... գիւղում ուրիշ աղջիկներ չկան...

ՆԱԶԼՈՒ. (Գուրպակ սեղանի վրայ է նստում և արտասուում): Ասլանս զոհւի... վայ է եկել իմ գլխին... թող այդ հարսը պակաս լինի... գիւղում ուրիշ աղջիկներ չկան...

ԱՍԼԱՆ. (Հրացանի խորտեղը շարունակելով՝ գրու-  
խը դեպի մօրն է դարձնում և անտարբեր) Եթէ ու-  
րիշի նշանածն էլ լինէր, դարձեալ ես վարւելու  
էի այնպէս՝ ինչպէս այժմ... (Գրուխը կախում է  
հրացանի վրայ):

ՊԵՏՕ. (Սրտնեղած) Փաստաբանի, բժշկի և վար-  
ժապետի նման մարդիկ մեր հարսի համար իրենց  
կեանքը վտանգի տակ դնեն, իսկ դու չես ու-  
զում՝ որ զաւկիդ մատը արիւնի... հա՛...:

ՆԱԶԼՈՒ. (Խոր հառաչելով և արտասուելով) Մի  
անգամ մահից հազիւ պրծաւ... հապա այս ան-  
գամ եթէ գնդակը կրծքին կպչի (նեկկոտում է և  
գրգնոցի ծայրը աչքերի տակնելով) Ես ի՞նչ տեսակ  
մայր լինիմ՝ որ զաւկիս թողնեմ երթայ կրակի  
մէջ ընկնի...:

ԱՍԼԱՆ. (Խորտեղը դադարեցնելով՝ գրուխը դեպի  
մայրն է ուղղում) Ա՛խր, մայրիկ, համոզւիր որ  
ինձ համար ոչ մի վտանգ չկայ: Կէս գիշերին  
այստեղից ճանապարհելով՝ լուսադէմին Հիւսէյին  
Բէգի գիւղը կը լինինք, Մարօյին հարէմից դուրս  
կը բերենք՝ պրծաւ... ուրիշ ոչինչ...:

ՊԵՏՕ. (Դեպի Նազրան) Փաստաբանին շնորհիւ՝  
Հիւսէյին Բէգը արդէն տասն օր է բանտարկւած  
է. մենք այս առիթին էինք սպասում... Մեր յան-  
կարծական և անսպասելի յարձակումից Քրդերը  
զլուխները կորցնելու են, մի գնտակ էլ արձակե-  
լու ժամանակ չեն գտնելու, ես դրան համոզ-  
ւած եմ...:

ՆԱԶԼՈՒ. (Գրգնոցի ծայրով աչքերը շրջակելով՝  
ցած է րողնում) Հապա՛ եթէ կուր բռնեն...:

ԱՍԼԱՆ. Մի վախենար, ես Քրդերին լաւ եմ  
ճանաչում... նրանք ուժեղի առաջ վախկոտ կա-  
տուներ են... Հիւսէյին Բէգի հարէմը կոխելիս,

Քրդերը խոր բնի մէջ կը լինին. մինչև նրանց  
զարթնելը և զէնքի դիմելը, մենք արդէն գիւղից  
հեռացած՝ կը լինենք:

ՆԱԶԼՈՒ. (Չանուգած և անհանգիստ) Սո՛ւտ էք  
ասում:

ՊԵՏՕ. Հաւատա՛, կնիկ, այդպէս էլ լինելու է:  
Հաշւիր, մենք այստեղից ճանապարհելու ենք կէս  
գիշերին. գիւղի հեռաւորութիւնը չորս ժամ է,  
այժմ լուսաբացին հինգ ժամ է մնում: Տեսնո՞ւմ  
ես՝ որ մենք Հիւսէյին Բէգի գիւղը հասնելու ենք  
դեռ լուսաբացին մի ժամ մնացած...:

ՆԱԶԼՈՒ. (Քիչ հանուգած և հանդարտած) Ինձ  
մի՛ մեղադրէք... ա՛խ, ի՞նչ անեմ, մօր սիրտ է.  
(Լաց է յիշում):

ԱՍԼԱՆ. (Ժպտելով) Միամիտ կաց... ես Մա-  
րօյին կը բերեմ, դու էլ մի լաւ հարսանիք կը  
կը բռնես...:

ՆԱԶԼՈՒ. (Չեռքերը օրկիւնք բարձրացնելով) Չայնդ  
Աստուած լսէ... Չիւան բօյիդ ողորմիր...:

ԱՍԼԱՆ. (Հրացանի խորտեղը վերջացնելով՝ ոտի  
է կրնում և պանոցի կախ տալիս, յետոյ գալիս է  
մօրը կողքին արտախ վրայ նստում) Կարծեմ տղերքը  
ուշացան...:

ՊԵՏՕ. (Ծոցի ժամացոյցի մտիկ տարով) Կէս գի-  
շերին դեռ կէս ժամ է մնում, հիմայ կ'գան...  
(Նարգիլի վերջին ծուխը քաշելով՝ խորովակը նրա  
կրկար վզին փարսրում, և վերցնելով՝ կողքի դնում  
գնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ .

Նագրու և Այրակ

ՆԱԶԼՈՒ . (Այրակի վրին փարսարշում և արտաւ-  
ւերով համբարշում է) Զաւակս... դու չգնաս չէ՞ր  
լինի... ամբողջ գիւղը գնում է, բաւական չէ՞...

ԱՍԼԱՆ . (Յուզած) Գիտեմ, մայրիկ, ինձ չա-  
փազանց սիրելուդ այդպէս ես խօսում... սառնա-  
սիրտ չես դատում... բայց ես կը մեռնեմ՝ այդ  
չեմ աներ. ամօթ չէ՞ ինձ... այնուհետեւ գիւղում  
ի՞նչ երեսով պիտի ման գամ...

ՆԱԶԼՈՒ . (Աւելի չերմօրեւ համբարշերով Այրակին)  
Ախ... չար... չես համոզւում... վախենում եմ  
էլ քեզ չտեսնեմ... (Արտասւռում է):

ԱՍԼԱՆ . (Դրտում ոտնաձայներ և լռում: Աշխա-  
տում է մօրը րևերից ազատել, բայց մայրը պիկը  
դրկած՝ բաց չէ րողնում) Բաց թող, տղերքը եկան...

ՆԱԶԼՈՒ . (Աւելի պիկը փարսարշերով) Զէ՛, չեմ  
թողնել որ քեզ տանեն... (հեծկրտում է):

ՏԵՍԱՐԱՆ Գ .

Նոյնը, Յով. Լ. ֆեկերի, Բժ. Վլակնակ, Նշակ  
Պատուելի և գիշդացիներ. (բարբի ել գիւնած՝ միմեանց  
յետեից ևերս և և մտնում մուտքի դռնով)

ՅՈՎ. ԷՖ. (Ժպտալով) Հը՛... հրաժեշտի ողջա-  
գարանք, հա՛... Մայրիկ, դրան իսկի կարիք չը-  
կայ, մենք հարսանիք ենք գնում, հարս ենք բե-  
րելու, դու էգուց դափ ու զուռնան պատրաստ  
արա՛, լաւ քէյֆ ենք անելու...

ՆԱԶԼՈՒ . (Հեծկրտալով) Բոլորդ էլ ինձ խաբում  
էք...

ԲԺ. ՎԱՆԵԱՆ . (Մեկուսի) Ե՛կ այս կնոջ խօսք  
հասկցրու... (Նագրուին) Մայրիկ, գիտեմ որ դու  
ինձ հաւատում ես, էգուց Ասլանը ինձնից պա-  
հանջեր. իսկապէս գնում ենք հարս բերելու (Նագ-  
րուի րևից րռնկալ՝ Այրակին ազատում է) Գնա՛,  
մայրիկ, Պետոյին իմաց տուր, չեւելու ժամանակ է:

ՆԱԶԼՈՒ . (Բռնի հանակերպելով) Ասլանս քեզնից  
կ'ուզեմ...

ՆՇԱՆ . Մենք ամէնքս երաշխաւոր ենք:

ՆԱԶԼՈՒ (Յուսամտ) Ի՞նչ ասեմ... իմ կամքին  
չէք թողնում... (Կողքի դռնով գնում է):

ՏԵՍԱՐԱՆ Գ .

Նոյնը, յետոյ Պետո

ԱՍԼԱՆ . (Երկար շունչ քաշելով) Օ՛ֆ... մի ժամ  
է հոգիս հանում է... չէ ուզում որ ես կուի գը-  
նամ, ի՞նչ յիմար միտք... (Հրացակը պատից վեր-  
ցնում և անքում պահում է):

ՆՇԱՆ . Մայրական սէրը բոլոր սէրերից ամե-  
նավսեմը և ամենարուռն է:

ՊԵՏՕ . (Կողքի դռնով ևերս մտնելով) Պատրաստ  
էք... (Սերակի վրայից հրացակն է վերցնում):

ԲՈՒՈՐԸ . Այո՛... այո՛...

ՊԵՏՕ . Քանի որ ինձ հրամանատար էք կար-  
գել, պէտք է ճշդութեամբ հետեիք հրամաններին...  
եթէ մի զիտողութիւն ունիք՝ այժմ արէ՛ք, որպէս  
զի կուի ժամանակ զինուորական կարգապահու-  
թիւնը տիրէ:

ԲՈՒՈՐԸ. Պատրաստ ենք:

ՊԵՏՕ. Մինչև որ Քրդերը նախապէս հրացան չ'արձակեն, մենք հրացան չպիտի արձակենք:

ԲՈՒՈՐԸ. Ծան լաւ, շատ լաւ:

ՊԵՏՕ. (Խօսելիս՝ նպատակաշարժար շարժումներ է կատարում) Հիւսէյին Բէգի ամբողջ մտնելիս՝ եթէ պահապանները դիմադրեն, աշխատելու ենք՝ նրանց դաշոյնով լռեցնել, որքան հնարաւոր է՝ հրազէն արձակելուց պիտի զգուշանանք: Մեր նպատակը Քրդերին կոտորելը չէ, այլ Մարօյին ազատելը: Հրացանի ձայնին՝ Քրդերը կը զարթնեն և զենքի կը դիմեն, ի զո՛ւր երկու կողմից արիւն կը հոսի:

ԲՈՒՈՐ. Ճիշդ է, համաձայն ենք:

ՊԵՏՕ. Երկու մասի ենք բաժանուելու. մի մասը տան վրայ յարձակուելիս, միւս մասը նահանջի զիծը պիտի պաշտպանէ, որպէս զի հակառակ պարագային Քրդերը մեզ չպաշարեն:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե .

Նոյնք և Նազրու

ՆԱԶՂՈՒ. (Կողքի դռնով ներս է մտնում. տխուր) Ա՛խ, այս ի՛նչ զուլում օրերի հասանք... (Անուշտու թևիցը բռնելով) Զաւակս քեզ ամանէթ... (յետոյ նետում է Ասրակի վիզը և արտասւելով համբոյրում) Արդեօք քեզ կրկին պիտի տեսնեմ...:

ԱՍԼԱՆ. (Յուզում է, աչքերը լցում են, մօրը համբոյրելով) Մնաս բարձ՛վ, մայրի՛կ...:

ՊԵՏՕ. (Նազրուի թևիցը բռնելով՝ հեռացնում է) Է՛լ բաւական է: (Զուրը դեպի մուտքի դռնը պարզելով՝ առաջ է ակնում) Օ՛ն... առա՛ջ... (Գնում է):

ԲՈՒՈՐԸ. (Պետօյի նետելով գնում են) Մնաս բարձ՛վ, մնաս բարձ՛վ...:

ՆԱԶՂՈՒ. (Մինչև մուտքի դռնը նրանց նետելով) Գնաք՝ բարձ՛վ... դառնաք բարձ՛վ... (Գրտում սուսաձայնները հետևում են. Նազրու գայիս է պատուհանը բաց անում և զնացողների յետևից նայում):

ԳՐԱՅ. (Զանազան և տարբեր ձայներով) Լաւ սեղան պատրաստի՛ր... Գինին էլ առատ լինի... մնաս բարձ՛վ...:

ՆԱԶՂՈՒ. (Պատուհանից) Տէ՛րը ձեզ հետ... (Դեպի սեղանը վերադառնալով՝ ընկնում է արտի վրայ, գոզնոցի ծայրերը աչքերի և տանկով՝ հեծկրում է: Բեմի վրայ լուրջիւ է մի քանի յոպէ, միայն Նազրուի հեծկրանքն է լսում):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ .

Նազրու և Սառա

ԱՍՈՍ. (Մուտքի դռնով ներս մտնելով՝ գայիս է Նազրուի մօտ և ձեռքը նրա ուսին դնելով) Մի՛ մտածիր, Ասաւածմով անվնաս կը վերադառնան, ես եկայ որ քեզ մենակ չթողնեմ...:

ՆԱԶՂՈՒ. (Աչքերը շարացնելով՝ գոզնոցի ծայրերը ցած է բողնում) Վրաս հոգի չմնաց, Սառա խաթուն. իմ տեղը երկաթ լինէր չէր դիմանար... աչքս բուն չէ մտնելու՝ մինչև որ ողջ առողջ չվերադառնան... Նստի՛ր սա աթոռի վրայ:

ԱՍՈՍ. Ես այդ մօտնի աթոռների վրայ հանգիստ չեմ լինում, էլի մեր հին դռակները (Նրատում է հան-դօշակի վրայ, Նազրուի դիմաց): Տէ՛րը Ասլանիս մուրադին հասցնի... Խեղճին հոգին դուրս եկաւ:

ՆԱԶԼՈՒ. Էս նրան մատաղ. գաւակս երեք տարի նշանածութեան սիրտհատնումը քաշեց, յետոյ էլ ձեռքիցը գնաց:

ՍԱՌԱ. Ինչ երեք տարի, ինչ հինգ տարի... խեղճը նշանելուց առաջ էլ նրա համար տանջւում էր:

ՆԱԶԼՈՒ. (Զարմացած) Ուղղորդ ես ասում: Բայց նշանագրութիւնից առաջ մեր երկու տները միմեանց արիւնն էին խմում...

ՍԱՌԱ. Ուղղորդ եմ ասում. դուք միմեանց միսն էիք ուտում, իսկ Ասլանը և Մարօն միմեանց սիրում էին:

ՆԱԶԼՈՒ. Դու օրտեղից ես խմանում...

ՍԱՌԱ. (Ժպտարով) Հենց ես ինքս եմ բաղդաւորացրել...

ՆԱԶԼՈՒ. (Ապշած) Ո՛ւ՛յ կնիկ, մոռնա չմարի...

ՍԱՌԱ. (Պարծենարով) Հապա՛, քանի քանի անգամներ երկուսին էլ իմ տունն եմ բերել և զործը եփել: Վատ եմ արել...

ՆԱԶԼՈՒ. (Ակամայ ժպտարով) Աստուած պատիժդ չտայ, պառաւ...

ՍԱՌԱ. (Յօրանչում է) Քուսն է գալիս:

ՆԱԶԼՈՒ. (Յօրանչում է) Գնամ մի սուրճ եփեմ, քներս փախցնենք. (գնում է կողքի դռնով):

ՍԱՌԱ. (Հանդիսակներին) Աստուած չանէ Ասլանին մի բան պատահի, խեղճ կինը ցաւիցը կը մեռնի... Տէրը ինքը տղորմի...

ՆԱԶԼՈՒ. (Չեղբի մի քրքական սրճակի և երկու փոքր տաքի գաւարներ բռնած՝ կողքի դռնով գալիս է. բաժակները սեղանի վրայ դնում և տաքի երանց մէջ ածում. յետոյ պարսպ սրճիկը սեղանի վրայ մի կողմ դնելով) Այս անգամ սեղանին մօտ նստիր:

ՍԱՌԱ. Լաւ, խաթրդ չեմ կտորել. (Վեր է կենում և աշխատում է արուսի վրայ նստիլ. հաշտարակառարները կողքերով՝ մարմինը դեպի յետ է գրկում և ոտքերը վեր բարձրանում):

ՆԱԶԼՈՒ. (Ծիծաղելով) Զգոյշ կայ վար չընկնես (Նստում է):

ՍԱՌԱ. (Ծիծաղելով) Ես քեզ չեմ ասում՝ որ պառաւ հասակիս այս մօտնի բաները ինձ չեն սագում. (արուսի վրայ լաւ տեղաւորելով՝ սկսում է տաքի խմել): Երեխերքը ինչպէս են:

ՆԱԶԼՈՒ. (Ստաքի խմելով) Լաւ են:

(Դրսից եկեղեցու զանգակի մեղմ ձայնը լսում է. երկուսն էլ երեսին խաչակերպում են երեք սեղան):

ՍԱՌԱ. (Դեպի ռասամուտը նայելով) Լուսաբացեց:

ՆԱԶԼՈՒ. (Լամպը հանգեցնելով՝ ոտի է կրնում) Գնամ եկեղեցի, մի մոմ վառեմ:

ՍԱՌԱ. (Ոտքի կրնելով) Ես էլ կ'գամ:

ՆԱԶԼՈՒ. Դու այստեղ մնացիր, գուցէ երեխերքը զարթնեն:

ՍԱՌԱ. Դէ՛ լաւ, դու գնա՛. (գրպանից մի սև փող հանելով) ան այս հինգ փարան, ինձ համար էլ մի մոմ վառիր. (փողը տալիս է):

ՆԱԶԼՈՒ. (Փողը առնելով) Աստուած ընդունելի անէ... (Երեսան երսից ձուլում է, ընկրոյ... ընկրոյ... ընկրոյ...) Ահա՛, երեխան էլ զարթնեց (գնում է կողքի դռնով):

ՍԱՌԱ. Այստեղ բեր, ես կը նայեմ (Նստում է յօշակի վրայ):

ՆԱԶԼՈՒ. (Օրօրոցը երկու ձեռքով բռնած՝ ներս է մտնում և դնում Սառայի մօտ. ծիծ է տալիս) Է՛հ, սրանք էլ որ մեծանան՝ մեզ նման տանջւում են այս դժոխքում...

ՍԱՌԱ. Գուցէ մեզնից աւելի լաւ օրեր են տեսնելու... Ժամանակը ինչե՛ր ասես չ'աներ. ո՞վ է իմանում, մի օր չար Սուլթանը կը սատկի և նոր թագաւորը բարի մարդ կը լինի...

ՆԱԶԱՌԻ. (Ծիծ տալը դատարեցեալով, օրօրոցը րևրև օրօրում է) Երանի՛ մեր քաջածնեը սրանք չը տեսնեն. (վեր կենալով) Ես գնամ եկեղեցի (գնում է մուտքի դռնով):

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Է.

Սառու (Արսևնիկ)

ՍԱՌԱ. (Օրօրոցը օրօրելով երգում է)

Քնիր բալաս, քեզ ասեմ օրօ՛ր...

Ես մեռնիմ, չըտեսնես սև օր.

Կորչի զուլում, ծագի նոր բաղդ,

Կուրանամ չըլացեմ քո դարդ:

Ես քեզ մատաղ, դարդիդ դարման

Կ'ըլնի միայն քո հրացան,

Այդ է պայման կեանքի ազատ՝

Անել ոտխին շանսատակ:

Քնիր, բալաս, քեզ ասեմ օրօ՛ր...

Ո՞ր դարդըս պատմեմ բերաւոր.

Ձարդն ու թալան է մեր բաժին,

Գըլուխ ծըռել Քուրդն ու Թուրքին:

Օղերս ծախեմ, առնեմ քեզ զէնք,

Որ կտորես ամբոխին նենգ,

Պաշտպան կանգնես մեր օջախին,

Որ չըպըզծէ չար թըշնամին:

Քնիր բալաս, քեզ ասեմ օրօ՛ր...

Շատ խոր է մեր վէրք դարաւոր.

Իսպառ կորչին բանտ, կախաղան,  
Կարմիր ներկած է Հայաստան:

Բոյիդ մեռնիմ, շուտ ոտի ե՛լ,

Որ սովորես քաջաբար կուել,

Բնորես քեզ բնաբան Հայուն՝

Միայն մահ կամ ազատութի՛ւն:

(Երգը վերջացելով՝ շարունակում է օրօրել) (Չէ՛, ես հաւատում եմ որ այս անմեղ գաղնուկները լաւ օրեր են վայելելու... Մեր երիտասարդները ի զուր չեն աշխատում... Սատանայի չիմացածը իրենք իմանում են... աշխարհք տակնուվրայ կ'անեն... Այո, հաւատում եմ նրանց և դրա համար էլ օգնում եմ իրենց գործին... տանս զաղտնի պահում եմ նրանց մըջիւնի պէս հաւաքած զէնքերը... Հապա՛ բոմբերը... ասում են որ եթէ մէկը պայթի՛ ողջ գիւղը կարող է օդը հանել... Շիտակը վախենում էլ եմ... չլինի թէ մի օր պայթի՛...)

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ը.

Նոյն և Գասպար Ամի

ԳԱՍՊԱՐ. (Մուտքի դրան առաջ երևալով) Բարի լո՛յս, Նազու բուրի՛կ (Չեռնախայտի յեկած՝ ծանր առաջանում է):

ՍԱՌԱ. Ասածու բարին, Գասպար Ամի:

ԳԱՍՊԱՐ. Ա՛յ, դո՛ւ ես, Սառա խաթուն:

ՍԱՌԱ. Հա՛, ես եմ, եկ նստիր:

ԳԱՍՊԱՐ. (Սառայի կողքին դռակի վրայ կուտը լով՝ ձեռնախայտը մօտե է դնում) Շատ լաւ ես արել եկել ես, խեղճ կնոջ մենակ թողնելու չէ. ես էլ դրա համար եկայ...

ՍԱՌԱ. Կէս գիշերին եմ եկել...

ԳԱՍՊԱՐ. (Քրախոտի տուփը հանելով՝ քաշում և Սառայիկ էլ տալիս է) Անբաղդ ընտանիք...

ՍԱՌԱ. (Քրախոտը քաշելով) Խեղճ կնիկ, չքաշածը չմնաց... տասը տարի ամուսնու դատի պատճառով տանջեց... հիմի էլ Ասլանի դարձն է քաշում: Ինչ տեսակ մի սիրտ պէտք է լինի՝ որ այս ծանր վշտերին դիմանայ: Բոլորս էլ դժբաղդ ենք, բայց այս Պետոյի տունը կարծես միայն ցաւի ու տառապանքի տուն է: Աստուած վերջերը բարին անէ:

ԳԱՍՊԱՐ. (Ձեռքերը և աչքերը երկինք բարձրացնելով) Ամէն: Ինքը ո՛ւր է:

ՍԱՌԱ. Եկեղեցի գնաց:

ԳԱՍՊԱՐ. Մի կողմից վաւրենի ֆուրդը, միւս կողմից զազան կառավարութիւնը խեղճ Հայերիս հանգիստ չեն տալիս... երկու կրակի մէջ տապկւում ու տապկուում ենք... մէկի պակաս թողածը միւսն է լրացնում... Մեզինց խլում են մեր հացը, մեր պատիւը, մեր կեանքը: (Ձեռքերը ձեռնարկելով) Ախ... Ինչո՞ւ այսպէս շուտ թուլանայիք դուք... Ինչո՞ւ այս գիշեր ես էլ նրանց հետ չգնայի՝ անողորմների մէջ մահու սարսափ տարածելու:

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Թ.

Նոյնք և Նազրու

ՆԱԶՂՈՒ. (Տխուր՝ մուտքի դռնով մտնում է) Ողորմի՛ր Աստուած:

ՍԱՌԱ. Ողորմի՛ր հոգուդ:

ԳԱՍՊԱՐ. Ողորմի՛ր բոլորիս: Ինչպէս ես, Նազրու բուրիկ:

ՆԱԶՂՈՒ. (Օրօրոցիկ մտնելով) Տեսնում ես էլի՞: (Օրօրոցը երկու ձեռքով վերցնելով՝ կողքի դռնով գնում է):

ԳԱՍՊԱՐ. Աստուած ապաշխարանք համարի՛ր...

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Թ.

Սառու և Գապար

ՍԱՌԱ. (Ոտքի կրնում և սեղանի վրայից գոշրպակ վերցնելով՝ նստում է ղոշակի վրայ և սկսում է հիւստի) Պակասն էլ ես վերջացնեմ...

ԳԱՍՊԱՐ. Խեղճ կնիկը որքան պառաւել է...

ՍԱՌԱ. (Հիւստիլը շարունակելով) Քաշածը գիտէ...

ԳԱՍՊԱՐ. Ճիշտ ես ասում: Տղիցք ինչ լուր, ի՞նչու չէ գալիս:

ՍԱՌԱ. Էհ, թող ողջ լինի, Պոլսումն լինի, էլի այնտեղ զուլումը քիչ է՝ ասում են... խեղճը ինչպէս գայ... դատելով, արիւն քրտինք թափելով՝ շահածը ուղարկում է այստեղ: Ասես իմ ձեռքիս էլ մի բան մնում է: Եկածը տալիս եմ պարտքի ու հարկի... տո՛ւր հա՛ տուր... վերջը չէ գալիս: Երեք տարի առաջ վճարածս հարկը՝ այս տարի նորից վճարեցի... այս ինչ անաստուածութիւն է: Հարկը առնում են՝ թուղթ չեն տալիս... յետոյ էլ նորից են պահանջում...

ԳԱՍՊԱՐ. Մեր տիպ դարիք դուրբատները խաների անկիւններում թառամում և ծանր աշխատանքների տակ ինձ նման կըրում են... Ասես շահած փողից էլ մի խեր տեսնում են... բնա՛ւ: Մի ուրախ օր չեն վայելում... Պոլսում իրենց հայրենիքի ու սիրելիների կարօտը քաշելով հալու-

մաշ են լինում... իսկ եթէ հանգստանալու համար հայրենիք են վերադառնում, բաց ի զուլումից ու ըրշ բան չեն տեսնում:

ՍՍ.ՌՍ. Հարկաւ այս դառն բաժակը մեզնից կ'անցնի... այս սև օրերին՝ մի պայծառ արև կը ծագէ... Մերոնք էլ են առաջւանը չեն մնացել, հիմի արթնացել են... հենց այս գիշերւայ արշաւանքը պարզ օրինակ է:

Տ Ե Ս Ս Ր Ա Ն Ժ Ա.

Նոյնք և Նազրու

ՆԱԶԼՈՒ. (Կողքի դռնով ներս է մտնում, տխուր և յուզած) Արևն էլ դէմի պատից հեռացել է...

ՍՍ.ՌՍ. (Չարմացած) Է՛յ, ի՞նչ կայ որ...

ՆԱԶԼՈՒ. (Սրտուի վրայ ընկնելով՝ լաց է շինում) Ի՞նչ պիտի լինի... կէս օրը մօտ է և դեռ մերոնք չեկան:

ՍՍ.ՌՍ. Ի՞նչ անհանգիստ ես... չե՞ս իմանում՝ որ հարսնեորները միշտ նազով են գալիս...

ՆԱԶԼՈՒ. Սիրտ ունիս հանաք էլ անում ես... վախենում եմ զաւկիս մի դժբաղդուծիւն պատահած լինի, ո՛ւր (Գոգնոցի ծայրը աչքերին տանելով հեծկրտում է):

ԳԱՍՊԱՐ. Համբերութիւնը Պետոյին բանտից դուրս բերեց, այս անգամ էլ բոլորին ողջ առողջ կը վերադարձնի. քիչ էլ համբերիր:

ՍՍ.ՌՍ. Բերանդ խեր բաց... երեսայ ես ի՞նչ ես. քիչ էլ սպասիր: (Մեկուսի Գառարիկն) Իսկապէս ուշացան...

ԳԱՍՊԱՐ. (Մեկուսի Սառայիկն) Չեմ կարծում...

(Դրտում ոտնաձայներ ևև լսում. Պետոյի ձայնը որոշում է):

ՍՍ.ՌՍ. (Յանկարծ ուրախ տեղիցը վեր ցատկերով՝ Նազրուի րեկիցը բռնում և դեպի մուտքի դուռը քաշում է) Աչքդ լո՛յս... հարսդ բերի՛ն...

ՆԱԶԼՈՒ. (Կես ուրախ, կես տխուր՝ Սառայի յետևից քաշ գարով) Չաւա՛կս...

ԳԱՍՊԱՐ. (Միև Սառա և Նազրու մուտքի դրան առաջ ևև հասնում, ինքը հագիւ կարողանում է վեր կենալ և ձեռնախայտը վերցնել):

ՏԵՍՍՐԱՆ ԺԲ.

Նոյնք, Պետո և Արսև (երկուսն էլ զինած) և Մարո (քրդունու շորերով)

ՊԵՏՕ. (Բոլորից առաջ մուտքի դռնով ներս մտնելով՝ Նազրուի՛ն առև շեշտով) Աչքդ լո՛յս... հարսդ բերինք: (Սառայիկն և Գառարիկն) Բարև՛ ձեզ: (Հրացանը սևիւնն է ղևում):

ՆԱԶԼՈՒ. (Ուրախ) Քո աչքն էլ լո՛յս...

ԳԱՍՊԱՐ. (Ուրախ) Թագն ու պատկը տեսնենք...

ԱՍԼԱՆ ԵՒ ՄԱՐՕ. (Կողք կողքի միածանակ ներս ևև մտնում: Արսևն հրացանը ցած է ղևում) Բարև, մայրիկ:

ՆԱԶԼՈՒ. (Ուրախ՝ Մարոյի վիզն է փարսրում և համբուրում, աչքերից ուրախուրեան արտասուքներ ևև հոտում) Բօյդ սիրեմ, զաւա՛կս...

ՄԱՐՕ. (Համբուրում է Նազրուի ձեռքը):

ՆԱԶԼՈՒ. Ապրի՛ս, զաւա՛կս... (Մարոյից յետոյ՝ նետում է Արսևի վիզը և չերմագիկ համբուրում) Քէ՛ մատաղ...

ՊԵՏՕ. (Մուտքի դռնից դուրս եայելով՝ դրսիկենե-  
րիկ ձեռք է սևում) Չգուշու՞թեամք բերէք:

ՍԱՌԱ. (Մարտի վիզը փարսրակելով՝ չերմագիկ  
համբուրում է) Ուրա՛խ օրեր վայելես... Բաղդաւոր  
լինիս...

ՊԵՏՕ. (Նսգրուիկ) Գնա՛ մի անկողին բէր...

ՆԱԶԼՈՒ. (Չարմացած) Ինչի՞ է պէտք:

ՊԵՏՕ. Մի վերաւոր ունինք...

ՆԱԶԼՈՒ. (Յուզում) Վա՛խ քոտանամ, ո՞վ է:

ՊԵՏՕ. Հիմի կը տեսնես. անվնաս վէրք է:

ՆԱԶԼՈՒ. (Գեպի կողքի դուռը ուղղելով) Փա՛ռք  
քեզ, Աստուած, զաւակս ողջ առողջ վերադարձաւ.  
(Գնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Գ .

Նոյնք, ԲԺ. Վանեան, Նշան, Գիշացիներ (քոյրն  
էլ գիշած), Յով. Էֆեկդի (ժանր վիրաւորած,  
գրախր բաց, փանկաւարները վերցրած. մի գիշ-  
րացի նրան շարակած ներս է բերում):

ՊԵՏՕ. (Մուտքի դռնից դուրս եայելով) Բերէ՛ք...

ԳԱՍՊԱՐ. Ո՞վ է վերաւորը:

ՊԵՏՕ. (Տխուր հառաչով) Ա.խ... Յով. Էֆէնդին,  
վտանգաւոր վիճակում...

ԳԱՍՊԱՐ. (Ծնկերը րակելով) Վա՛խ... վա՛խ...  
վա՛խ... ափսոս... մեր գիւղի պահապան հրեշ-  
տակը. (հեծկրում է):

ՍԱՌԱ. Վա՛խ զաւակս, խփողի ձեռքը չորա-  
նայ. (Լաց է լինում):

ՊԵՏՕ. Խնդրեմ ձեզ զսպեցէք. հիմի ներս են  
բերելու, յուշը վրան է, լաւ չէ ձեր լացը տեսնէ...

ԳԱՍՊԱՐ. (Մի անկիւն քաշելով՝ լացը բռնի զս-  
պում է):

ՍԱՌԱ. (Աշխատում է աչքերը շորացնել):

ՆԱԶԼՈՒ. (Կողքի դռնով մտնում, անկողինը ցած  
դնում, սեղանը մի կողմ քաշելով՝ անկողինը փռում  
է բեմի մէջ տեղում, բարձն էլ տեղաւորում) Աս-  
տուծով բժիշկը տղիս նման կ'առողջացնի...

ՆՇԱՆ. (Տխուր ներս մտնելով) Աչքդ լո՛յս, մա-  
րիկ. (գեկըր ցած է դնում):

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Միաժամանակ ներս մտնելով)  
Հարսդ ու զաւակդ ողջ առողջ բերինք. (նրացանք  
մի անկիւն է դնում):

ՆԱԶԼՈՒ. Ո՞վ է եղէք, զաւակներս... շնորհակալ  
եմ: (Ուշադրութեամբ մուտքի դուռն է նայում, որ-  
տեղից մի գիշացի Յով. Էֆեկդիին շարակած ներս է  
բերում և դնում անկողնի վրայ՝ միւսների օգնու-  
թեամբ: Ուրիշ գիշած գիշացիներ վիրաւորի յետից  
ներս են մտնում և կանգնում: Նսգրու ձանաչելով Յով.  
Էֆեկդուն, երկու ձեռքերը գլխին խփելով՝ մի բարձր  
ձիչ է արձակում) Վա՛յ... (Վազում է Յով. Էֆեկ-  
դու մօտ և վրան ընկնելով գոռում է) Ե՛ս մեռնէի,  
քեզ այս վիճակում չտեսնէի. (հեծկրում է):

ՅՈՎ. ԷՖ. (Աչքերը բաց է սևում և նորից խր-  
փում):

ՊԵՏՕ. (Նսգրուի րեկըր բռնելով՝ մի կողմ է քա-  
շում) Անհանգիստ մի անիր. շուտով կը լաւանայ...

ՆԱԶԼՈՒ. (Ահաւայ բաժանելով և աչքերը Յով.  
Էֆեկդու վրայից չնկռացնելով) Մեր փրկիչն է՛ր...  
(հեծկրում է):

ԳԱՍՊԱՐ. Աստուած ջիւան բոյին ողորմի՛...

ՊԵՏՕ. Բժիշկը սաղ լինի, անշուշտ տղիս նման  
կ'ազատի:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Վիրաւորի մօտ գնալով՝ քննում

է քաղկերսկը: Նշան Պատշերուն) Միրաը շատ թո՛ղլ է... զօրացնելու մի դեղ խփեմ: (Գրպսնից մի փոքր տուփ է հանում, մէջից դուրս է բերում Բրաւնազի սիրիկը և վիրաւոր քեի մորքի տակից մի տեղ խփում):

ՅՈՎ. ԷՖ. (Աչքերը բաց անկրով) Զո՛ւր...

ԱՍԼԱՆ. (Խոնարհ մի բաժակ չոր է բերում):

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Վիրաւորի գլխի ետեւը անցնելով՝ գրոշխը քիչ վեր է բարձրացնում և բաժակը նրա շրթունքներին մօտեցնում) Խմի՛ր...

ՅՈՎ. ԷՖ. (Զուրը ծանր ծանր խմելով) Գլուխս այսպէս պահեցէ՛ք...

ՆԱԶԼՈՒ. (Խոնարհ եւն-դօշակները բարձրը հաշարելով՝ վիրաւորի կրակի և գլխի տակն է դնում) Հանգիստ եղի՛ր, զաւակս:

ՅՈՎ. ԷՖ. Ծնորհակալ եմ... այժմ ինձ լաւ եմ զգում. (Աչքերը մէկ մէկ ներկաներին ուղղելով) Ինչո՞ւ տխուր կանգնել էք...

ՊԵՏՕ. Մեր ուրախութիւնը այն ժամանակ կատարեալ կը լինի՝ երբ դուք առողջանաք. երանի էր ձեր տեղը ես վիրաւորւած լինէի...

ՅՈՎ. ԷՖ. Այդ միևնոյնն է, գաղափարի զոհը ցաւ չպէտք է պատճառէ, դուք ինչո՞ւ էք արհուրում... ես... (յանկարծ դեմքը պտտում է, երկու ձեռքերը սրտին վրայ դնելով՝ մի բարձր ձիչ է արձակում) Օհ... (Աչքերը փակում և մի քակի վայրկեան յետոյ՝ նորից բաց անում) Զո՛ւր...

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Զրի բաժակը նրա շրթունքներին է մօտեցնում) Խմի՛ր...

ՅՈՎ. ԷՖ. Ես ինքս կը խմեմ (Բժշկի ձեռքից ջրի բաժակը առնում և դրողորարով խմում է, յետոյ տալիս բժշկին): Գուցէ ես կը մեռնիմ... անշուշտ մնացողները կը շարունակեն սկսուած գործը...

մինչև որ փշուրին ու խորտակին բռնակալութեան շղթաները... զոհերից մի վախենաք... այդ զոհերի վրայ պիտի կանգնի ազատութեան շէնքը...

ՊԵՏՕ. Այդ ի՞նչ էք ասում... դուք դեռ շատ երկար պիտի ապրիք և պաշտպանէք զրկաւածներին ու տանջողներին... ձեր կենդանի շունչը ամեն կողմ յոյս պիտի տարածէ...

ՅՈՎ. ԷՖ. Զէ՛, զգում եմ որ այլ ևս չեմ ապրելու... բայց իմ գաղափարները չեն մեռնելու, նրանք ձեր մէջ են, դուք կը շարունակէք...

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Ծուտով կը լաւանաս, թո՛ղ այդ սև մտքերը:

ՅՈՎ. ԷՖ. Միթաւրո՛ւմ ես... (Ոգևորւած նրատուն է) Ազատութեան գործը արիւն է պահանջում, արիւն... ես ուրախ եմ որ իմ մի կաթիլ արիւնը զոհարեցի սուրբ գործին... Այսօր ուրախութեան օր է... Մարոյին բերել ենք... վերջին... (Յուշարարում և ընկնում է բարձրի վրայ, գրոշխը մի կողմ ընկած):

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Խոնարհ նրա գրոշխը ուղղում և ուշադիր դիտում է):

(Ներկայք ձեռքերով աչքերին ծածկում և արտասում են, երբեմն խոշ հեծկրտանքներ արձակելով):

ՅՈՎ. ԷՖ. (Աչքերը բաց անկրով) Ծունչս նեղւում է... օդ եմ ուզում... օդ. (Բերանը բաց է անում՝ օդը ներս քաշելու համար):

ԱՍԼԱՆ. (Խոնարհ պատուհանը բաց է անում):

ՅՈՎ. ԷՖ. Մենք այսօր հարսանիք էինք անելու... Եթէ ինձ յարգում էք... կատարեցէք իմ վերջին կամքը... գուցէ կը մեռնեմ... Մարոյին միացրէք Ասլանի հետ... նրանց միութիւնը տեսնեմ...

(Ներկայք տխուր միակեանք երես և ևս չուն, բայց մեռնում են, ոչ ոք չէ շարժում):

ՅՈՎ. ԷՖ. Ի՞նչ. ուզում էք ինձ զրկել իմ այդ վերջին մխրթարութիւնից:

ՊԵՏՕ. Դուք լաւացէք, յետոյ միասին ուրախ հարսանիք կ'անենք:

ՅՈՎ. ԷՖ. Մեր զոհերի վրայով ցատկելով պէտք է անցնենք գործի... չպէտք է յետ նայենք... պիտի համարէք թէ ոչինչ չէ պատահել:

ՊԵՏՕ. (Մեկուսի բժշկին) Վիճակը ի՞նչպէս էք գտնում, վերջը ամօթով չմնանք... Աստուած մի արասցէ, եթէ մի բան պատահելու լինի. ի՞նչ էք ասում, ասածը կատարե՞նք:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Յոյս ունիմ որ կը լաւանայ, միայն արիւն շատ է կորցրել. փնաս չունի, կատարեցէք իր կամքը:

ՊԵՏՕ. (Գեպի գիշացիները) Քահանային կանչեցէք:

ՄԻ ԳԻԻՂԱՅԻ. (Խտրյն գնում է մուտքի դռնով) Այս բոպէին...

## ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

Նոյնը և մի քանակայ

ՔԱՀԱՆԱՆ. (Վրան շորջառ առած, խաչն ու Առատարանը ձեռքին՝ մուտքի դռնով ներս է մտնում գիշացու հետ) Աստուած օրհնէ...

ՊԵՏՕ. (Տխուր շեշտով և արտասուչից աչքերով՝ Ասրակին) Ե՛կ, զաւակս... (Մարոյին) մօտեցի՛ր, աղջիկս:

ԱՍՂԱՆ ԵՒ ՄԱՐՕ. (Մօտենում են Պետոյին):

ՊԵՏՕ. (Մարոյի ձեռքը Ասրակի ձեռքին մէջ դնում և մի քիչ հեռու կանգնում է):

ՅՈՎ. ԷՖ. (Ոչբախտը քամը ակողմի մէջ նստում է) Հա՛... այդպէս... (Նշակին) դու էլ քաւորի պարտքը կատարէ:

ՆՇԱՆ. (Մեկուսի) Տեսէք ի՞նչ մեծ նշանակութիւն ունի գաղափարական գործը... իմ սիրոյ առարկային այսօր քաւորի՛ պաշտօն եմ կատարելու... պէտք է զոհարեի ամէն ինչ սուրբ գործի համար: (Դաշոյնը հսկում՝ Ասրակի գլխի վրայ պահում է աչ ձեռքով, իսկ ձախ ձեռքով նոյն կերպով՝ պատեանը դնում է Մարոյի գլխի վրայ, այնպէս որ դաշոյնը և պատեանը միմեանց խաչաձեւում են):

ՔԱՀԱՆԱՆ. (Սկսում է իր պաշտօնը կատարել) Առեալ զձեռն Եւայի, և այլն:

(Ներկայք արտասւշում և հեծկրտում են):

### ՉՈՐՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմը՝ առաջի և յետի՝ երկու մասերի է բաժանում փոքր բլուրներով, թփերով և ծառերով. երկու մասերուն էլ կանանչ դաշտեր են երևում: Բեմի առաջին մասը պարապ և ազատ է, իսկ յետևի մասում հեռուն՝ կառավարական շէնքն է երևում, բանտային մասով, որի վրայ ծածանում է Տաճկական դրօշակը: Վարագոյրը բացւելիս՝ բեմի յետևի մասում, կառավարական շէնքի առաջ՝ մի սեղան կայ, որի մօտ նստած են Ալի Էֆէնդին և Քարտուղար Օսման Էֆէնդին. նրանց դէմը կանգնած են երկու զաբթիաներ, որոնք հսկում են՝ ձեռքերնին չլթայլած երեք հայ գիւղացիների վրայ: Ստլանն էլ նրանց մէջ է: Սեղանի վրայ կան թուղթ, գրիչ, կաղամար, չուաններ, ցուպեր, մի բաժակ ջուր, և այլն:

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

Ալի Էֆէնդի, Օսման Էֆէնդի, Երկու զաբթիաներ,  
Ասլան և ուրիշ երկու հայ գիւղացիներ

Ա.Լ. Էֆ. Այս անպիտանները առանց ձեծի չըպիտի խոստովանին:

ՕՍՄԱՆ Էֆ. Այդպէս է երևում, պէտք է նրանց ականջները մի քիչ քաշել:

Ա.Լ. Էֆ. (Զաբթիաներին) Կիրակոսին առաջ բերէք:

ԶԱՐԹԻԱՆԵՐ. Գլխի վրայ, Էֆէնդի. (Մօտենում և և գիւղացիներից մէկին և րևերիցը բռնած՝ սեղանի առաջ և և բերում):

Ա.Լ. Էֆ. (Գիւղացուն) Հը... դարձեալ ճիշդը չե՞ս ասելու:

ԳԻՒՂԱՅԻՆ. (Տխուր և ընկճած) Ի՛նչ որ երէկ ասացի ճիշդ էր:

Ա.Լ. Էֆ. (Բարկացած) Անպիտան... քեզ համար մինչև կախաղան ճանապարհ կայ: Ընկերներդ արդէն ճշմարտութիւնը խոստովանել են... դու էլ ճիշդը ասա. եթէ ճիշդը չ'ասես՝ ազատելիք չունիս: Գէ... ասա՛ տեսնեմ վառօղները ո՞րտեղ էք թագցրել...

ԳԻՒՂԱՅԻՆ. Չեմ իմանում, Էֆէնդի, ես տեղեկութիւն չունիմ:

Ա.Լ. Էֆ. (Կատաղած) Խորամանկ օ՛ձ, դու ամէն բան իմանում ես... դու հիմայ ճիշդը կ'ասես: (Զաբթիաներին) Այս շունը դժուր—բօփի արէ՛ք:

ԶԱՐԹԻԱՆԵՐ. (Միև բաց է ական գիւղացուն ձեռքի շարաները, իսկ միւսը սեղանի վրայից մի չուան առնելով՝ նրա ձեռքերը կտակ է կապում: Երկուսը միասին գիւղացուն գետինն են պառկեցնում, և երկու ոտքերը չուանով կապելով՝ ակցնում և կապած ձեռքերի մէջ, և այս բոլորը միմիակց կապում, այնպէս որ գիւղացին մի կրք գնդի է վերածում. յետոյ սխում և և ոտքերով ուժգին հարռածներ տալ գիւղացուն, որը գրտորում և տապրակում է անագին ձիւք արձակելով):

Ա.Լ. Էֆ. Հը... վառօղի տեղը չե՞ս իմանում...

ԳԻՒՂԱՅԻՆ. (Հարածների տակ գրտորելով, խեղդով ձայնով) Ասումս վկայ՝ չեմ իմանում...

Ա.Լ. Էֆ. (Քարտուղարին) Իսկական ուխտեալներից է երևում...

ՕՍՄԱՆ Էֆ. Աւելի պէտք է տանջել:

Ա.Լ. Էֆ. (Զաբթիաներին) Մինչև շանսատակ լինելը՝ խփեցէք ցուպերով:

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Սեղանի վրայից ցուպեր վերցնելով՝ սխտաւ եւ անխնայ ձեծկ):

ԳԻԻՂԱՅԻՆ. (Սարսափելի ձիւներ եւ արձակում... և քիչ յետոյ յաշագնաց լինելով՝ այլ ևս չէ ձրում):

ԱԼԻ ԷՖ. (Տեսնելով յաշագնաց լինելը՝ զարբիսներին) Երեսփն քիչ ջուր ածեցէք:

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Ծեծը դարարեցնելով՝ մեկը վերցնում է սեղանի վրայից ջրի բաժակը և գիշացուս երեսին ջուր սրսրկում):

ԳԻԻՂԱՅԻՆ. (Ուշքի գարով՝ տերում է) Ո՛ւշ... ո՛ւշ...

ԱԼԻ ԷՖ. (Զարբիսներին) Շարունակեցէ՛ք թափելը:

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Ձուրի բաժակը սեղանի վրայ դնելով՝ ետից ձեռք եւ առնում ցուպերը և հարսածները շարունակում):

ԳԻԻՂԱՅԻՆ. (Սրտաձնկիկ ձիւներ ե հանում) Վ՛այ... վ՛այ... մեռայ... մեռայ... Էֆէնդի... ոտիդ պագանեմ... կ'ասեմ... կ'ասեմ...

ԱԼԻ ԷՖ. (Զարբիսներին) Դադարեցուցէ՛ք...

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Յուպերը սեղանի վրայ եւ դնում և կանգնում):

ԱԼԻ ԷՖ. (Գիշացուն) Դէ՛ ասա՛ տեսնեմ...

ԳԻԻՂԱՅԻՆ. (Յաշից աննսնգիստ) Ո՛ւշ... ո՛ւշ... Արտի մէջն է...

ԱԼԻ ԷՖ. Ո՞ր արտի...

ԳԻԻՂԱՅԻՆ. Մինասենց վերի արտի...

ԱԼԻ ԷՖ. (Քարտուղարին) Արձանագրեցէ՛ք:

ՕՍՄ. ԷՖ. (Թուրք գրիչ վերցնելով՝ սխտաւ է գրեք հարցարկնորքինը):

ԱԼԻ ԷՖ. Վառողը ո՞վ է բերած:

ԳԻԻՂԱՅԻՆ. Զորեպան Նշանը:

ԱԼԻ ԷՖ. Ո՞ր տեղից:

ԳԻԻՂԱՅԻՆ. Խաբբերդից:

ԱԼԻ ԷՖ. (Զարբիսներին) Քակեցէ՛ք կապերը: ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Գիշացուս ձեռքի և ոտքի կապերը բախում եւ):

ԳԻԻՂԱՅԻՆ. (Աշխատում է ոտքի կանգնել, բայց զգացած ցաւիցը չէ կարողանում, գոտրում է):

ԱԼԻ ԷՖ. (Զարբիսներին) Օգնեցէ՛ք նրան...

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Գիշացուս վեր կենարուն օգնում եւ՝ րեկրիցը բռնելով և բարձրացնելով, որը զարբիսներին կարեւա՛ծ հագիչ հագ ոտի վրայ կանգնած մնում է):

ԱԼԻ ԷՖ. (Զարբիսներին) Առաջ բերէ՛ք: (Գիշացուն) Ստորագրէ՛ր:

ԳԻԻՂԱՅԻՆ. (Զարբիսների օգնութեամբ սեղանին է մօտենում, և քարտուղարի կողմից իրեն ներկայացուած բուշորը և գրիչը առնելով՝ դողդուռն ձեռքով ստորագրում է):

ԱԼԻ ԷՖ. (Գիշացուն) Գնա՛ մի քիչ հանգստացի՛ր... յետոյ մեզ կ'առաջնորդես վառողի թագցըրած արաը: (Զարբիսներին) Բանտ տարէ՛ք և առանձնացրէ՛ք:

(Զարբիսներից մեկը կրկին շորայելով գիշացուս ձեռքերը, րեկցը բռնում տանում է. րեւի խորքում աննետանում եւ):

ՕՍՄԱՆ ԷՖ. (Ծռելով Ալի Էֆենդուս ականջին մի բաւ է ստում):

ԱԼԻ ԷՖ. (Բարձր) Ես նրա յամառութիւնը ցոյց կ'տամ... (Գիշացուն) Կարօ՛, Կիրակոսի վիճակը տեսա՛ր... Է՛լ ինչ ասեմ, ոչ քեզ նեղութիւն տուր՝ ոչ մեզ, եկ ճշմարտութիւնը ասա՛: Զաղացում գումարւած ժողովին մէջ ո՞վքեր կային, ի՞նչ խօսեցին:

ԳԻԻՂԱՅԻՆ. Մի այդպիսի ժողովից լուր չունիմ...

ԱԼԻ ԷՖ. Ի գո՛ւր ուրանում ես, Մկրտիչը ա-  
մէն բան խոստովանել է... նա յայտնել է որ դու  
էլ ներկայ ես եղել այդ ժողովում:

ԳԻՒՂԱՅԻՆ. Սուտ է ասում:

ԶԱԲԹԻԱՆ. (Որ առաջին գիշացիկն տարել էր,  
բեմի խորքից վերադառնալով՝ Ալի Էֆեկընուն բա-  
րևում է քեմեկեմեմով) Ինտիլաքում՝ դրի՛:

ԱԼԻ ԷՖ. (Կատարած մի ոտը գետին և մի ձեռքը  
սեղանին խփելով) Անպիտան... մինչև որ ձեր  
հոգին դուրս չգայ՝ ձեր բերնից խօսք դուրս չէ  
գալու: (Չարքիաներին) Երեսին մեզը քսեցէք և  
արևի տակ՝ մի օտքի վրայ կանգնեցրէք, թող  
ճանճերը և մեղուները ծակծկեն նրա երեսը:

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Սեղանի վրայից մեղրի ամանը  
վերցնելով՝ քսում են գիշացու կրեքը) Մի օտի վը-  
րայ կանգնիր:

ԳԻՒՂԱՅԻՆ. (Մի ոտի վրայ է կանգնում, ձևե-  
ձերից և մեղուներից անձակատանալով՝ գրոխը աչ-  
ու ձախ շարժում է. իսկ երբ յոգնելով՝ ոտքը ցած  
է դնում, իսկոյն զարքիաները խփում են, նորից մի  
ոտի վրայ է կանգնում):

ԱԼԻ ԷՖ. Դրանք քեզ լաւ կը խօսեցնեն...

ԳԻՒՂԱՅԻՆ. Եթէ ինձ սպանէք էլ՝ սուտ չեմ  
խօսելու:

ԱԼԻ ԷՖ. Բեզ ո՞վ է ասում որ սուտ խօսիս,  
տեսածդ ասա՛:

ԳԻՒՂԱՅԻՆ. Դուք ինձ ստիպում էք՝ որ ժողովի  
մասին խօսիմ, որտեղ ես չեմ եղել, այդ ստել  
չէ՞ նշանակում. (Մեղուներից և ձևեձերից ներշնչով՝  
գրոխը աչուձախ շարժում է):

ԱԼԻ ԷՖ. (Բարկացած) Ա՛յ անպիտան... դու

չէի՞ր որ գիւղացիներին մութ գիշերով ջրաղաց  
հրաւիրեցիր, ասացիր որ փաստաբանը, բժիշկը ու  
վարժապետը պիտի խօսին... այնտեղ պիտի կազ-  
մեն Հայաստանը ազատելու ծրագիրը...

ԳԻՒՂԱՅԻՆ. Ես ոչ մի բանից լուր չունեմ:

ԱԼԻ ԷՖ. (Չարքիաներին) Ոտքերը կապելով՝  
մէջքի վրայ պառկեցրէք և խփեցէք:

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Գիշացու ոտքերը կապելով՝ մէջքի  
վրայ պառկեցնում և ցուպերը առնելով՝ սնխույ քա-  
կում են):

ԳԻՒՂԱՅԻՆ. (Կանքի ոյժով ոչ մի ձիւ չէ արձա-  
կում, առանկերը սեղմում և որևէ ցառի նշան չէ  
արտայայտում) Անօրէններ...

ԱԼԻ ԷՖ. Ուժով թակեցէք. սատկեցրէք շանը:

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Սկսում են աւելի ուժով քակել):

ԱԼԻ ԷՖ. Հը... հիմայ ձիշղը ասելու ես...

ԳԻՒՂԱՅԻՆ. (Մարած ձայնով) Ոչինչ գիտեմ  
(Սկսում է արիւն փսխել):

ՕՍՄԱՆ ԷՖ. (Ալի Էֆեկընուն) Կարծեմ բաւական  
է, արիւն է փսխում... մեռնելու աստիճանին է  
հասել:

ԱԼԻ ԷՖ. Թող սատկի... մինչև չըխոստովանի՛  
ձեռք չեմ քաշելու:

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Թեև քակը շարունակում են, բայց  
քակերուց այնքան յոգնել են, որ բոյր բոյր են խը-  
փում):

ԳԻՒՂԱՅԻՆ. (Չայն անել չէ հանում, կարծես մի  
ակշռել իր լիկի):

ԱԼԻ ԷՖ. (Չարքիաներին) Ի՞նչ, վախենո՞ւմ էք  
թէ խնայո՞ւմ. ամուր խփեցէք...

ԶԱԲԹԻԱՆԵՐ. (Աշխատում են ուժով խփել. յե-  
տոյ յակարծ ձեռք դադարեցնում են և Ալի Էֆեկ-  
ընուն նայում):

1. Բանտարկեալներին առանձնացնելու նեղ խցիկ:

ԱԼԻ ԷՖ. (Ֆարկացած) Ինչո՞ւ չէք խփում...

ՋԱԲԹԻԱՆԵՐ. (Տխուր և անարևել) Մեռանք...

ՕՍՄԱՆ ԷՖ. (Վեր կենալով՝ զարմացած՝ դիակն է դիտում) Բան... (Այլ էֆեկտով) Ինչ պատասխան պիտի տանք...

ԱԼԻ ԷՖ. (Անտարրեր և սառնասիրտ) Շանը մէկը թող պակաս լինի...

ՕՍՄԱՆ ԷՖ. Կենդրոնին ի՞նչ ենք ասելու:

ԱԼԻ ԷՖ. Այդ մասին մի տեղեկագիր պատրաստիր:

ՕՍՄԱՆ ԷՖ. Ի՞նչ գրեմ:

ԱԼԻ ԷՖ. Թուղթ գրիչ ան ձեռքդ, ես քեզ կ'ասեմ:

ՕՍՄԱՆ ԷՖ. (Գրիչ ու րոշորը վերցնելով՝ սպասում է):

ԱԼԻ ԷՖ. (Քիչ մտածելով) Գրի՛ր:

ՕՍՄԱՆ ԷՖ. (Շարունակ գրում է՝ ինչ որ Այլ էֆեկտին առում է):

ԱԼԻ ԷՖ. (Ֆարտոշարին տուն է տալիս) Կայսերական երկիրներին մի մասը Օսմանեան տէրութիւնից անջատելով՝ Հայաստան անան տակ՝ առանձին մի իշխանութիւն կազմելու չար դիտաւորութեամբ կազմեա՞ծ Հայ խոռվարար ընկերութեան մասնակցելու ամբաստանութեան տակ գտնուող Ա... գիւղացի 25 տարեկան Կարօն, ամսիս 10ին գիւղերը բանտին մէջ մեռած է՝ իր բնական մահով. մահուան պատճառը թոքախտը եղած է: Առ ի հաստատութիւն ստորև կ'ստորագրենք: (Գրոշրիւնը վերջանալուց՝ քարտոշարին) Տո՛ւր ինձ:

ՕՍՄԱՆ ԷՖ. (Թուշորը տալիս է Այլ էֆեկտին):

ԱԼԻ ԷՖ. (Նոյն գրռածքը լսելուց կարդալով՝ գլխով նաստատոշքեան լշան է տալիս, և ինքն էլ տակը ստորագրում) Լաւ է: (Ֆարտոշարին) Դուք ստորագրեցէ՛ք:

ՕՍՄԱՆ ԷՖ. (Թուշորը ստանալով՝ ներքևում ստորագրում է):

ԱԼԻ ԷՖ. (Չարիխաներին) Դուք էլ իբրև վկայ ստորագրեցէ՛ք:

ՋԱԲԹԻԱՆԵՐ. Գրել չենք իմանում:

ԱԼԻ ԷՖ. Կնքեցէ՛ք:

ՋԱԲԹԻԱՆԵՐ. (Տարատի գրպանից արկայն քսակներ հանում և նրանց միջից մի մի կնիք դուրս բերելով՝ տալիս են Օսման էֆեկտին):

ՕՍՄԱՆ ԷՖ. (Կնիքները ստանալով՝ մէկ մէկ նրանց վրայ մատով մկան քսում և րոշորի ներքևի մասը շփելով՝ կնքում է. յետոյ կնիքները տալիս է զարիխաներին):

ՋԱԲԹԻԱՆԵՐ. (Կնիքները ստանալով՝ շփում և տակերին քսելով՝ վրայի մկանը սրբում են. յետոյ անկում լոյն քսակների մէջ՝ դնում են գրպանները):

ԱԼԻ ԷՖ. (Թուշորը ծոցը դնելով՝ զարիխաներին) Դիակը բանտ տարէք և ծնողներին իմաց տւէք, որ գան տանեն:

ՋԱԲԹԻԱՆԵՐ. (Մէկը դիակի ոտքերից, միւսը բերի տակից բռնելով՝ տանում են, քիւրի տակով աննետանալով):

ԱԼԻ ԷՖ. (Թուշիկնակը հանելով՝ ձախտն է սրբում):

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

Նոյնք, Միւշդիր հասչի Գեորգ և Երկուս զարքիսներ

ԳԷՈՐԳ. (Բեմի խորքից գարով՝ մտնելով և Այի Լէֆեկոյուն, և տաճկական բարև տարով՝ կանգնում, քծնող շարժումներով) Պետոյի հարսին համար յիսուն ոսկի են խոստանում...

ԱՍԼԱՆ. (Կատարած, Գեորգի յետևից գրոշխ շարժելով, մեկուսի) Այ գազան, մեր տունը քանդողը դո՛ւ ես... մի կողմից մատնում, միւս կողմից կաշառքի միջնորդ ես լինում, կաշառքի կէսը զրպանդ դնելով. եթէ ազատեցի՛... ես քեզ ցոյց կ'տամ. եթէ չազատեցի՛ անշուշտ ընկերներս քո լէշը կը փռեն...

ԱԼԻ ԷՖ. (Գեորգին, արհամարհու շեշտով) Ի՞նչ պէս, խելքի եկե՛՛լ է... ամուսնու արածները խոստովանելո՞ւ է...

ՋԱԲԹԻԱՆԵՐ. (Յոգևարեկ ներս ևն մտնում, ձևտի քրտիկքիկն սրբելով և կանգնում ևն իրենց նախկին տեղը):

ԳԷՈՐԳ. Կին մարդ է, Լէֆէնդի՛, հաւատացէք ոչինչ չէ իմանում:

ԱԼԻ ԷՖ. Ամէ՛ն բան իմանում է այդ քածը... հենց ինքն էլ Ֆէդայի է, բոլոր գործերի մէջ ամուսնուն ընկերացած է...

ԳԷՈՐԳ. Դուք զիտէք որ ես նրանց չեմ պաշտպանում...

ԱԼԻ ԷՖ. Գիտե՛մ... բայց այդ պոռնիկը անպատճառ պէտք է խոստովանի թէ ո՞վքեր էին զալիս իրենց տունը, ժողովներում ի՞նչ էին որո-

շել, եթէ չասէ՛ բանտարկում եմ: (Ասլանին) Հը... այս բոլորը դու խոստովանիր, քածիդ չեմ բանտարկիր:

ԱՍԼԱՆ. (Արհամարհական մի ակնարկ ձգելով) Չեոքիցդ ինչ որ կ'գայ՝ արա՛... Կարօի նման սպանելու ես, էլ ուրիշ բան խօ՛չես անելու... Կնոջս էլ բանտարկիր:

ԱԼԻ ԷՖ. (Բարկոտրիւնը զսպելով) Սպասի՛ր, քո էլ ատամները կը ջարդեմ. չէ՛, այդպէս մեռնելով ձեռքիցս շուտ չէք պրծիր... իմանում եմ, Ֆէդայի էք, մահը արհամարհում էք, բայց ես չեմ մեռցնելու... այլ տանջելո՞ւ...

ԱՍԼԱՆ. Այդ միենոյնն է. չորս օր մի ոտի վըրայ ինձ այնքան թողեցիր... տասը օր կոյուղու մէջ պահեցիր... այդ էլ չըբաւեց, եղունքներս քաշել տեցիր... անիրա՛ւ, անօրէ՛ն, էլ ի՞նչ ես անելու:

ԱԼԻ ԷՖ. (Հեզուական ժպիտով) Հը... դեռ աւելին պիտի անեմ:

ԳԷՈՐԳ. (Այի Լէֆեկոյուն բարևիսուելով Ասլանի մասին) Ասլանը լաւ տղայ է, խնդրում եմ նրան խնայէք:

ԱՍԼԱՆ. (Արհամարհական շեշտով և զայրոյրով) Կեղծաւոր, քո բարեխօսութիւնը հարկաւոր չէ. երեսաց քեզ կարեկից ես ցոյց տալիս, իսկ յետևից մեր հորը փորում... մատնի՛չ...

ԱԼԻ ԷՖ. (Գեորգին) Եւ դո՛ւն եկել ես սրան և իր կնոջը պաշտպանելո՞ւ...

ԳԷՈՐԳ. Կնոջը մասին դարձեալ խնդրում եմ. նա բոլորովին անմեղ է. եթէ ամուսինը մի բան էլ արել է՝ ինքը մեղաւոր չէ... խնդրեմ նրա կողմից ստացէք այս փոքր գումարը. (մի քսակ փոյ է տալիս Այի Լէֆեկոյուն):

ԱՍԼԱՆ. (Գեորգիև) Քեզ ո՞վ է իրաւունք տւել:  
ԳԷՈՐԳ. Քո իմանալիք բանդ չէ:

ԱԼԻ ԷՖ. (Գեորգիև) Տեսնո՞ւմ ես սա անպիտաւ  
նի՛ն... իր կնոջ բանտարկելին է ուզում:

ԱՍԼԱՆ. Ես շնորհք չեմ խնդրիր, այլ արդաւ  
րութիւն, եթէ այն էլ գոյութիւն ունենար Տաճ-  
կաստանում...

ԱԼԻ ԷՖ. (Բարկացած) Լեզուդ քեզ քաշի՛ր, ան-  
պիտան... (Գեորգիև) Մի պայմանով կ'ընդունիմ,  
այն է՝ պէտք է ասէ իր տազեր Պետոյի տեղը:

ԳԷՈՐԳ. Նրա տեղը այժմ յայտնի է, բոլոր փա-  
խրատականները ֆէդայու խմբեր են կազմած, Պե-  
տոն նրանց հետ է:

ԱԼԻ ԷՖ. Չի սխալե՞ս...

ԳԷՈՐԳ. Ճիշդ տեղեկութիւն ունեմ, փաստաւ  
բանն էլ խմբապետնին է:

ԱԼԻ ԷՖ. (Գրոշխր օրօրելով) Թո՛ղ մի քանի օր  
լեգներում լաւ պարարտանան, որ կաշինին քեր-  
թելը հեշտ լինի... Քեզնից մի ծառայութիւն եմ  
սպասում, պէտք է իմանաս թէ նրանք ո՞ր լեռնե-  
րումն են ապրում:

ԳԷՈՐԳ. Գիւղում լրտեսներ շատ ունեմ, կ'աշ-  
խատեմ իմանալ...

ԱԼԻ ԷՖ. Կառավարութիւնը քո հաւատարիմ  
ծառայութիւնը լիով կը վարձատրէ:

ԳԷՈՐԳ. (Միևէկ զեռիկ խոնարհելով) Աստուած  
երկար կեանք տայ Սուլթանին: (Քծնելով) Խըն-  
դրեմ Մարոյին չբանտարկէք:

ԱԼԻ ԷՖ. Լա՛ւ, խաթրդ չեմ կոտրեր. (Ծիծաւ  
ղելով) Ի՛նչքան առիր:

ԳԷՈՐԳ. Հաւատացէք ոչ մի կոպէկ:

ԱԼԻ ԷՖ. (Գրոշխր օրօրելով) Դու ի՛նչ հին գայլն  
ես, որ... առանց կոպէկի մատդ չես շարժիր...

ԳԷՈՐԳ. (Քնթիծաղում է):

ԱԼԻ ԷՖ. (Քսակը բանալով՝ սասը ոսկի քարտու-  
ղարիկ է տայիս) Այս քո բաժինն է:

ՕՍՄԱՆ ԷՖ. (Ոչբարեբաւար ոսկիները գրպանե-  
լով) Շնորհակալ եմ:

ԱԼԻ ԷՖ. (Գեորգիև) Մարոյին չեմ հարցաքըն-  
նելու:

ԳԷՈՐԳ. Շնորհակալ եմ. եթէ թոյլ կ'տաք՝ ես  
կը գնամ, մնաք բարով. (Տաճկական քարե տալով՝  
գնում է բւժի խորքով):

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

### Մնացողները

ԱԼԻ ԷՖ. (Ասլանիկ) Կնոջը չեմ բանտարկելու,  
իսկ քեզ մինչև կախաղան տանելու եմ...

ԱՍԼԱՆ. (Արհամարհական շեշտով) Այդ աչքի ա-  
ռաջ ունեմ...

ԱԼԻ ԷՖ. Բայց մինչև կախաղան ելնելդ՝ մըտ-  
քիցդ չանցած տանջանքներ ես կրելու:

ԱՍԼԱՆ. Պատրաստ եմ...

ԱԼԻ ԷՖ. (Կատաղած) Տեսնե՛նք: (Զարբիաներիկ)  
Այս գեավուրին չարչարանաց տաւր՝ երկու օր կը  
պահէք առանց հացի և ջուրի. (Խիստ) ճշգրութեամբ  
պ'տի գործադրէք պատէրս, չլինի թէ կաշառք  
առնէք, ձեր գլուխը կը ջախջախեմ...

ԶԱԲԹԻԱՆԵՐԻՆ ՄԻՆ. Աստուած մեր Սուլթանին  
երկար օրեր տայ. մենք մեր ոտճիկով ապրում

1. Չորս պատերը և յատակը մխերով ցցւած նեղ սե-  
նեակ, որի մէջ բանտարկեալը ստիպւած է ոտի վրայ  
մնալ, այնքան նեղ է:

ենք. (Մեկուսի, հեզուսական ծիծաղով) Սա յիմարին տեսէք, ինքը կաշառքին մեծն է կուլ տալիս, իսկ փշրանքից մեզ զրկում է. եթէ գործերնիս ոտձիկի մնայ՝ անօթի կը սատկենք:

ԱԼԻ ԷՖ. (Ծաղրելով) Իսկապէս ասլանի<sup>1</sup> պէս քաջ ես եղեր... տեսնենք այդ քաջութիւնը սրբան է տեւուու. (Չարքիսներին) Տարէք, սեղանն էլ վերցրէք... (Ժամացոյցը նայելով՝ ոտքի է կշռում, քարտուղարին) Գնանք. (Գնայի կառավարական շէնքի կողքը ոտըներով՝ գնում է):

ՕՍՄԱՆ ԷՖ. (Թղթելով վերցնելով՝ հետևում է Այի Էփեկընէ):

(Չարքիսներից մին սեղանի վրայիները հաշաքելով՝ Ասրանի բնիցը բռնում և գնում են բեմի խորքով, միշտ սեղանը շարակելով՝ նրանց է հետևում):

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

### Մարօ (Առանձին)

ՄԱՐՕ. (Տխուր, բիւրի ու բռնակների միջով անցնում և հասնում է բեմի առաջամասը. ձեռքի շրտնած է մի կռձ և շարի մէջ փարսքած հաց: Չգուշոքեամբ շոք կողմն է դիտում: Բեմի մէջ տեղում կռձը և հացի ծրարը գետին դնելով) Մարդ չի երևում... (Այս ու այն կողմ դիտում և մեկին է փնտռում) Դեռ չեն եկել... (Անհանգիստ) Հիմի դուռը կը բացւի... ինչո՞ւ ուշացան: (Նորից դիտում է այս ու այն կողմ) Հեռուից մի սուեր է

1. Առիւծ:

երևում (կռձը և ծրարը վերցնելով՝ մի բիւրի տակ քաղցնում է) Ահա մտնում է (Ստուրը հեռուից երեք սնգամ տարում է. Մարօ մտիկ է տալիս, և բիւրի տակից դուրս գալիս) Մերոնցից է:

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե.

### Նայն և Պետօ

ՊԵՏՕ. (Լագի տարագով և զինած, ծառերի ու բիւրի միջից դուրս է գալիս) Մարօ...

ՄԱՐՕ. (Պետօյի վիզը փարսքելով) Հայրիկ...

ՊԵՏՕ. (Մարօյի անկառն համարներով) Գիւղում ի՞նչ նորութիւն կայ:

ՄԱՐՕ. (Բաժանելով) Մեւիքենց Սիմօնին և Լուսիկեան կարապետին էլ բանտարկեցին:

ՊԵՏՕ. (Չարանցած) Լուսիկեան կարապետին էլ...

ՄԱՐՕ. Այո՛:

ՊԵՏՕ. Այո քեզ հետաքրքիր բան: Այդ մատնիչին, այդ լրտեսին էլ բանտարկեցին... այս ի՞նչ խաղ է (Նստում է տախիլ, զեկը գրկում պահած), Նիստ Մարօ:

ՄԱՐՕ. (Նստելով) Չեմ իմանում, ողջ գիւղը զարմացաւ:

ՊԵՏՕ. Երեւի շները ուզում են նրա քթից ու բերնից բերել կերած կաշառքները... Լաւ, էլ ուրիշ ի՞նչ կայ:

ՄԱՐՕ. Երէկ գիւղ հարիւր ձիաւոր եկան մի հարիւրապետով. զէնքերն են հաւաքելու. յետոյ էլ ձեռ խմբին հալածելու. զգոյշ կացէք:

ՊԵՏՕ. Անհոգ կա՛ց, նրանք ի՞նչ վախկոտ շներն են... Անցեալ օր մի խումբ ձիաւորներ մեզ շատ

լաւ նկատեցին, բայց չտեսնալ ձեանալով՝ ճանապարհներն շարունակեցին:

ՄԱՐՕ. Սրանք ուտիկաններ չեն, ասկեարներ են...

ՊԵՏՕ. Այդ միենոյնն է, զինուոր թէ ուտիկան՝ բոլորն էլ ֆէդայու գնտակի առաջ վախկոտ կատուններ են. նրանք անզէն ու խեղճ ժողովուրդի առաջ քաջ են, եթէ կարելի է քաջութիւն ասել անզէն ժողովուրդին կոտորելը: Մարօ, ամենակարևոր խնդիրը զէնքերը հաւաքելու խնդիրն է. լաւ իմացած լինին՝ որ զէնքերը հաւաքելուց յետոյ՝ անզէն ժողովուրդին կը ջարդեն... մի հրացանը հարիւր կեանք կը փրկէ, չըլինի որ զիւղացիք յիմարանան զէնքերնին յանձնեն:

ՄԱՐՕ. Բայց ինչ կարող են անել... այդ անասունները զէնք չյանձնողին՝ անլուր տանջանքներ են տալիս: Գալուստեց հարսի վարտիքին մէջ մի կատու գցեցին, և սկսան այնքան թակել՝ որ կատուի ճանկերից արիւնլայ ընկաւ խեղճ հարսը... Հագիւ հարիւր ոսկի կաշառքով ազատեցին...

ՊԵՏՕ. (Չայրացած) Այ անամուսներ... Մարօ, իմ ասածներին լաւ ուշ դիր, ասա՛ զիւղացիներին որ հոգ չէ, մի քիչ տանջւին, կաշառքներ տան, բայց զէնքերնին չյանձնեն... աւելի լաւ է զէնքը ձեռքին մեռնել՝ թշնամուց զոհեր խզելով, քան թէ ոչխարի նման մորթուուել... Ո՛վ որ ցանկանում է՝ թո՛ղ զէնքը վերցնի՝ գայ մեզ միանայ:

ՄԱՐՕ. Շատ լաւ, նրանց կը հասկացնեմ: Ինձ էլ ուզում էին բանտարկել, բայց մայրիկը Միւրդիր Գեորգի միջոցով հարիւր ոսկի կաշառք տալով ազատեց:

ՊԵՏՕ. Լաւ է արել, սև փողը նեղ օրի համար է. մենք այլևս խաղաղ կեանք չենք կարող վայելել... փողը ինչի՞ս է հարկաւոր:

ՄԱՐՕ. Սառա խաթունը շատ է վախենում՝ որ իր տանն էլ կը խուզարկեն և ձեր թագցրած բօմբերը կը գտնեն:

ՊԵՏՕ. Սառան թո՛ղ միամիտ մնայ, սատանաները չեն կարող գտնել մեր թագցրած բօմբերը. մեզ հետ բաւականին ունենք, դրանք թող մնան գիւղի պաշտպանութեան համար, գուցէ մի օր պէտք կ'ունենանք: Քանի որ զինուորները դեռ գիւղումն են, մենք հենց այս զիշեր բանտի վրայ կը յարձակենք և մերոնց կ'ազատենք: Ո՛վքեր որ մտադիր են մեր խմբին միանալ՝ հենց այս զիշեր արևը մայր մտնելուց յետոյ թո՛ղ գան սարի աղբիւրի մօտ մեզ սպասեն:

ՄԱՐՕ. (Ոչրախ) Ես էլ կ'գամ...

ՊԵՏՕ. Քո գալը բոլորովին աւելորդ է: Մարօ. դու զիւղում մնալով՝ մեզ աւելի օգտակար կը լինես. եթէ դու զնաս՝ ո՞վ մեզ պաշար ու լուրեր է բերելու... յետոյ, բօմբերի թագստոցը դու և Սառան իմանում էք:

ՄԱՐՕ. Սառան էլ կարող է լուր ու պաշար բերել...

ՊԵՏՕ. Պառաւին այդքան նեղութիւն տալ անյարմար է: (Չորս կողմն է նայում և ոտքի կելում) Լոյսը բացեց... հեռանանք. ո՛ւր է պաշարը:

ՄԱՐՕ. (Ոտքի կելելով) Աղբիւրի մօտ եմ թուզել. (Թփի յետեից հացի ծրարը բերելով՝ տալիս է Պետոյի):

ՊԵՏՕ. (Հացի ծրարը բաց անելով՝ կրկն ծայրերից մէջքին է կապում, յետոյ Մարոյի ձախարհ համբուրելով) Մնաս բարով. ասածներս չմոռա-

նաս: (Թփերի ու ծառերի միջով գնում և անհետանում է):

ՄԱՐԹ. (Տխուր) Գնանք բարով. (Պետոյի յետևից կրկար նայում է):

## Տ Ե Ս Ս Ր Ա Ն Զ.

Մարթ (Առանձին)

ՄԱՐԹ. (Բեմի առաջ գալով) Ես այս գիշեր անպատճառ կ'գամ... անի Ասլանս, դու ինձ Հիւսէյին Բէգի ճիրաններից ազատեցիր, ես ինչո՞ւ համար քեզ չազատեմ զազանների ճիրաններից... Կամ քեզ հետ կը մեռնեմ... և կամ քեզ հետ լեռնեքում ազատ կ'ապրեմ... զիւղում մնամ ինչ անեմ, երբ քեզ չեմ վայելելու... քո կենդանութեանը որբեայրի մնամ... չէ՛, չեմ կարող համբերել... (Թփի տակը անցնում, կռժը լցնելով՝ ուսին վրայ է դնում, և սարերի միջից գնում անհետանում է):

## Տ Ե Ս Ս Ր Ա Ն Է.

Ալի Էֆ. Օսնան Էֆ. Գիշացի Կիրակոսը (ձեռքին շորայ) և կրկու Զարբիաներ (ձեռքերնին բան ու թրիչ բռնած: Բոլորը կառավարական շենքի կողմից դռնու կողքի, և Կիրակոսը առաջինին ձգած՝ հասնում են բեմի առաջի մասը):

Ա.Ի. Էֆ. (Գիշացուն) Եթէ մեզ խաբելու լինիս՝ հոգիդ կը հանեմ:

Գ.Ի.Վ.Ա.Յ.Ի. Մօտեցանք, Էֆէնդի. (քիչ առաջ նայով՝ ձեռքովը ցոյց է տալիս մի թփի տակը) Այստեղ է, Էֆէնդի: (Բոլորը ծռում նայում են թփի յետևը):

Ա.Ի. Էֆ. (Զարբիաներին) Փորեցէք:

Զ.Ա.Բ.Թ.Ի.Ա.Ն.Ե.Բ. (Սկսում են փորել և հողը մի կողմ լցնել: Հանդիսականները բան ու թրիչի շարժումները տեսնում են՝ երբ նրանք օդի մէջ են բարձրանում, իսկ փորած մասը չեն տեսնում):

ՕՍՄԱՆ Էֆ. Ո՛րքան խոր են թաղել...

Ա.Ի. Էֆ. Ո՛րպէսզի մարդու ձեռք չհասնի, բայց իմ ձեռքը հասնու:

Զ.Ա.Բ.Թ.Ի.Ա.Ն.Ե.Բ. Մի բան երևում է:

Ա.Ի. Էֆ. Այժմ զգուշութեամբ փորեցէք, միայն բահով...

Զ.Ա.Բ.Թ.Ի.Ա.Ն.Ե.Բ. (Միայն բանով հողը դռնու կողքի և տաշիս. քիչ յետոյ կրկուսը միասին ծռում և թիրեղեայ մի սևտուկ դռնու կողքի և բերում) Ահա:

Ա.Ի. Էֆ. (Ուրախ) Զգուշութեամբ կայմակամի մօտ տարէք: (Գիշացուն) Կիրակոս, եթէ բոմբերի տեղն էլ ցոյց տաս՝ քեզ անմիջապէս բանտից

կ'արձակեմ, չնայած որ օրէնքով ազատելիք չու-  
նիս: Քեզ տեսնեմ...

ԳԻԻՂԱՅԻՆ. (Միամիտ ձևակարգով) Բօմբը ի՞նչ է,  
Էֆէնդի՛...:

ԱԼԻ ԷՖ. Չե՛ս իմանում, հէ՞... Երևի կերածդ  
ծեծի ցաւերը մոռացել ես... Վիսա չունի, նորից  
կ'սկսենք... այն ժամանակ ցոյց կը տաս բօմբի  
տեղը:

ԳԻԻՂԱՅԻՆ. (Պարտադիր) Աստու՛ծ վկայ՝ չեմ  
իմանում...:

ԱԼԻ ԷՖ. (Չարքիսներին) Բանտ տարէք: (Գիշ-  
րացուն) Գնա՛ լաւ մտածիր, կախազան կամ ազա-  
տութիւն, քո ձեռքն է:

ՉԱԲԹԻԱՆԵՐ. (Միև վառօդի սևտուկէ ե վերցնում,  
միւր բահն ու թրիչը, և կիրակոսիև առաջինին զցած՝  
երկքը միասին շէքի կողմով գնում և սևնետա-  
նում ևե):

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

### Ամի Էֆեկդի և Օսնան Էֆեկդի

ԱԼԻ ԷՖ. (Գրպանից սիկառի տուփը հանելով՝ մի  
հատ վառու՛մ է և մի հատ էլ քարտուղարին է տա-  
լիս, տուփը գրպանը դնելով) Տեսնո՛ւմ ես այս ան-  
պիտաններին... Ի՞նչ պատրաստութիւններ են տե-  
սել... Ինձ լուր են տւել՝ որ սրա նման դեռ վեց  
եօթը սնտուկ վառօդ ունեն և մեծ քանակութեամբ  
բօմբ:

ՕՍՄԱՆ ԷՖ. Չեր ջանքերի շնորհիւ դրանք էլ  
ձեռք կը բերեն:

ԱԼԻ ԷՖ. Ամբողջ գիւղը հիմնայատակ եմ անե-

լու. տէրութեան թշնամիներին խնայելը մեղք է...  
այսօր արդէն բոլոր տները խուզարկելու են...  
Անպիտանները մի քանի հին շաշխանէներ են յան-  
ձնել, իսկ նոր սիսդէմի զէնքերից ոչ մի հատ...  
(Ժամացոյցիև հայերով) Գնանք գետափին մի լաւ  
քէյֆ անենք, այսօրւայ յաջողութիւնը մեծ ուրա-  
խութիւն պատճառեց ինձ... Առաջ Աստու՛ծ՝ մնա-  
ցածներն էլ շուտով ձեռք կը բերենք (Առաջանում  
է դեպի կառավարական շէքը):

ՕՍՄԱՆ ԷՖ. (Նրան հետևելով) Միւղիւր հաջի  
Գէորգից և Լուսիկեան կարապետից կարելի է յու-  
սալ, նրանք անպատճառ կ'աշխատեն իմանալ բօմ-  
բերի տեղերը: Լուսիկեան կարապետին ինչո՞ւ բան-  
տարկեցիք, եթէ ազատ լինի՝ աւելի լաւ տեղեկու-  
թիւններ կը քաղի:

ԱԼԻ ԷՖ. (Առաջանալով) Ահա մի ամիս է բօմ-  
բերի մասին ոչ մի ստոյգ տեղեկութիւն չկարո-  
ղացաւ բերել. բանտարկեցի՛ որ վախենայ և ազա-  
տելուց յետոյ աւելի եռանդով գործէ: Եթէ այս  
Հայերը չըլինին՝ մենք ոչ մի գաղտնիք չենք կա-  
րող իմանալ. (Գնում է):

ՕՍՄԱՆ ԷՖ. Դուք նրանց հոգեբանութիւնը լաւ  
էք իմանում. (Գնում է):

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

Յով. Էֆ., Բժ. Վսեկան, Նշան, Պետո և մի  
քանի գիշրացիներ

Բոլորն էլ զինեամ, հայրոզկային հագուստներով:  
Նախ իբրև առաջապան—խոշորակոշ գիշրացիներից  
մեկն է երևում, անցնում է օձապտոյտ՝ բրուշների վը-  
րայ բարձրանալով, քիերի յետևից անցնելով, գոռ-  
շոքիամբ չորս կողմը դիտելով՝ հասնում է բեմի  
առաջի մասը: Միշուները միեկույն կերպով նրան եև  
նետկում:

ՊԵՏՕ. Արևը մայր մտնելու վրայ է. նստենք  
սա աղբիւրի մօտ, թէ՛ ընթրենք և թէ՛ խօսենք  
մեր անելիքի մասին:

ՁԱՅՆԵՐ. Շատ լաւ, շատ լաւ:

ԲՈՒՈՐԸ. (Մօտենում եև այն քիիկն՝ որի տակից  
Մարօն չոր էր վերցրել. գեղերը իրեց գրկում  
պանած՝ նստում եև տալի վրայ բորբակ կազմած.  
գիշրացիներից մեկը շարակած ծրարը վար է առնում  
և բացում գետնի վրայ):

ՅՈՎ. Էֆ. (Հացից ոչ պակիրից մի մաս տարով  
գիշրացուն) Գու գնա այն բլուրի վրայ պահակ  
կանգնիր (մատով ցոյց տալով բրուշը): Չորս կողմը  
լաւ դիտիր, եթէ կասկածելի մի բան նկատես՝  
իսկոյն պայմանական նշանը տուր: Սարի աղբիւրի  
կողմն էլ լաւ դիտիր, գուցէ գիւղից տղերքը գան,  
եթէ նրանց տեսնես՝ երեք անգամ սուլիչը սուլէ:  
(Գիտակիր տարով) Ա՛ռ այս դիտակը:

ԳԻԻՎԱՅԻՆ. (Հացն ոչ դիտակը վերցնելով՝ բար-  
ձրանում է բրուշի վրայ, և այնտեղ մի կողմից ոչ-

տում և միշու կողմից չորս կողմն է դիտում, երբեմն  
դիտակով նայում է):

ՄԻԻՄՆԵՐԸ. (Մի կողմից ուտում եև և միշու կող-  
մից խօսակցում):

ԲԺ. ՎԱՆՆԵԱՆ. (Պետոյիկ) Չեր կարծիքը ի՞նչ է:

ՊԵՏՕ. Ժամը երկուքին՝ չորս կողմից յարձակ-  
ւել կառավարական շէնքի վրայ և ազատել բան-  
տարկեալներին:

ՆՇԱՆ. Իմ կարծիքով՝ մի մասը բանտի և միւս  
մասը Ալի Էֆէնդու տան վրայ յարձակուի:

ՅՈՎ. Էֆ. Մեր թշնամու ոյժը իմանում ենք,  
ընդ ամէնը տասներկու զարթիա կան, երկուսը  
բանտն են պահում, մի քանիսը կայմակամի և  
Ալի Էֆէնդու մօտ են մնում, իսկ միւսները կա-  
ռավարական շէնքում քնում են: Մեր առաջին  
նպատակը պէտք է լինի բանտարկեալներին ազա-  
տել, յետոյ Ալի Էֆէնդին պատժել: Մեզանից մի  
քանիսը կառավարական շէնքի վրայ յարձակում  
կը կեղծեն, մի քանիսը բանտի յետևում կը թագ-  
նուին, իսկ մի մասն էլ գիւղի ծայրին դիրք կը  
բռնէ: Այս կերպով նախ կառավարական շէնքում  
գտնեամ զարթիաները կուի կը բռնեն, մերոնք յետ  
նահանջում կը կեղծեն, զարթիաները քաջալերեւ-  
լով դուրս կը գան՝ նրանց հալածելու. այն ժա-  
մանակ բանտի յետում թագած տղերքը յետևից,  
իսկ դիրքի և միւս տղերքը առջևից կը կրակեն.  
երկու կրակի մէջ մնալով՝ բոլորն էլ կը կոտոր-  
ւեն: Շատ հաւանական է՝ որ բանտի պահակ ու-  
տիկանները և միւս պահապան ուստիկանները կուին  
մասնակցեն. այն ժամանակ մեր գործը աւելի կը

1. Տանկական ժամ, որ նշանակում է արևը մայր մըտ-  
նելուց երկու ժամ յետոյ:

հեշտանայ: Բանտի և Ալի Էֆէնդու տան վրայ կը  
յարձակուենք: Միայն զգուշանալու է՝ սխալմամբ  
միմեանց չխփենք:

ՆՇԱՆ. Լաւ ծրագիր է:

ՅՈՎ. ԷՖ. Եթէ ուրիշներ դիտողութիւն ունին՝  
թող անեն:

ՁԱՅՆԵՐ. Ոչ, ոչ, համաձայն ենք:

ՅՈՎ. ԷՖ. Ուրեմն, երեք մասի ենք բաժանուե-  
լու, բանտի վրայ յարձակողներին ես կը դեկա-  
վարեմ, շէնքի վրայ յարձակողներին՝ Պետօն,  
իսկ դիրքերն կը մնան բժիշկը, վարժապետը, Մա-  
րօն և երկու տղերք:

ՆՇԱՆ. Այդ անկարելի է, ես ձեր խմբի մէջ կը  
լինիմ...

ՅՈՎ. ԷՖ. (Ժպտարով) Լաւ:

ՊԱՀԱԿԸ. (Գիտակը անշքի՛ն՝ այս ու այն կողմ  
դիտելոց յետոյ՝ սոշիշով երեք անգամ սոշոյն է)  
Դի՛ւ... դի՛ւ... դի՛ւ...

ԲՈՂՈՐԸ. (Գեպի բրտըն ևն մտիկ տալիս):

ՊԵՏՕ. (Ոտի կանգնելով) Գիւղից աղերքը գա-  
լիս են:

ՅՈՎ. ԷՖ. Լաւ եղաւ, մեր ոյժերը աւելացան.  
(Աղբիւրի մօտ է գնում և գրպակից մի քաւ հանե-  
լով՝ շոշ է խնում, մի քանիսն էլ նոյնպիսի վար-  
շում են):

## ՏԵՍԱՐԱՆ Ժ.

Նոյնք, զիւսած գիշացիներ և Մարօ (տղամարդու  
շորերով և զիւսած) որոնք  
սարերից իջնում են և գալիս դեպի խոշերը:

ՆՇԱՆ. (Ոտքի կելելով) Ահա գալիս են...

(Գիշացիք հասնում են, միմեանց բարևում, ոմանք  
գրկախառնում և բոլորը միասին նստում են սափիկ):

ՅՈՎ. ԷՖ. Բարի եկա՛ք, քիչ հանգստացէք: Գիւ-  
ղումն ի՞նչ նոր բան կայ:

ՄԻՆ. Բոլորից անխտիր զէնք են պահանջում,  
և այն էլ այնալ՛ով... Խուզարկութեան համար  
զինւորները մտնում են տները, ամէն ծակօժուկ  
նայում, մինչև իսկ կանացի շորերը. և ի՞նչ որ  
արժէքաւոր բան անցնում է ձեռքերնին՝ վերցնում  
են: Չէնք չյանձնողին անխնայ թակում են: Թակ-  
ւողների, կանանց և երեխաների ճիշերը երկինք  
են բարձրանում... գիւղը ճշմարիտ դժոխք է դար-  
ձել...

ՅՈՎ. ԷՖ. Չէնք յանձնողներ եղան...

ՈՒՐԻՇԸ. Մի քանի չախմախլուներ յանձնեցին.  
մենք առաւօտ վաղ դուրս եկանք. Մարօն արդէն  
մեզ յայտնել էր...

ԳԻՒՂԱՅԻՔ. (Միմեանց երես նայելով՝ ծիծա-  
ղում են):

ՊԵՏՕ. Ի՞նչ էք ծիծաղում...

ԳԻՒՂԱՅԻՔ. Ոչ ի՞նչ... այնպէ՛ս...

ՅՈՎ. ԷՖ. (Երկար դիտելով Մարօյին) Այս երի-  
տասարդին չեմ ճանաչում, երևի Պօլսից նոր է  
եկել:

ԳԻՒՂԱՅԻՔ. (Ժպիտեիկն զսպերով՝ գարտեի մի-  
մեակնց կողքին մշտում են):

ՊԵՏՕ. (Ոչչադրոշքեամբ ղիտեղով) Դէմքը ինձ  
ծանօթ է երևում, բայց չեմ ճանաչում. (Մարօյիկն)  
Դու ո՞ւմ տնիցն ես:

ՄԱՐՕ. (Վեճիծարով և քիչ ձայնը շոխած) Պե-  
տօնց...

ՊԵՏՕ. Ո՞ր Պետօյենց (Աշէյի ոչչադրոշքեամբ ղի-  
տեղով) վճյ մուխդ չմարի, Մարօ... (Փարսաբշում  
է վիզին և ձակատը համբոշոքում):

ԲՈՒՐԲ. (Այշած և զարնացած կայում են, ոմանք  
ձայնում) Մարօն...

ՅՈՎ. ԷՖ. (Մարօյի մօտեկարով՝ ուսն է ձեռնում)  
Կեցցես, Մարօ'. Էթէ մեր կանայք քեզ նման  
խորհէին, մենք վաղուց տապալած կը լինէինք  
բռնակալութիւնը, ապրիս...

ՊԵՏՕ. Վերջապէս դու այս անխոհեմութիւնը  
արեցի՞ր...

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Չէ՛, Պետօ Ախպէր, Մարօն շատ  
լաւ է արել. գիւղում մնալը նրա համար աւելի  
վտանգաւոր էր, շնորք լցել են գիւղը, ամէն բան  
յուսալի է այդ անպատիւներից:

ՅՈՎ. ԷՖ. (Ժամացոյցիկն կայելով) Ժամը հասել  
է արդէն, բոլորդ էլ ոտքի ելէք և զինուորական  
կարգով շարուեցէք:

ԲՈՒՐԲ. (Չեքերեիկն ձեռքիկն՝ երկար շարում են  
կողք կողքի):

ՅՈՎ. ԷՖ. (Նրանց առաջը անցնելով) Մարօն իմ  
խմբի մէջ կը լինի, որպէս զի Ասլանին աւելի շուտ  
տեսնի: (Յետոյ գարով այս ու այն գիշոյցոշ մօտ՝  
հրամայում է այսպէս) Դուք իմ խմբի մէջ կը լինէք,  
դուք Պետօյի խմբի մէջ, դուք ղերքերում կը լինէք  
(Կարգադրեալոց յետոյ՝ բոլորիկն) Պատրաստուեցէք:

ԽՈՒՄԲԸ. (Ոմանք շիւտիչտակալները շտրում,  
ոմանք տրեխների կայերն են սարացնում, ոմանք  
գեկերը քննում):

ՅՈՎ. ԷՖ. (Դեպի սրանակը դառնարով՝ ստրում է  
երեք անգամ) Դի՛ւ... դի՛ւ... դի՛ւ...

ՊԱՀԱԿԸ. (Գայիս խմբիկն է միանում):

ՅՈՎ. ԷՖ. (Պանակիկն) Դու բժշկի հետ կը լի-  
նես: (Բոլորիկն) Պատրաստ էք:

ՉԱՅՆԵՐ. Այո՛...

ՅՈՎ. ԷՖ. Օ՛ն, առաջ, զգուշացէք շշուկ հա-  
նելուց:

(Բոլորը միմեանց յետեից գնում են, բիւրի մի-  
ջով որդաստոյտ շրջաններ են անում. կրքեմն բու-  
րրովիկն չեն տեսնում, յետոյ կողք երևում են բոշո-  
կների վրայ կամ բիւրի մէջ, և վերջապէս հասնում  
են կառավարական շէքի մօտ):

ՅՈՎ. ԷՖ. (Բարձրաձայն) Ամէն ոք իր որոշած  
տեղը գնայ, բոմբերին զգուշութիւն արէք:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ ԵՒ ՄԻ ՔԱՆԻՍԸ. (Բարձր մի տե-  
ղում դիրքեր են բռնում և հրացանները դեպի կա-  
ռավարական շէքի կողմը ուղղած պահում են):

ՅՈՎ. ԷՖ. ՄԱՐՕ ԵՒ ՄԻ ՔԱՆԻՍԸ. (Աշէյի առա-  
ջանում և անցնում են շէքի ետևը և անյայտանում):

ՊԵՏՕ ԵՒ ՄԻ ՔԱՆԻՍԸ. (Քիչ էլ առաջ են գնում,  
դեպի կառավարական շէքը համազարկ են տալիս):

## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

Նոյնը, Զարբիաներ, Ասրան և ուրիշ բանաստեղծներ

ՊԵՏՕ. Դէպի պատուհանները և դուռը մի համազարկ էլ... (Նորից որոտում են հրացանները: Երկրի պատռահաններից զարբիաների գրոշիներ են երևում, որոնք գեղեցիկն ուղղում են դեպի Պետոյի խոշորը և կրակում):

ՊԵՏՕ. Տղերքը, նշան առէք: (Տղերքը առանձին առանձին միմեանց վրայ հրացանները արձակում են, զարբիաները փոխարինում են):

ՊԵՏՕ. Տղերքը, դէպի բժշկի դիրքը յետ քաշուցէք: (Տղերքը քե՛ հրացան արձակում և քե՛ յետ են նստահարում: Երկրի մի կողմից գեև ի անջին մի քանի զարբիաներ են վազում և սկսում են հարածեղ Պետոյի խոշորը: Երկրի դռան էլ բացելով՝ մի քանի զարբիաներ ևս դռար են գալիս և միակում միմեանք ին՝ խոշորը հարածերու համար. պատռահաններում այլ ևս զարբիաներ չեն երևում: Փոխադարձ հրացանաձգութիւն է շիկում: Նոյն միջոցին բանտի դռնից ևս մի զարբիա դռար է գալիս և վազում դեպի միջ զարբիաների կողմը: Յանկարծ երանց յետևից երևան է գալիս Յով. Էֆեկորն խոշորը, և սկսում է կրակել զարբիաների յետևից: Այս անգամ բժշկի դիրքից ևս համազարկներ են տալիս, այնպես որ զարբիաները՝ բռով 8—9 հոգի՝ երկու կրակի մէջ են մնում. մի քանիսը վիրաւոր ընկնում են, երկու երեքը փախչում են, Պետոյի խոշորը հարածում է փախչողներին. իսկ Յով. Էֆեկորն խոշորը վերադառնում է դեպի բանտի դռարը, և մի համազարկ

տարուց յետոյ՝ դռար կտարում ենրս և մտնում: Պետոյի խոշորը այլ ևս չէ երևում, բայց երանց հրացանների ձայները հետուից լսում են: Բանտի մէջից ևս մի քանի անգամ հրացանի ձայներ են լսում: Մարօ՝ Ասրանի վզին փարարած՝ դռար է գալիս, Յով. Էֆեկորն, հայդակները և գիշարացի բանաստեղծները միմեանց յետևից դռար են գալիս, աղերքից մեկը վիրաւոր է):

ՅՈՎ. ԷՖ. Մարօ՝ Ասրանին և վիրաւորին ու միւս բանտարկեալներին բժշկի դիրքը տար. դու և մի սողայ դիրքը պահեցէք, իսկ միմեանքը թող զան միմեան մեզ: (Իր խոշորը) Տղերքը, անցնենք Ալի Էֆէնդու տան կողմը, ինչպէս երևում է՝ Պետո այնտեղ կուտւմ է. (չեռուից հրացանի ձայներ են գալիս, խոշորը անցնում է շէրի յետը և անայտատնում):

ՄԱՐՕ, ԱՍԼԱՆ ԵՒ ՄԻԻՎՆԵՐԸ. (Ուղղում են դեպի դիրքը: Ճանապարհին Մարօն պատահեալ գետին փռած մի վիրաւոր զարբիայի, թիօրթիկը հանում և կրակում է նրա վրայ) Դեռ կիսակենդան է. սատակի՛ր, անպիտան, ոչ կանանց պատւին խնայեցիք և ոչ էլ ընտանեկան սրբութիւններին: (չաւում են բժշկի մօտ, Ասրանն ու բժիշկը համբարում են: Մարօ բժշկին) Խմբապետը ասում է՝ որ դուք բոլորը գնաք իրենց օգնելու:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. Իսկոյն... (Խոշորը) Ծտապենք (Ծտապ իջնում են դիրքից և առաջանում: Այս միջոցում շէրի յետևից բանտի պայրման սարափելի մի ձայն է գալիս, որին հետևում է ՀՈՒՐԲՄ... աղարակներ) ինչպէս երևում է՝ Ալի Էֆէնդու տունը օդը թոցրին... (Դեռ շէրին չմտնեցած՝ մի հայրուկ Յով. Էֆեկորն շարակած գալիս է. Յով. Էֆեկորն գրոշիւր մի կողմի վրայ ընկած է: ԲԺ. Վանեան

միշտներից առաջ անցնելով՝ վազում է դեպի Յով-  
Էֆեկոյիև) Վճյ... այդ ի՞նչ է...

ՀԱՅԳՈՒԿԸ. Ծանր վերաւորւած է. դարձէք, ամէն  
բան վերջացրինք, մերոնք էլ գալիս են: (Առաջա-  
նում է դեպի դիրքը):

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Նրա յետևից դեպի դիրքը գա-  
լով՝ իր խմբի հետ) Շուտ բեր, վերքը տեսնեմ:  
(Հասնում են դիրքը):

ՄԱՐՕ ԵՒ ԱՍԼԱՆ. (Տեսնելով Յով. Էֆեկոյն վի-  
ձակը՝ վազում են դեպի այն, և հայրակի շարակից  
ցած բերելով՝ պառկեցնում են գետնի վրայ): Վճիս...  
վճիս... վճիս...

ՊԵՏՕ ԵՒ ԽՈՒՄԲԸ. (Այս միջոցում Պետոյի խոսքի  
էլ շեքի յետևից դուրս է գալիս և շուտ դեպի դիրքը  
առաջանում) Շուտ գնանք, տեսնենք ի՞նչ պէս է  
Յով. Էֆեկոյին:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Յով. Էֆեկոյն մեջքը բաց անե-  
լով՝ վերքը քննում է) Գնդակը դուրս չէ եկել...  
ինչպէս երևում է՝ երիկամը փնասել է. (վերքի  
վրայ դեղ է դնում և կապում):

ՊԵՏՕ. (Դիրքը հասնելով աձապարսեօր՝ բժշկին)  
Վերքը ի՞նչ պէս է:

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Տխուր շեշտով) Վտանգաւոր է...

ՊԵՏՕ. Ափսոս: Չմնանք այստեղ, գնանք մեր  
սարերը, այստեղ մնալը վտանգաւոր է: (Տղերքին)  
Վերաւորներին շալակեցէք... Բոլորս էլ շուտով  
կը հանգստանանք. (Ասլանին համբուրելով) Ասլան  
գաւակս, ի՞նչ պէս ես:

ԱՍԼԱՆ. (Հօրը համբուրելով) Լաւ եմ, հայրիկ:  
(Հայրակներից մին Յով. Էֆեկոյիև և մեկն էլ  
միշտ վիրաւորին շարակելով՝ խոսքը նորից որդապը-  
տոյտ ձանապարհներով հասնում է բեմի առաջի մա-  
սը, աղբիւրի մօտ: Վիրաւորներին ցած են դնում.

ոմանք պառկում են, ոմանք աղբիւրի մօտ են վա-  
զում ու ջուր խմում, ոմանք նստում են խօսակցում  
ընկալն: Խակ մի քակիւր Պետոյի, Նշանի, Մա-  
րոյի, Ասլանի հետ շրջապատում են Յով. Էֆեկոյիև,  
տափիև նստած):

ՊԵՏՕ. Բոլորդ հանգստացէք, քնողները թող  
քնեն, միայն մէկը պէտք է պահակ մնայ, լուսա-  
բացին կը քաշենք սարերը:

ԱՍԼԱՆ. Բոլորը յօգնած են, ես պահակ կը կե-  
նամ. (մի հրացան վերցնում և զնում է բոլորի վրայ  
կանգնում):

ՆՇԱՆ. (Յով. Էֆեկոյն ձակատը շոյելով) Ի՞նչ պէս  
ես, ընկեր ջան...

ՅՈՎ. ԷՖ. (Նշաղեղ օսելով) Զո՛ւր...

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Խակոյն ցատկում և աղբիւրից մի  
բաւ ջուր է բերում) Խմի՛ր:

ՄԱՐՕ. (Յով. Էֆեկոյն գրոշիւն է բարձրացնում):

ՅՈՎ. ԷՖ. (Ծանր ծանր ջուրը խմելով) Ո՛ւֆ...  
(Գրոշիւր ընկնում է):

ԲԺ. ՎԱՆԵԱՆ. (Քննելով Յով. Էֆեկոյն սիրտը,  
տխուր և յուսահատ մի շեշտով) Ափսոս... վերջա-  
ցաւ... (սկսում է մի կողմ քաշիլ և արտասուել):

ՊԵՏՕ. (Յով. Էֆեկոյն գլխի վրայ ձերտոյիւր ար-  
տատում և նեծկրտում է):

ՆՇԱՆ. Համբուրելով Յով. Էֆեկոյն աչքերը՝ մի  
կողմ քաշում և նեծկրտում է) Վճիս, թանկագին  
ընկեր...

ՄԱՐՕ. (Դիակի գլխու վերեւ նստած՝ կրկին նման  
բաց շինում և արտաձնիկ կրգում է մեռելի մի ողբ-  
կրգ):

(Բոլոր ներկաները, բացի մեկից՝ որ խոր քնում  
է և խոսում, վեր են կենում և գալիս հաւաքում են  
դիակի շուրջը, մեկ մեկ համբուրում են և յետ քաշ-

առմ. յետոյ հաւաքում եւ Մարոյի մօտ, երգում եւ խմբովիև ողբերգի երկրորդ տաւեր. առաջիև տաւեր Մարօև է երգում առանձիև. առեև մի տաւ երգեւ յոչ յետոյ՝ խմբովիև բարձրաձայն հեծկրտում եւ, ինչպես այդ յիևում է գաւառներում մեռելի տևում):

ԱՍԼԱՆ. (Ողբի ձայնը յսերով՝ իսկոյն վազում է դիակի մօտ և նետում կրտ վրայ՝ համբոյրներով ծածկելով) Ազնիւ ընկեր... մեզ որք թողած ո՞ւր ես գնում (մի կողմ է քաշում և հեծկրտում է):

(Բեւեի վրայ մի քանի յոպէ խոչ հեծկրտակներ եւ յառում, մեկ էջ երբեմն քնոյ հայրուկի խոչոռնը):

ՊԵՏՕ. Ընկերներ, կարծեմ էլ բաւական է. եղածը անդառնալի է. մենք ուրիշ պարտականու թիւններ էլ ունենք կատարելու. նրա յիշատակը մեր սրտերում անջինջ կը մնայ, նրա կորուստը մենք միշտ լացելու ենք, այժմ նրա յիշատակին մեր վերջին յարգանքը նւիրենք: (Բժ. Վանեսևսիև) Բայց նախ քան թաղումը կատարելը՝ մի անգամ միւս վերաւորին էլ տեսէք, ցաւի մեծութիւնից մենք նրան բոլորովին մոռացանք:

ՎԻՐԱՆՈՐԸ. (Խմբի միջից դուրս գալով) Ոչինչ, յետոյ էլ կարելի է. ոտից անջնաս վերաւորել եմ, գնտակը արդէն դուրս է եկել, լաւ կապել եմ, արիւն էլ չէ գալիս:

ՊԵՏՕ. Լաւ ուրեմն: Բոլորդ էլ վեր կացէք, աղբիւրի գլխին փորեցէք նրա փոսը. թո՛ղ մեր գիւղի հարսերը և աղջկունք այս ուխտատեղին գալիս՝ յիշեն միշտ իրենց գիւղի պահապան հրեշտակը և հայութեան պարծանքը:

(Հայրուկներից մի քանիսը աղբիւրի մօտ յիփե տակ փորում եւ խակարկներով):

ՄԱՐՕ. (Հեծկրտարով) Անբաղդ հոգի, մի քահաւային աղօթքին էլ չարժանացար...

ԱՍԼԱՆ. Սա քաջ զինուորի մահ է... Մենք մեր երգերով կը կատարենք նրա թաղման հանդէսը. թո՛ղ մեր արտասուքները հանգիստ տան նրա ոսկորներին, թող նրա հոգին հրճւի՝ տեմնելով իր հաւատարիմ ընկերների գործունէութիւնը: Մենք նրա սկսած սուրբ գործը շարունակելով՝ պիտի յարգենք նրա յիշատակը:

Բժ. ՎԱՆԵՍՆ. Ընկերներ, այն օրից՝ երբ ձեռք ենք առել այս սուրն ու հրացան, միշտ աչքի առաջ ենք ունեցել այսպիսի թանկագին զոհեր... Ճիշտ է, առաջին տպաւորութեամբ չենք կարողանում հաշտել տխուր իրականութեան հետ, բայց երբ յուզմունքը հանդարտում, և սառն դատողութիւնը իշխում է, այն ժամանակ յիշելով մեր յեղափոխականի պարտականութիւնը, ակամայ խոնարհում ենք ցուրտ իրականութեան առաջ:

ԱՍԼԱՆ. (Խռկացոյ քնոյի մօտ գնարով՝ յեր քրտնում և շարժում է) Դէ... վեր կաց...

ՔՆՈՂԸ. (Դժարաւ զարթկելով՝ իսկոյն ձեռքը տաւում է հրացանիև և բացագունում) Հէ...

ԱՍԼԱՆ. Ես եմ, բան չկայ, վեր կաց...

ՔՆՈՂԸ. (Կիսարուն վեր կենարով՝ աչքերև է շփում) Ի՞նչ կայ, երկամբ եմ քնել, ինչ...

ԱՍԼԱՆ. (Յոյց տարով դիակը) Մեր խմբապետին, մեր անձնագորհ ազնիւ ընկերին վերջին յարգանքդ տուր:

ՔՆՈՂԸ. (Զեքը ձեռքիև՝ գնում դիակի մօտ և մի ոտով ծուր դնելով՝ երկիշարժութեամբ համբոյրում է ձակար) Ափսոս... մեր պաշտպանը կորաւ, անտէր մնացինք. (Լաց է յիևում):

ՆՇԱՆ. Դիակը փոխադրենք փոսը. (Մտնում է դիակի ուսի տակ՝ մեկ քեիցը բռնելով):

(Բժ. Վանեսևս, Պետօ և Ասլան կոյնպես դիակի


գլխից, րևից, ոտքերից բռնելով՝ բարձրացնում են, միշտնեղն էլ նրանց օգնում են, և ձեռքի վրայ դիակը տանում են քփի ևտեր փոսը իջեցնում և հողը վրան տալիս: Բոլորը կրկին լացում և նեծկրտում են):

ՆՇԱՆ. Ընկերներ, պահիկ մի դադրեցնենք մեր արտասուքը՝ յետոյ ներքնապէս արտասուելու համար: Մենք այսօր հողին ենք յանձնում մեր ամենախորհրդի ընկերներից մէկին, Յովհաննէս Լ.Ֆէնդուն. նա թողեց իր հանգիստ կեանքը և փայլուն ապագան ու նւիրեց հարստահարւածների դատին. տառապեցաւ ժողովրդի ցաւերովը, անխոնջ աշխատեցաւ և կազմակերպեց յեղափոխական սուրբ գործը, և վերջապէս անձնուիրութեան և անձնազոհութեան կենդանի օրինակը տւեց մեզ, զոհաբերելով իր կեանքը: Նա տգոհ չմեռաւ, յաղթութեան դափնին գլխին՝ մտաւ գերեզման: Ընկերներ, թող նրա յիշատակը խորաքանդակ մնայ մեր սրտի խորքերում, թող նրա անձնուիրութիւնը և մահը օրինակ լինի մեզ: Թէև մեռաւ մեր ազնիւ ընկերը... բայց իր հետ չմեռան իր գաղափարները: Մենք կ'առաջնորդենք քո գաղափարներով, ո՛վ թանկագին ընկեր, մենք քո յիշատակը կը յարգենք քեզ նման գործելով. հանգիստ ոսկերացդ, ո՛վ պաշտելի ընկեր:

ԲԺ. ՎԱՆՆԱՆ. (Երկու ձեռքերը աչքերին տանելով՝ արտասուքներ հառաքում և քափում է գերեզմանի վրայ) Այս արտասուքներս թող ցօղեն ոսկերուտիքդ, ո՛վ վեհազնիւ ընկեր... յիշատակիդ նւիրելու սրանցից աւելի թանկագին բան չունիմ... Քահանայի օրհնէնքի տեղ՝ ընդունիր մեր սրտաբուխ երգը, որին դու այնքան սիրում էիր: (Ներկաներին) Ընկերներ, իբրև մեր վերջին հրաժեշտի ողջոյնը, իբրև մեր վերջին յարգանքը՝ երգենք Բաժնորդական երգը:

(Անբողջ խուշը սփում է երգի մարզական այդ կրգը):

ՊԵՏՕ. Ընկերներ... Մեր զինուորական և ընկերական վերջին պարտքը կատարենք, երեք անգամ համազարկ տալով: Օ՛ն, ուղղեցէ՛ք ձեր հրացանները: (Բոլորը ուղրում են իրենց հրացանները, Պետօն և Մարօն էլ միասին) Մէ՛կ, երկո՛ւ, երե՛ք... (Երեք անգամ համազարկ են տալիս): — ՎԱՐԱԳՈՅԻ:



## ԿԱՐՆԻՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

12	804	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
18	28	ԻՐԵՆ	ԵՍԻՆ
48	5	ՄԱՆ	ՂՐԱՆ
»	12	ՄԱՆԻ	ՄԱՆ
61	2	ՄՈՒՍԱՆԵՐԸ	ՄԱՍԱՆԵՐԸ
»	8	ԳՆՂԷ	ՔԱՆՂԷ
»	»	ՀԻՄ	ՀԻՄ
68	22	ՄԱՐՂԻԿՆԵՐԻ	ՄԱՐՍԻԿՆԵՐԻ
73	2	ՍՅՆ	ՍՅՍ
74	19	ՃԱՆԱՍԱՐՀԵԼՈՎ	ՃԱՆԱՍԱՐՀԵԼԵՎ
75	7	ՃԱՆԱՍԱՐՀԵԼՈՒ	ՃԱՆԱՍԱՐՀԵԼՈՒ
79	19	ԱՍՏԵՍՏՈՎ	ԱՍՏՈՒՏՈՎ
80	31	ՍՐՃԻԿԸ	ՍՐՃԵՎԸ
90	5	ՄԿՂ	ՂԵՂ
»	13	ՂՕՂԱԿՆԵՐԸ	ՂՕՂԱԿՆԵՐԻ
94	3	ՄԱՍԵՐՈՆ	ՄԱՍԵՐՈՆՑ
103	1	ՐԱՆՄԱՐԿՆԵՐԸ	ՐԱՆՄԱՐԿԵԼՈՒ
106	26	ՂՈՒՐ	ՂՂՍՐ
108	27	ԽՂԵԼՈՎ	ԽԼԵԼՈՎ
124	33	ՔԱՀԱՆԱՅԻՆ	ՔԱՀԱՆԱՅԻ



Գ Յ Ի Գ Թ Ի Ո Յ Ա Մ Ե Ի

Բ Մ Զ Գ Ա Ք Ե Գ

Մ Ի Կ Թ Ի Ո Ն Ա Մ Թ Ա Զ Լ Ո Ո Ս Մ Ս Ի Մ Յ Ո Ղ Պ Թ

Մ Ի Մ Մ Ս Ս Ի Կ Գ Գ

մայիսի ցայտմունք — : Ը մայիսի ցայտմունք ] — . 1

Ը Ն Գ Ա Ր Զ Ա Կ

Դ Պ Ր Ո Ց Ա Կ Ա Ն Ա Ռ Ո Ղ Զ Ա Պ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ուսուցիչների, Աշակերտների եւ Ծնողների

համար

679 էջ, 8<sup>0</sup>. և 120 պատկեր

Գինը 4 ռուբլի (Նախապէս 6 ռուբլի էր) .

Տարեկանումս համար զեղչւած՝ միայն 30 դրուշ .

Մեր այս ընդարձակ երկասիրութիւնը 2 ռուբլի բաժանորդագրու-  
թեամբ սկսանք հրատարակել, բայց յետոյ նկատելով 800 օրինակի  
վրայ եղած մեծ ծախքը, զրքին արժէքը նշանակացինք 6 ռուբլի: Եւ  
տեղի զանգատեցան արժէքի թանկութեան համար, մանաւանդ ուսուցիչ-  
ների նիւթական տխուր կացութիւնը մասնանիշ ըրին, յարգելով մեր  
բարեկամներու այդ դիտողութիւնը, զինք 4 ռուբլիի իջեցուցինք, ամեն  
տեղի համար:

Հակառակ մեր կատարած այս կարեւոր զեղչին, նորէն գնողներ չը  
գտնուեցան և զրքերը մնացին փոշիներու տակ: Այս անգամ Տարեկանու-  
մէն նոյն կարգի դիտողութիւններ կ'ըլլան արժէքի մասին:

Ուրեմն, բացի բարոյական վարձատրութենէ ուրիշ որ և է ակնկա-  
լութիւն մը չունենալով այդ զրքէն, այժմ որոշեցի Տարեկանումսի հա-  
մար 30 դրուշ նշանակել, պէտք է հաւատալ, որ իւրացանչիւր զիրքը  
իմ վրայ նստած է մօտ 6 ֆրանկ: Ուրեմն, եթէ գրավաճառներուն հաս-  
նելիք 25<sup>0</sup>/<sub>100</sub>ը հաշւենք, նոյն իսկ նիւթական վնասով վաճառած պիտի  
ըլլանք: և մենք այդ վնասը աչքի առաջ ունեցանք, միմիայն օգտակար  
ըլլալու համար հայ մատաղ սերունդին:

Եթէ երբէք այս անգամ ալ մեր զրքերը փոշիներու տակ մնան !!!  
հայ հասարակութիւնը կասկածած պիտի ըլլայ հեռուեալ վկայութեանց  
անկեղծութեանը վրայ !!! Որովհետեւ այլ ևս գանդատի որ և է բան չէ  
մնացած:

Իոկտ. Կ. Յ. Փաշայեան

ԼՐԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ

«Այս օգտակար և մեր կրթական գործի համար անհրաժեշտ հրատարակութիւնը սկսել է լոյս տեսնել պրակներով: Յարգ տպած 64 երեսներից կարելի է եզրակացնել որ հայ ուսուցիչները, ծնողները և նոյն իսկ հասակաւոր աշակերտները կ'ունենան մի հմուտ ուղեցոյց՝ դպրոցական առողջապահական զանազան հարցերում: Պարզ ոճը, բազմաթիւ պատկերները զիւրաժատելի են դարձնում ճոխ բովանդակութիւնը: Յանկալի է, որ մեր բոլոր կրթարանները բաժանորդ գրեն և այդպիսով արագացնեն այդ աշխատութեան տպագրութիւնը այս ուսումնական տարուայ սկզբում»:

«Մուրճ», 1905, թ. 9, Սեպտեմբեր:

«Մեծ. հեղինակն ամէն ջանք ւրած է՝ ամենայն մասամբ կատարելալ, լաւ և օգտակար գործ մը ի լոյս բնծայելու, և ունեցած է իր առջև ազգային և օտար բժշկական գործերը: Ամենահարկաւոր և օգտակար օգնական մը դպրոցական վարիչներու»:

«Բազմալէս», 1906, թ. 6:

«Ստացանք Տր. Կ. Փաշայան խանի այս լիակատար, բազմակողմանի և ամեն գնահատութեան արժանի գործը՝ որ հեղինակէն իւրած է այնքան աշխատութիւն և զոհողութիւն»:

«Անհրաժեշտ է որ ամեն ուսուցիչ և ամեն ծնողը ունենայ հատ մը Ընդարձակ Գպրոցական Առողջապահութեան, ճոխացած 120 պատկերներով, որ 660 էջերու մէջ կը խօսի մանուկի մը մարմնական գարգացման բոլոր պայմաններուն վրայ ու այնքան հասկանալի կերպով կը զիւրացնէ ծնողին, ինչպէս դաստիարակին խնամատարութեան պաշտօնը»:

«Ռագուիկ», 1906

«Այս լուրջ ձեռնարկութիւնը այժմ վերջացած է տպագրութեամբ և մեր աղքատիկ գրականութեան մէջ կարող ենք մասնացոյց անել իսկկապէս հմուտ և գիտական պատրաստութեամբ կազմուած մի աշխատանք, որ պէտք է դառնայ անհրաժեշտ իւրաքանչիւր դպրոցական գրադարանում և սեղանի զիրք լինի աշակերտները դաստիարակութեամբ պարասպող իւրաքանչիւր հայի համար»:

«Կիւթերը դասաւորուած են հետեւել մասերում. 1) Գպրոցական միջավայր. շէնքը, դասարաններ, նստարաններ, օգաւորում, լուսաւորում, և այլն. 2) Ուսումնական միջավայր. Մտքի յոգնածութիւն, ուսուցման մէթոդ, քննութիւն, կարգապահութիւն, մարմնավարժութիւն, և այլն. 3) Անհատական առողջապահիկ պայմաններ. քուն, մաքրութիւն, հագուստ, սնունդ, և այլն. 4) Գպրոցական հիշատարաբաններ. 5) Վարկիչ հիշատարաբաններ, նախագոյնական միջոցներ, համաճարակներ, բժշկական հսկողութիւն, և այլն. 6) Գպրոցական արկածերի և անհանգստաբանքանք նախնական դարումները. շնահեղձութիւն, ճմլումներ»:

Ղեկնացումներ, Թունաւորում, արեւահարութիւն, ջերմ, և այլն. 7) Ուսուցիչների առողջապահութիւնը»:

«Այդ ճոխ, համապարունակ բովանդակութիւնը բնուում է 653 էջ: Գրքի մէջ կան բազմաթիւ նկարներ որոնք, զիւրացնում են ըմբռնելը և թերեւս անհրաժեշտ է թուղթը շքեղ . . . »:

«Մուրճ», 1906, թ. 6:

«Գպրոցական առողջապահութեան մասին այսպիսի ընդարձակ զիրք մը առաջին անգամ է որ կը տեսնուի մեր ազգի մէջ: Կը բաղկանայ ութսուտ 679 երեսներէ և ունի 120 պատկերներ: Բժիշկ հեղինակն իր այս կարևոր ու երկարատե աշխատութիւն պատրաստած ժամանակ, հայերէն կամ օտար լեզուով 50-ի չափ աշխատութիւններ աչքի առջև ունենալէ զատ՝ ուշադրութեամբ հետևած է սոյն նիւթին նկատմամբ հետզհետէ լոյս տեսած նորագոյն հրատարակութիւններին ալ: Գպրոցական առողջապահութեան հետ մտնել կամ հետուէն կապ ունեցող շատ մը նիւթեր ուշադրութեան արժուած են այս ընդարձակ աշխատութեան մէջ. շատ մը հիւանդութիւններ իրենց պատճառներով մէկտեղ նշանակուած և զգուշական միջոցներ ցոյց տրուած են: Գիրքը չը տեսնողներին գուցէ թանկ կերելի անոր զինքը, 15 ֆրանկ, բայց ստացողը պէտի տեսնէ որ աժան է ոչ միայն անոր պարունակութեան օգտակարութեանը, այլ և անոր հրատարակութեան ծախսերին հետ բաղաժամամբ, որոնք հաշիւը դրուած է գրքին վերջը: Ոչ միայն մանկավարժական գործով ի պաշտօնէ հետաքրքրուողներին, այլ և դպրոցական զաւակ ունեցող ամեն անձի համար անհրաժեշտ է ունենալ հատ մը այս գրքէն, որով թէ՛ ինք մեծալէս կօզտուի և թէ՛ գրքին հեղինակը քաջալերած է լինի մանկավարժական և գիտական այսպիսի օգտաւէտ գրքերի հրատարակութիւնը շարունակելու»:

«Գրքին սկիզբը դրուած է նաև հեղինակին պատկերը»:

«Արևեհիս», 1906, թ. 36:

«Ելիպտոսից Թիֆլիս է եկել ծանօթ հայ գրող և գործիչ սօկոր Կ. Փաշայան - խան, որ ուղևորվում է դարձեալ Պարսկաստան, Բանդեր - Գեազ քաղաքը՝ բժշկութեան պաշտօնով: Կրա վերջին աշխատութիւնը («Գպրոցական Առողջապահութիւն») արդէն լոյս է տեսնում ամբողջովին, և մենք յանձնարարում ենք բոլոր մեր դպրոցներին և մանկավարժներին ձեռք բերելու այդ զիրքը դպրոցական գրադարանների համար»:

«Մլակ», 1906, թ. 156:

«Մասնագէտի մը յատուկ հմուտ աշխատասիրութիւն մըն է Տր. Փաշայանի «Գպրոցական Առողջապահութիւնը»: Ահարկ մը միայն բաւական է համոզուել ընթերցողը, թէ ժամանակ ու ջանք ինչպէս և չէ շօշափելու բոլոր այն առողջապահական և մանկավարժական հարցերը, որոնք տան ու դպրոցին մէջ կը ներկայանան ծնողաց և ուսուցիչներուն: Մենք վստահ ենք թէ առողջ ու կորովալի սերունդ մը պատրաստուելու ազնիւ ձգտումն է որ միշտ է յարգելի հեղինակը այս խն

շոր և օգտակար հատորը լոյս ընծայելու, յանձն աննելով ահագին նիւթական զոհողութիւններ»:

«Լեզուն պարզ է և զիւրահասկանալի»:

«Առաք» (Ամերիկայի) 1906, թ. 40:

«Այս զործն վերջերս հեղինակին Աղէքսանդրոյ կանսեթրս անուն անձնական տպարանէն լոյս տեսաւ. իր կարեւորութեան աղազաւ կարժէ որ մասնատոր զրադատականաւ մը ներկայեմը զայն «Լուսաբեր» ի բնթերցողաց»:

«Տպագրութիւնն մաքուր, թուղթն պտտած և պատկերներն լաւ կրնան համարուիլ, 680 մեծադիր էջերէ հանելով առաջարանն, կոչն, նախարանն, նիւթոց ցանկերն, սխալացոյցն ու վերջարանն կը մնայ զուտ շորք 630 էջ բնագիր (texte), որ արդարեւ պատկառելի կրնայ համարուիլ»:

«... Սա դասագիրք մը չէ, այլ դպրոցներ կառավարելու համար առողջապահական խրատներ և որ միայն վարժապետանոցներու մէջ զործածուելու է իբր դասագիրք, ապագայ անօրէններու և ուսուցիչներու իրենց արհեստի ու իրենց ենթակայ աշակերտաց իբր առողջապահական առաջնորդ և ուղղեցոյց»:

«Գայրոցական առողջապահութիւնը նոր զիտութիւն մ'է, և Տօքթ. Փաշայանն այս նոր զիտութիւնն հայացնելով կարեւոր պահաս մը կը լեցնէ ի մեզ, և ծառայութիւն մը կը մատուցանէ մեր հայ ուսանողաց»:

«Սոքն հողաբարձու, անօրէն և ուսուցիչ պարտին ունենալ այս գործէն մէկ մէկ օրինակ, և պարտին ըստ անոր հրահանգով վարել իրենց լընամոց յանձնելու վարժարաններն և աշակերտներն»:

(Յարգելի բնագրատը յետոյ զիտողութիւններ կընէ զիտական բաներու և այլ ոճերու մասին):

Տր. Ն. Տաղաւարեան

«Լուսաբեր», 1906, թ. 269-270-271:

«Հեղինակը՝ Առողջ միտք՝ յառողջ մարմնի պէտք էր դնել իբր բնաբան՝ սոյն խնամքով պատրաստած զործին ճակատը, Հրատարակութեան նպատակը այդ է»:

«Ով որ չուզեր ունենալ առողջ միտք, առողջ մարմին կոչուած անպաշտան հարստութիւնը. թո՛ղ չը գնէ կամ չկարդայ զայս. բայց կը ցանկանը որ զիտայ թէ նոր լոյս տեսած Բնորոշակ Գայրոցական Առողջապահութիւնը՝ հայ զրականութեան ուսումնական մատակարարների զարդերն մին է, և պատուաբեր Տօքթ. Փաշայաննի»:

«Չենք ուզեր ծանձրալի ըլլալ՝ դատելով սոյն 680 էջերէ բաղաւջած պատկառելի հատորին արտաքերնը, — տպագրութեան զեղեցիկութիւնը, նիւթերու դատաւորութիւնը և մանաւանդ բառազիտական մասերը՝ (որ lascia desiderare molto), այլ, կըսենք սոսկ՝ թէ հեղինակը ջանացած է թրքահայոց և Ռուսահայոց հասկանալի լեզու մը գործածել և յաջողած է»:

«Գիրք 15 ֆրանք է. Սո՛ղ, բայց Փաշայանն իւր ծախսով բացած կանսեթրս նոր տպարանին մէջ (յԱւէքսանդրիա)՝ միայն սոյն երկին համար 3600 ֆրանք ծախսած է»:

«Հեղինակը կը համարի թէ. — «Մեր պատրաստած այս դպրոցական առողջապահութիւնը իր տեսակին մէջ միակ կատարեալն է» — »

«Չի մեղանչեր եթէ կ'ուզէ հասկըցնել՝ հայոց մէջ Ն. Անուշուտ այսպէս ալ պէտք էր ըլլալ՝ քանի որ սոյն նիւթս շօշափող 14 է աւելի հայ հրատարակութիւններու և 34 Ֆրանսերէն հեղինակութեանց աղբիւրները զինանց ունեցած է և մեծապէս օգտուած»:

«Այս ալ ըսենք թէ սոյն համբերատար աշխատաւորութիւնը պէտք է առձեռն գործի մ'ըլլալ՝ ուսուցիչներու, աշակերտներու և ծնողներու համար. Գիտական և պատմական տեղեկութիւններով համեմատ ըլլալով՝ ակործելի է յիշաւի անոր ընթերցումը»:

(Յարգելի զբախօսը շատ շնորհալի կերպով առաջին երկու մասերու ծաղիկեղանջը կտայ ընթերցողներուն, որը շարունակելի մնացած է):

Տ. Ն. Տիրացուեան

«Բազմավեպ», 1906, թ. 12:

«Բարոյական պարտականութիւն եմ զգում, թէ այս գիրքը կազմող բժիշկ Փաշայաննի առաջ և թէ դպրոցի կեանքով՝ առ հասարակ հետաքրքիր անձերի առաջ, մի քանի տողով տեղեկութիւն տալ գրելի բովանդակութեան և նիւթերի արժանաւորութեան մասին»:

«Գիրքը ընդարձակ է, 653 էրես. հեղինակը չէ խնայել՝ ոչ իր մասնակը և ջանքերը և ոչ տպարանի մեծ մեծ ծախքերը որպէս զի իր գիրքը, լինելով ամենավերջինը մեր մէջ համանման բովանդակութեամբ, լինի առաջինը իր արժեքով: Եւ յիշաւի, հեղինակը իր ազբերիւրների շարքում ունեցել է մեր մէջ երբ և իցէ երեքսած գրականական նիւթերը և աչքի ընկնող եւրօպական՝ իրոյ առաջակային վերաբերեալ հեղինակութիւնները: Գրքի զինք վեց լուրքի է, բայց զժուար չէ կարծել, որ շատ չի անցնի, երբ նա կը դանայ հագուազիւս մի մասեան, որպիսին է այսօր Հայկազեան բառարանը, կամ Չամչեանի պատմութիւնը և այլ մեծածախք, բայց անհրաժեշտ առարկայից զիտական շտեմարանները»:

«Ես, թէ ե բժիշկ, որին փորք է շատ ծանօթ են զօկտօր Փաշայաննի արծարծած առարկաները, այնու ամենայնիւ մեծ բաւականութեամբ զլիէ զլուի կարգացի այդ զեղեցիկ գիրքը: Ուսուցիչ է այդ, թէ ուսանող, ծնող և վերջապէս ամեն մի անհատ, որի միտքը զեռ չէ քննել և որի սէրը չէ պահասել զէպի իր ազգի նոր և նորագոյն սեբունդը, որոնց հետ կապված է ազգի մերձակայ ապագայի կազմը և ուղղութիւնը, անհրաժեշտօրէն պէտք է ձեռք բերի այս գիրքը և կարդայ: Մանաւանդ որ գիրքը իր ճօն բովանդակութեամբ, զիտական բարձր արժանաւորութեամբ և անհրաժեշտ զիտելիքներով միշտ իր թարմութիւնը պահպանելու ընդունակ է այսօր նոյն չափով, որքան և տասնեակ տարիներ յետոյ»:

«Գիրքը մանրամասնօրէն և պարզ ոճով օժտված և նկարներով, ցոյց

1. Ոչ միայն Հայոց մէջ, այլ և օտարաց մէջ, գրքին ծրագրին և բովանդակութեան տեսակէտով, ինչպէս կը վկայէ Ֆրանսական L'hygiène Scolaire եռամեսայ թերթի խմբագրութիւնը:

է տալիս, թէ ինչպէս պէտք է կառուցանել դպրոցի շէնքը, ինչ և ինչ ուսուցման մեթոդներն և ծրագրերն հետեւել, առողջապահական տեսակետից դասակարգել, ինչ է երեխաների մարմնի յորձանոթները, քննութիւններ, թւանշան և այլն և այլն ամեն տեսակ ոչ միայն մարմինը, այլ և հոգին կազդուող ակնարկութիւններ և խրատներ: Մի առ մի նկարագրված են երեխաների ֆիզիզական և հոգեկան զարտուղութիւնները, զպրոցական ամեն տեսակ հիւանդութիւնները, մասնաւոր վարակիչ. այդ բոլորի հետ ցոյց են տրուած և նախնական դարձմանները, չէ մտացված և ուսուցիչներին առողջապահութիւնը»:

«Ընթերցող, եթէ դու ունես մի քանի զուակի, բայց մանաւանդ եթէ միայն մի զուակի, այս գրքիցը այլ ևս ձեռք չես քաշել. քնի, թէ զարթնի երեխադ, — իսկոյն կը վազես բանալու այս գիրքը. տրամի, հիւանդանայ զուակիդ, լսողայ միայնակ, թէ ընկերներն հետ, եղունգը կրծի, կամ ծիւի և այլն և այլն, դու իսկոյն պէտք է վերցնես այս գիրքը, թէ տեսնես ինչ է ասում Փաշայեանը... Եւ չես սխալվի, և իմացիր, որ լաւ է ասում. այդ է իմ յանձնարարականը. և մեղքն ու վարձքը՝ իմ ընթերցին»:

Բժշկապետ Բ. Նալասարդեան

«Մշակ», 1906, թ. 280:

«Տես Գոհ. Կ. Փաշայեանի «Ընդարձակ Գպրոցական Առողջապահութիւնը» վերնագրով հետաքրքրաշարժ և մեծահատոր աշխատութիւնը, որ յանձնարարուած ենք հայ ուսուցիչներին և դաստիարակներին յատուկ ուշադրութիւններ<sup>1</sup>»:

Յ. Թովիչեան

«Լոյս» գրպակի  
Օրացոյց 1907

«Իբրև գրագէտ բժիշկ արդէն հանրածանօթ Գր. Կ. Փաշայեանի կողմանէ գրուած այս գիրքն հմաւելցե, օգտակար և կարևոր աշխատասիրութիւն մըն է: Այս 8<sup>0</sup> 680 էջէ բաղկացեալ գործն եօթը մասի բաժնուած է, որոնց մէջ Գպրոցական միջավայրի, Առուստական միջավայրի, Անհատական առողջապահիկ պայմաններու, Գպրոցական հիւանդութիւններու, վարակիչ հիւանդութիւններու, Գպրոցական արկածներու և անհանգստութեանց նախնական դարձմաններու, Առուցիչներու առողջապահութեանը վրայ ընդարձակ և յագեցուցիչ կերպով կը խօսի: Լեզուն պարզ և զերբահասկնալի է, բայց ի ինչ ինչ զիտական բառերէ, որոնց զիմաց աւելի ճաշակաւոր բառեր կարելի էր թիբես գտնել կամ հնարել. ապագրութիւնն և թուղթը մաքուր և առողջապահիկ են: Բազմաթիւ (120 թուով) պատկերներ ըսուածները կը լուսարանեն, թէև

1. Յարգելի Գրողը ինկացի մտածումը ունեցած է մեր գրքէն արտատպելու «Նախարանը» իր Օրացոյցին մէջ, աւելցնելով մեր արտագրած այս սողերը:

այս պատկերաց ապագրութեան մաքրութիւնն շատ փափաքելի բան կը թողու: Գրքին վերջը կցուած նիշերի այքեակակն ցանկը աւելի զիւրամաղելի և զործնական բրած է անոր զործածութիւնն: Այսպիսի օգտակար և կարևոր գործի մը ծանօթանալուն և տարածուելուն ջերմ մաղխ կը փափաքինք, մասնաւոր որ ընդարձակութեան համեմատութեանը դրուած զինչ (15 Ֆրանկ) շատ չափաւոր է: Յարգելի հեղինակն արժանի է բաշխելութեան, որպէս զի ասոր նման ուրիշ օգտակար երկերով ալ մեր ի մասնաւորի դաստիարակութեան ճիւղին մէջ աղքատին մատնագրութիւնն ճոխացնելու աշխատի»:

«Հանդես Ամսօրեայ», 1907, թ. 5-6:

«Գիրքը շօշափում է շատ ու կարևոր հարցեր, որոնք — միասին վերցրած — գպրոցական առողջապահութեան գործի բազմազան կողմերն են լուսարարում, այն էլ՝ անքան մանրակրկիտ ու ինամբով, որպիսին — կարելի է ասել — մեզնում տեսնուած չէ»:

«Իր սոււարութեամբ խիստ աչքի ընկնող այս գիրքը կազմելու, հեղինակն օգտուել է 48 աղբիւրներից, որոնցից 14-ը հայերէն են (Արժուունի, Բուդաղեան, Բարայեան և Իւթիճեան), մնացածը՝ Ֆրանսերէն»:

«Բուն գիրքը, որ պարունակում է իր մէջ 631 էրես, բաժանուած է 7 մասի: Գրանք խօսում են գպրոցական և ուսումնական միջավայրի, անհատական առողջապահիկ պայմանների, գպրոցական ու վարակիչ հիւանդութիւնների, գպրոցական արկածների և անհանգստութեանց նախնական դարձմանների, այլ և ուսուցիչների առողջապահութեան մասին: Մնացածը բնած ունին առաջարանը, կոչը, նախարանն ու նիւթերի ընդհանուր ցանկը»:

«Լեզուն ընդհանրապէս կանոնաւոր է ու մաքուր, եթէ չհաշուենք էական բայի երբեմնակի սխալ զործածութիւնը...»:

«Գպրոցական հարցը՝ ընդհանրապէս այնքան առաջնակարգ տեղ է բնում քաջաբարկութեան գործում, որ նրա լուսարարութիւնն ու կանոնաւոր հիմքերի վրայ դնելը՝ կուլտուրապէս ապրելու յաւակնութիւն ունեցող մեզ պէս մի ցեղի համար՝ իսկապէս, ամենօրեայ պահանջ պէտք է նկատուի: Իսկ մասնաւորապէս գպրոցական առողջապահութեան հարցը, — որ մեզնում, մասնաւոր գաւառներում, երբեք նոյն իսկ շօշափուած էլ չէ — խօսք չկայ, որ արդէն կենսական հարց է»:

«Աւ շատ պարզ է: Վերցնենք, օրինակ, նոյն իսկ ամենափոքրիկ մի ընտանիք, բաղկացած 2-3 հոգուց: Եթէ դա բնակում է այնպիսի բնանկարանում, որ, առողջապահական տեսակետից, ոչինչ յարմարութիւն չունի, բոտ ինքեան հասկանալի է, որ մարդիկ այնտեղ դատապարտուած են շարունակ ֆիզիզապէս ու բարոյապէս աուժելու: Ինչ կլինի, ուրեմն, գպրոցի հալը, որտեղ վիստում են հարիւրաւոր մասնակիներ, այն էլ՝ համախմբուած այլ և այլ պայմանների մէջ ապրող ընտանիքներին: Չմոտանանք, որ յաճախ, ոչ միայն մտաւոր, այլ և նիւթական լոյսի պահանջը՝ մեր գպրոցներից շատերում, անտես է արւած: Մինչդեռ լուսաւորած երկիրներից շատերում, առողջապահութիւնն, իբրև աւելցելի առարկայ, կարևոր տեղ է բնում գպրոցներում»:

«Եւ, պատիւ հեղինակին, թիբեթելով նրա գրածը, չէք կարող չեմ հիանալ, թէ նա ինչպիսի համբերութեամբ է կազմել իր այդ ընդար-

ձակ աշխատութիւնը, ինչ ջանքեր է գործ գրել՝ մեր զարոցատողա-  
կան հարցը պարզելու և բարելաւելու վրայ, կորզելով, ինչ որ կարելի  
է կորզել Եւրոպայից և Ամերիկայից, այն էլ գիտութեան վերջին խոս-  
քի համաձայն»։

«Գրքի միայն առջին մասը՝ «Կարոցական միջավայր» բնութ մ է  
100 երես, որոնց մէջ խօսուում է զարոցի շէնքի, արտաբնոցների, դա-  
սարանների, նստարան – գրասենյակների, գրքի ու ընթերցանութեան,  
տեարի և գրութեան, օդի, սենեակներ տաքացնելու և վառարանների ու  
լուսամուտների մասին, այն էլ՝ ամենայն մանրամասնութեամբ»։

«Ուսումնական միջավայր խորագրով երկրորդ մասում, խօսելով մտքի  
յոզնածութեան մասին, հեղինակն ասում է՝ « – Ամալվերջի հրապարա-  
կային քննադիւմներն առողջապահական և մանկավարժական տեսա-  
կէաներով, մասնակար են։ Այս մասին համակարծիք են Եւրոպայի և  
Ամերիկայի բազմաթիւ հոգեբաններ, հմուտ բժիշկներ և բարեխիղճ ման-  
կավարժներ։ Քննութիւնները պարզապէս ձեականութիւններ են, ժո-  
ղովրդի և ծնողների աչքը թող փչելու և շլացնելու միջոցներ։ Բազ-  
մաթիւ ոտու և ամբրիկացի բժիշկներ զանազան փորձերով ցոյց են  
տուել, որ – ցննութեան պատճառով – երեխաներն իրենց կշռի մինչև  
անգամ մէկ չորրորդ մասը կորցնում են։ Այս պատճառով է, որ փայ-  
լուն ցննութիւններ անցնող և դիպլոմներով պարծեցող շատ երիտա-  
սարդներ, կեանքի սապարէզներում, շատ անընդունակութիւն են ցոյց  
տալիս և չեն առջադիմում...։ Այդ գրութիւնը մեր զարոցներից իս-  
պառ պէտք է վերացնենք (եր. 177, 182 և 184)»։

« Ընդարձակ Առողջապահութիւնը » Մարմնական պատիժը թէ վը-  
տանգաւոր ու թէ անօգուտ է համարում, որովհետեւ առեւտրութիւն է ա-  
ռել բերում, ամբ բխնում է ու վատաբերութիւն կորչում է Պատմի  
հարցում ուսուցչի անձնաւորութիւնը զլիւսաւոր դերն է կատարում։ Պատ-  
մի արժանի դէպքերի զոյութիւնը նա պէտք է փնտռի իր դասատու-  
թեան և անձնական թերութիւնների մէջ։ Եթէ անհրաժեշտ են պատիժ-  
ներ, նրանք պէտք է լինեն զլիւսարապէս բարոյական. աշակերտը  
պէտք է պատժի բարոյապէս»։

« Կարոցական Առողջապահութիւնը » ցանկալի է համարում, որ  
ամուսնացած տիկիներ կրթական ասպարէզից իսպառ հեռանան, որով-  
հետեւ հազարալու են այնպիսի ամուսնացած ուսուցչուհիներ, որոնց  
ֆիզիկական վիճակները միշտ փոյլ են աւելա բարեխիղճօրէն պարապ-  
ւելու... Բազմաթիւ են այնպիսիներ, որոնք – յոյութեան և ծննդութե-  
րութեան պատճառով – բաց են թողնում բազմաթիւ դասեր, և կամ  
դաշտանի և իրենց երեխաների հիւանդութեանց ժամանակ, ֆիզիկական  
և հոգեկան այնպիսի զրգուած և վատ տրամադրութեան մէջ են գտնու-  
ում, որ չեն կարող բարեխիղճօրէն պարապւել։ Այս մասին համակար-  
ծիք են լուսաւորած երկրները բոլոր խորհող մտքերը, և արդէն մի  
քանի կառավարութիւններ ամուսնացած կանանց բացարձակապէս ար-  
զելած են ուսուցչական պաշտօն վարել (եր. 20)»։ Այն ինչ մեզ գտնում,  
յաճախ է պատահում, որ հոգաբարձութիւնները, լրագրական յայտա-  
բարութիւններով, ուղղակի ցանկալի են համարում, որ հրաւիրող ու-  
սուցչին ու ուսուցչուհին ամուսիններ լինին, թէք և, որոշ տեսակետով,  
սա է իր յարմարութիւնն ունի, բայց հանրային զործը չի կարելի  
զոհել մասնական յարմարութեան։ Ուրիշ է ի հարկէ, եթէ ամուսին-  
ներն անզաւակ են»։

« «Ուսուցչինը, օրաւ մէջ, միմեանց վրայ երկար ժամեր չեն կա-  
րող դասուանել, առ առեւելն երեք ժամ դաս ունենալու են, այսինքն  
շաբաթական 18 ժամ. սրանցից աւելին ընկճելու է ուսուցչին և ու-  
ժասպասելու (եր, 623)»... ուրախ և զարթ բնաւորութիւնը, համբե-  
րութիւնը, նկարագրի կանոնաւորութիւնը, կշտամբանքների և սաս-  
տուների մէջ անխոստութիւնը... և քաղցրութիւնն ուսուցչիների առող-  
ջութեան հիմնական պայմաններն են (626)»։ «Ուր վրայ կանգնած  
դասախօսութիւնն աւելի կենդանի է լինում և աւելի հրապուրէչ. քան  
նստածը»։

« Եւ որովհետեւ թոքախտաւոր ուսուցչիներից յաճախ ու հեշտ վա-  
րակում են աշակերտները, այս պատճառով «Ուսուցչիների առողջա-  
պահութիւնը» կարեւոր է համարում, որ զարոցական վարչութիւնները  
բոլոր ուսուցչը – ուսուցչուհիներից պահանջեն՝ թոքախտաւոր չլինելու  
բժշկական վիճական»։

«Գրքի այս վերջին մասը՝ «Ուսուցչիների առողջապահութիւնը», որ  
հեղինակը միայն իբրև փորձ է առաջարկում, քանի որ «առաջնորդող  
ոչինչ աղբիւր» չէ ունեցել, լաւ կլինէր, եթէ – փոխանակ 15 մանր  
զուլետների բաժանելու – նիւթը խտացնէր ու մի ամփոփ զրուածք տար,  
իրև մի դասախօսաւոր ( Լէքցիա ) նրանց առողջապահութեան մա-  
սին »։

«Գալով գրքի Ե. – դ մասին՝ «Բժշկական հոկոյութիւնը», դա կա-  
րում է հարստացման և լրացման»։

« Իր աշխատութեան Ա. ու Բ. մասերին հեղինակը դասի ձե է տուել,  
ցանկանալով, որ նրանք ուսուցչիներին իբրև ձեռնարկ ծառայեն։ Ու-  
այդ նպատակով, այդ երկու մասերը բաժանել է 24 դասի, որոնք բնու-  
նում են համաթեւ գրքի կէտք։ Խօսք չկայ, որ դրանք պէտք է աւանդ-  
ւին մեր միայն թեմական զարոցները բարձր դասարանների աշակեր-  
տութեանը, իբրև ասպազայ ուսուցչիների »։

«Վերջացնելով սակէքս, Կր. Փետալեանի կազմած այս զիրքը, –  
որից կարող է օգուտել ամեն բնութիւնը – յանձնարարում եմ մեր բոլոր  
ուսուցչիներին, որոնք, եթէ, թանկութեան պատճառով, չկարողանան  
ձեռք բերել, կարող են աշխատել, որ զոնչ զարոցները զենն. այս խիստ  
շահեկան աշխատութիւնը, որ իր հետ, առողջութիւն ու լոյս է մտցնե-  
լու մեր զարոցները»։

Կլիոք

«Նոր – Կարոց», 1908. Ա. Տարի, Թ. 4:

A Alexandrie d'Egypte, un medecin philanthrope, patrio-  
te, ardent avocat de toutes les belles causes et defenseur de  
tous les persécutés, M. le Dr. Pashayan – Khan s'est imposé  
exactement le même programme<sup>1</sup> que l'ardent secrétaire gé-  
néral de notre troisième congrès international. Il a publié

1. Պէտք է յայտնել, որ իմ գրքիս ծրագիրը կազմած էի 1905ին, մինչ-  
դեռ նոյնպիսի ( թէք սչ կատարելաւ՝ բաղդասամբ իմինիս ) ծրագրով  
իւր զիրքը հրատարակած է Dufestel այս տարի, 1909ին.

aussi un traité d'hygiène scolaire, et a même eu l'aimable attention d'en envoyer deux exemplaires à notre bibliothèque. Bel exemple que nous recommanderons en passant à tous auteurs d'ouvrages traitant l'ensemble ou tel ou tel détail de la science! Il faut confesser que depuis leur arrivée sur nos rayons ces livres ont été peu dérangés et même ne l'ont pas été du tout. Ils sont écrits en arménien et cette langue est peu répandue pour cette raison sans doute que, les Arméniens étant nés polyglottes, personne n'a idée d'apprendre leur idiome, puisqu'ils parlent tous le français, - ou presque tous.

«L'Hygiène Scolaire»  
1909 juillet N° 27

L. B. (ougier)

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Վարչաւ, 1906 Գոնվարի 14

«..... Կարգաւով «Գարոցական Առողջապահութիւն» մակարութեամբ Ձեր աշխատասիրութեան մի մասը, արդարեւ ի սրտէ ուրախացայ, որ վերջապէս մեր խեղճ հայ աշխարհի մէջն ալ եղաւ մի բարի, անձնուէր և լուսատու առաջնորդ, որը կարողացաւ խնայել Ազգին ուղղամիտ վեհ դաստիարակութեան համբայ մը սյոյց տալ: Այս ազնիւ, հարգատապէս առաջնորդը դուք էք, թանկազին բարեկամ-հշմարխան ասած, որ ես հաւատացած եմ և միանգամայն անշուշտ եմ, որ Ձեր վեհ անունը մի օր պիտի փառաւորուի և պիտի անմահ մնայ սակեզօծ ատենով հայկական աշխարհի Գարոցական Սուրբ տաճար-նեբրի մէջ, այդ Ձեր բարձր յառաջադիմական ձեռնարկով: .....»:

«Եմ և մնամ յաւէտ յարգող Ձեզ»

Դօկ. Արտաւազդ  
Տէր Յակոբեանց

Խմբագրոչքիւն

28  
թիֆլիս 19 — 06  
I

«Առողջապահիկ րեյր» ի

«..... Ձեր գիրքը ստանում եմ և շատ հաւանում, կեցցէ՛ք»:  
Բժպ. Վահան Արծրունի

Իմփածիւն, Ապրիլ 13. 1906

«..... Գարոցական Առողջապահութեան վերջի տետրն ստացայ երէկ ու կը փութամ իմ յատուկ շնորհակալութիւնն յայտնել Ձերդ Մեծութեան: Միակ գործն է մեր դարոցական գրքերի մէջ և յոյժ կաւրուոր: Վեհափառ Հայրիկն ևս շատ հաւանեց՝ երբ ցոյց տուի: Առա-

ւել յաջողութիւն կը ցանկամ Ձեր ձեռնարկութեանց գրական ասպարէզում, յորում գնահատելի ծառայութիւններ կ'ընէք Ազգին Ձեր գրուած-նեբրով»:

Խորէն Խրիմեան

Ս. Ղազար, Վեհեակի, 15 Ապրիլ 1906

«Ծնորճ ընէր Ձեր «Գարոցական առողջապահութիւն» պատուական գործն օրինակ մը զրկել մեր գրատան բաժանորդագրութեան հաշուով և շնորճ ընէր նաև 15 երրորդ թերթը զրկել զոր չէ ստացած ժամանակին «Բազմավէպի» խմբագրութիւնը: Գործը լիննալէն վերջ - անշուշտ վերջին թերթն ալ հիմայ տպուած է - մեր հանդէսին մէջ գրախօսական պիտի ընենք այս հրատարակութիւնը գնահատելի գործ մը նկատելով 1905ի մամուլին»:

Տեսչութիւն մատենադարանի

Երուսաղէմ, 12/25 Յունիս 1906

«..... Թոյլ տուէք ինձ և կը ինդրեմ թող Ձեր համեստութիւն չ'վիրաւորուի յայտնելու իմ հիացումս Ձեր այդ այնքան կարեօր և գնահատելի երկասիրութեան համար, որ կու գայ մեծ պէտք մը ցուցանելու դարոցական շրջանակի մէջ. հրահանգներ տալով ուսուցիչներու և ուսանողներու հոգ տանել և զգոյշ լինել անձին առողջութեան, որ այնքան սերտ կերպով կապուած է իմացական կարողութեան հետ, հասարակ դարձած այն առածին համեմատ «առողջ միտք, յառողջ մարմին»:

«Ձեր հոյակապ առողջարանութիւնը՝ իմաստուն առաջնորդ մը պիտի լինի՝ մանաւանդ մեր ասիական խաւար շրջանակի մէջ, որ տակաւին կը թագաւորէ դատապարտելի անհոգութիւն մը և անյարթելի արհուրթիւն մը»:

«Ես վստահ եմ թէ՛ ինչպէս հոս մեր ուսանողները, ուրիշ շատ տեղեր ալ, ուր որ պիտի մանէ Ձեր նոր առողջարանութիւնը, ուսանողը թերթելով զայն՝ գոհունակութեան և երախտագիտութեան զգացումներով պիտի վերաբերուին դէպի Ձեզ, որ Ֆիզիքապէս և բարոյապէս դաստիարակ կը հանդիսանար անոնց»:

«Իմ այս գնահատումն չէ մասնագէտ բժշկի գնահատումը, այլ իբրև ուսուցիչ ժողովրդեան և իբրև կրթական մի համեստ պաշտօնեայ կը յայտնեմ իմ անկեղծ զգացումներս, շնորհաւորելով զՁեզ Ձեր այդ վեբրին աստիճանի կարեօր գործի համար, որ գիտութեան լոյսը աշտանակի վրայ կը դնէ, որով կը լուսաւորուին ուսանողը և ուսուցիչը հասարակապէս, ինչպէս նաև ուսանողներու ծնողները, որը մեծ պարտականութիւններ ունին, իրենց զաւակաց Ֆիզիքական, մտաւորական և բարոյական դաստիարակութեան համար»:

Երևսէս Վ. Խարախանեան

Ս. Երուսաղէմ 22 Յունիս 1906

«..... Քանի մը գնահատական տողերու համար շնորհակալութիւն չ'արժէք. վստի գի շատ պարտականութիւններ ունինք Ձեզ նման գե-

տական աշխատանքներու, մանաւանդ Ձեր ազնուութեան մասնաւորապէս որ այն հոկոյ աշխատութեամբ մեր երկեսու զաւակաց մտաւորական և բարոյական զարգացման զուգընթաց ֆիզիզականին ամբողջինն ու սովորութիւնն ալ կ'ապաստովէք և ազդին ֆիզիզականն զորացնել ու կատարելագործել կ'առաջնորդէք այնքան ձեռնաշատութեամբ և այնքան զիտական պայմաններով: Սակայն կը պակսին ինձ այն միջոցներ, որովք պարտէի կատարել առ Ձեզ պարտականութիւնս, ոյր համար խորին համոզմամբ ուղղեցի Ձեզ այն բանի մը տողերը, որոցմէ եթէ խոն ինչ իսկ օգտուիք շատ ուրախ և զո՛ն պիտի մնամ յաւէտ . . . . .»:

Մատթէոս Եպիսկոպ. Իզմիրլեան

Ելեւս, 27 Յունիսի 1906 թ.

«Ստացայ Ձեր ուղղակի հրաշարի աշխատութիւնը, մի անգնահատելի գործ: Ինձ թւում էր և ցուում էի առաջին հայեացքից, որ այդպիսի աշխատութեան թուղթը շատ վատ է ընտրեած, բայց երբ կարդացի Ձեր պատճառարանութիւնը, միանգամայն համոզեցի, որ դուք իրաւացի և յաջողակ կերպով էք ընտրել: Ինձ թւում է, որ այժմ կովկասում շատ կը տարածւի, բանի որ անթիւ դպրոցներ են բացուում, շենց աւմեն մէկ դպրոց եթէ մի օրինակ զնի<sup>1</sup>, արդէն էլի մեծ քանակութեամբ կը սպաւտի: Վերջապէս լուրջ ձեռնարկ է և ուղղեցոյց ուսուցիչ - ուսնիւնքի և ծնողների համար: . . . . .»:

Երուսմոյ Ֆրանկեան

(Փիլիսոփայութեան ուսանող Բերլինի համալսարանիմ)

380 Atlantic Ave. Boston

27 Օգոստոս 1906

«Յարգելի Հայրենակից»

«Դնորհակալութեամբ ստացած ենք ձեր «Կարոցական Առողջապահութիւն» գիրքը: Լոյսը Տաճկաստան մուտ գտնելուն պատճառաւ, կը ցուելնք որ Ձեր անունը անոր մէջ յիշելու կը վարանինք: (Երանելի հին ուղիմի օրեր... Դր. Կ. Փ.) Երբ Պոլսական որ և է թերթի մէջ ձեր գրելն վրայ ծանուցում կամ քննադատական տեսնենք, շատ ուրախութեամբ մենք ալ պիտի գրենք, որովհետեւ աշխատաւից և արժէքատր գիրք մը կը համարենք զայն»:

Խմբագրութիւն Լոյսի

1. Եթէ... գնէք, այո՛: Այս երեկերով կարող էինք նոյն իսկ գրքի գինը մի բուրլի նշանակել, ասելով տասնեակ հազար օրինակներ: . . . . .»:

Պատրիարքարան Հայոց  
Ուսումնական Խորհուրդ  
Ազգ. կեդրոնական վարչութեան

Կոստանդնուպոլիս, 8 մայիս 1909

Թիւ 71

Ազնուաշուք  
Տօքթ. փաշայեան խան  
և և և Բօրք - Կէզ

«Ձեր Ազնուութեան հեղինակած «Կարոցական Առողջապահութիւն» անուն գիրքը, զոր ներկայացուցած էիք ի վաւերացումն, խորհրդոյս կողմէ ըննութեան անուելով, յարմար գատուեցաւ անոր զործածութիւնը մեր Ազգ. վարժարանաց մէջ պաշտօնավարող ուսուցչաց համար, և այս մտօք ալ հարկ եղած յանձնարարութիւնը տեղի ունեցաւ»:

«Ձայս հաղորդելով Ձեզ ի զիտութիւն»,  
Մնամք յարգամօք  
ի Գիմաց Ուսումն. Խորհրդոյ  
Ատենաղպիր Ատենապետ  
Գր. Իժատմեան Խ. Սիմօնեան  
Կնիւթ

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԱՅԼ ԳՈՐԾԵՐԸ

---

---

1. — Մարիի՛ս թէ ֆայկանուշ (վէս), 1889, զին 5 ղրշ.
  2. — Փուճ գիտակամ (քուճ, երագ, և այլն) 1891, զին 5 ղրշ.
  3. — Աղջկան մը Յիշատակարանը (վէս) 1895, զին 5 ղրշ.
  4. — Մարդկութեան անմեամեծ թշմամիմ (հակալիւկական) 1901, Զրի:
  5. — Երեխաների Մնումըը (ծննդից մինչև 15 տարեկան հասակը) 1903, զին 5 ղրշ.
  6. — Ո՛ւրտեղ է Ազնութիւնը (Աղէքսանդրիոյ Աստուծոտարական պայքարը և Վերականգնեալը) 1905, զին 2 ղրշ.
  7. — Միշէլ և Քրլիզեն - Նուսանկարը (Վիպակներ) 1906, զին 1 ղրշ.
  8. — Ճակատագիր (վիպակ) 1906, զին 1 ղրշ.
  9. — Վարժապետիմ Պրատոնական սէրը (վիպակ) 1906, զին 1 ղրշ.
  10. — Վառօ (վիպակ) 1906, զին 1 ղրշ.
  11. — Ընդարձակ Դպրոցական Անողջապանութիւն, 1906, զին 4 բարեւ, 30 ղրշ.
- 
-



Արժէք. — 40 կոպ. — 5 դան. — 1 Փր.



18849

2013

